


Հայկ Ասատրյան

1915-info

# խոռվ

Քնախտավորների համար  
խոռվարարներ ենք մենք,  
խոռվում ենք անադատի  
մեռելային երջանկությունը:



# ՀԱՅԿ ԱՄԱՏՐՅԱՆ

## ԽՈՒՈՎՔ

(Հողվածների քաղվածք-ընտրանի)

թվաշեջրե է 1915. ընթաց հասցի



Երևան  
2019

ՀՏԴ 070  
ԳՄԴ 76.01  
Ա 732

Գիրքը պատրաստեցին տպագրության՝  
Վրույր Արծրունին  
Անահիտ Հարությունյանը

Ասատրյան Հայկ  
Ա 732 Խոովք/Հ. Ասատրյան.- Եր.: Լուսակն, 2019.- ... էջ:

Սույն հրատարակությունն իրենից ներկայացնում է Հայկ Ասատրյանի հոդվածների հավաքածու (2004 թ. Երևանում հրատարակված «Հայկ Ասատրյան – Հատընտիր» գրքից) և կենսագրական ակնարկներ (2008թ. Երևանում հրատարակված «Հայկ Ասատրյան – Տարոնականության Ռահվիրան» գրքից):

Գրքին տրվել է «Խոովք» վերտառությունը՝ Հայկ Ասատրյանի հրատարակած պարբերականի անունով:

Նախաձեռնողների կողմից վերահրատարակվել են նաև Գարեգին Նժդեհի «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Հիշիր պատերազմը», «Էջեր իմ օրագրեն, Բաց նամակներ հայ մտավորականությանը» աշխատությունները, ինչպես նաև հրատարակվել է «Գարեգին Նժդեհ – Բանտային կյանք, նամակներ, գրառումներ» գիրքը: Բոլոր աշխատությունները լույս են տեսել արդի ուղղագրությամբ օրվա երիտասարդության համար դյուրընթերցելի դարձնելու նպատակով:

Երկրորդ հրատարակություն (առաջին անգամ տպագրվել է 2015 թ.):

ՀՏԴ 070  
ԳՄԴ 76.01

ISBN 978-9939-882-22-2

ISBN 978-9939-882-22-2



9 789939 882222

© Լուսակն, 2019

## Մուտքի խոսք

«Իբրև գիտության և խղճմտանքի մարդ՝  
(դոկտոր Հայկ Ասատրյանը)  
իր խոսքը ծառայեցրել է ճշմարտությանը,  
իսկ փրկարար ճշմարտությունը  
իր անհրավժած ժողովրդին»:

**ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ**

Նժդեհի գաղափարակից, մտերիմ ընկեր, փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանը մինչ օրս շարունակում է մնալ չճանաչված և չգնահատված: Այս գրքով հույս ունենք պատմության փոշու տակից դուրս հանել մեծանուն իմաստասերին և ողջ կյանքը Հայրենիքին նվիրած Հային:

Գիրքն ընթերցելիս, մենք հայտնվում ենք Հայկ Ասատրյանի աշխարհում, որտեղ նա ն' ստիպում է մեզ խոստովանել, վեր հանել ու անջատել մեր հոգուց դրա մաս դարձած թերիները, և՛ այրել, մոխրացնել դրանք հավիտենական ոգու բոցերի մեջ:

# Հայկ Ասատրյանի նամակն՝ ուղղված իր մորը<sup>1</sup>

«...Ես քո գավակն եմ և պարտավոր եմ  
մնալ հավատարիմ քո ներշնչած ոգուն»

Իմ շատ սիրելի մայր.

Հոգի՛ս, վատություն կլինի իմ կողմից, եթե փորձեմ քեզ վշտացնել, նաև՝ եթե փորձեմ ինձ պաշտպանել: Թերություններ ունեմ ես և շատ, և դրանցից մեկն էլ, թերևս, քո հանդեպ իմ պարտականությունների մեջ թերանալն է:

Կարծում ես, որ ինքս այդ չե՞մ զգում. զգում եմ և շատ խոր կերպով և սակայն, մի՞ թե ես մեղավոր եմ: Ես էլ, դու էլ և մեզ հետ շատ ու շատ մարդիկ, զոհերն ենք նույն ճակատագրի. Այնքա՛ն դեպքեր տեղի ունեցան մեր աշխարհում. մի ամբողջական ժողովուրդ կորավ: Այդ բոլորից հետո մի թե աններելի քայլ կլինե՞ր, եթե քո մեկ տղան խոտորե՞ր քո ցանկացած ուղուց: Չլինի՞ մտածում ես, թե ես մի քարի կտոր եմ, մի անսիրտ, անհոգի մարդակերպ կենդանի, որ չի ուզում իր հարազատներին օգտակար լինել, բաժանել նրանց հետ կյանքի քաղցր ու դառն վայրկյանները: Կարծում ես, որ սիրո՞վ եմ մնում Եվրոպայում, որ չե՞մ կարոտում և՛ քեզ, և՛ Տաճատին, և՛

---

<sup>1</sup> Հայկ Ասատրյանի՝ տարագրությունից մորը գրած այս նամակը տրամադրել է մեծանուն իմաստասերի եղբոր աղջիկը՝ երևանաբնակ Կլարա Ասատրյանը: Այն տպագրվում է որոշ կրճատումներով (Հայկ Ասատրյան – Հատընտիր, 2004թ.):

Արաքսին<sup>2</sup> և շատ ու շատ սիրելի մարդկանց: Դու, Տա-  
ճատը և Արաքսը մեղադրում եք ինձ, որ ես շատ եմ  
կառչել անցյալի հիշատակներին. ճիշտ եք ասում: Բայց  
ինչո՞ւ չեք մտածում, որ այդ անցյալի ամենասիրելի հի-  
շատակները հենց դուք եք: Լա՛վ կլիներ, եթե մոռանայի  
այդ հիշատակները, այսինքն՝ Ձեզ, իհարկե՛ ոչ: Հավա-  
տա՛, մայրս, որ ես լավ եմ անում, որ անցյալի ամեն  
դեմք ու հիշատակ չեմ մոռանում: Եթե կարողանայի մո-  
ռանալ նրանց, պիտի մոռանայի նաև քեզ: Բայց դու չես  
ուզում, որ ես մոռանամ քեզ, իրավունք ունես, դու  
պաշտպանում ես քո մայրական շահերը և արդար ես:  
Բայց դու մոռանում ես մի բան, որ ես էլ իրավունք ունեմ  
չմոռանալ այն ամենը, ինչ ինձ և քեզ համար ընդհանրա-  
կան մայր է եղել:

Երբ ես քեզ պատկերում եմ, պատկերում եմ միշտ մեր  
գյուղում, իսկ մեր գյուղը մի աղքատիկ, բայց սիրելի ամ-  
բողջություն էր: Միայն այդ ամբողջության մեջ դու կա-  
տարյալ էիր, հարազատ ու բնական:

Մի՞ թե դու վատ չես զգում քեզ, որ Մանիշակին, Էթա-  
րին, Նազոյին ահա 10-12 տարի է, ինչ չես տեսնում և  
չպիտի տեսնես մինչև հավիտյան: Դրանցից յուրա-  
քանչյուրը, որ մեռել է, իր հետ մեռցրել է մի բան մեր  
գյուղից, և այսօր այլևս չկա այն սրբազան ամբողջությու-  
նը. մենք նրա փշրանքները, մնացորդներն ենք, և մեր  
գոյությունը կատարյալ չէ: Մենք դուրս եկանք այդ գյու-  
ղից, նյութապես գրեթե ոչինչ չկորցրինք (ի՞նչ ունեինք,  
որ կորցնեինք), օտարության մեջ անհամեմատորեն քիչ

---

<sup>2</sup> Ասատրյանի եղբայրը և քույրը

անձնական վշտեր, սիրելիների կորուստներ ունեցանք, քան մեր բոլոր գյուղացիները, քայց մի թե չես զգում, որ աշխարհի ամբողջական հարստությունն էլ եթե հիմա քեզ տան, չի ծագի էն հին արևը քո հոգում, ուրախության էն անուշ արևը, որ մի ժամանակ ժպտում էր մեր գյուղում՝ քո, իմ, բոլորիս գլխին: Եվ գիտե՞ս ինչու, որովհետև այդ գյուղում մենք թողինք մեր առաքինությունները, մեր էության լավագույն տարրերը, ուրախության և ազնիվ թախիծի զգացումը, կարճ՝ մեր կյանքի ամբողջական խորհուրդը:

Որքա՛ն ես փոխվել, մի թե դու իմ այն մայրն ես, որ ուշ երեկոներին մեղմաձայն և հուզիչ մեղմությամբ երգում էիր «Տավորեցիք, արեք երթանք»-ը. նվիրական զգացումների մի կենդանի, հսկայական հնոց էր քո հոգին այդ հին, այդ անուշ օրերին. դու ջերմացնում էիր իմ սիրտը, և գիտե՞ս, այդ օրերին ես ինչպես էի սիրում քեզ: Այո, քո այդ սրտառուչ երգերով դու հանդիսանում էիր նաև իմ հոգևոր կյանքի, իմ գաղափարների մայրը: Հասկանո՞ւմ ես ինձ, մա՛յրս: Մի թե դու չես սիրում քո հեռավոր անցյալի նվիրական հուշերը: Ես որքա՛ն էի սիրում իմ աղոթող մորը, չնայած որ հաճախ ծիծաղում էի և խանգարում քո աղոթքը, գիտեմ՝ հիմա նա այլևս չի աղոթի այնպես ջերմեռանդորեն, գուցե նաև մոռացել է «ընկալ քաղցրությամբ»-ը<sup>3</sup> և գուցե չի ցավում, որ մոռացել է, քայց ես կուզենայի նրա մեջ տեսնել հին շունչը, հին հոգեբանությունը, հին աղոթքը: Մա՛յրս, չե՞ որ այն

<sup>3</sup> Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» երկի ԺԲ գլխից մի հատված է, որ երգվում է Հանգստյան ժամերգության ժամանակ:

հինը լավն էր, դու էլ ավելի լավն էիր այն օրերին, դու խորհրդապաշտ էիր, ապրում էիր քո ցեղակիցների տառապանքով, պատմում էիր ինձ Մշո դաշտի զանազան դեպքերից, մի հեղափոխական քարոզիչ էիր ինձ համար. ես քո զավակն եմ և պարտավոր եմ մնալ հավատարիմ քո ներշնչած ոգուն: Մի թե ուրախ չես, որ կարողացել եմ մնալ՝ իբրև ժառանգորդ քո լավ հիշատակների:

Գիտեմ, քեզ տանջում է նաև այն հանգամանքը, որ դու կյանքում ինձնից «խեր չտեսար»: Չեմ մեղադրում, սակայն մի թե ես մեղավոր եմ: Իհարկե ոչ, այդ դու էլ գիտես: Բայց դու ուզում ես իմանալ, թե ինչպե՞ս և ինչո՞ւ ընկա Եվրոպա: Այստեղ էլ քո հին օրերի ոգին է մեղավոր, և ոչ՝ ինքս: Կարո՞ղ ես այժմ ուրանալ, որ հին օրերին դու ուզում էիր ինձնից ունենալ մի «ուսումնական» տղա, մի «մեծ» մարդ, մի լավ «ազգասեր» գործիչ: Ես հավատարիմ մնացի քո հին մտայնությանը, մի թե ես մեղավոր էի: Այս իմ խոսքերը, սակայն, չեն նշանակում, թե ես անտարբեր պետք է մնամ քո տառապանքի հանդեպ, որ ես չպետք է օգտակար դառնամ քեզ: Քավ լիցի: Ես ուզում եմ, որ դու քեզ մի քիչ ինքնաքննադատության ենթարկես, որպեսզի համոզվես, որ իմ բռնած ուղին քո մի ժամանակվա ցանկացածն է: Եթե այդպես համոզվես, չես դառնա այլևս աճապարդ, կարող ես սպասել, համբերել...

Հայկ, Ռոնսֆերդ , 10 օգոստ. 1926թ.



## Հուշեր Հայկ Ասատրյանի մասին<sup>4</sup>

Ծնվել է Տարոնի Ալաշկերտ գյուղում՝ 5 Փետրվար, 1900թ: Հայրը՝ Կիրակոս Տաճատի Ասատրյան, իսկ մայրը՝ Հեղինե Տեր-Կարապետյանը, քահանայի աղջիկ էր: Ունեին չորս զավակներ՝ Տաճատ, Հայկ, Արաքսի և փոքր քույր էլ, որ մեռնում է 95-ի ջարդին:

Կիրակոսը գյուղի երևելիներից լինելով՝ գյուղացիք իրեն գյուղապետ են ընտրում, ու նա ճգնում է ծառայել իր ժողովրդին: Անկախ իր գյուղապետի հանգամանքից՝ նվիրվում է ազգային գործունեությանն էլ: Իր շուրջը հավաքում է գյուղի երիտասարդությունը ու խանդավառում է ազգային ոգով:

Գյուղապետի այս քայլը հաշտ աչքով չի դիտվում շրջակա քուրդ ազգաբնակչության կողմից, և օրերից մի օր մի քուրդի միջոցով ահաբեկման է ենթարկվում Կիրակոսը: Այդ ժամանակ Հայկը տակավին 8 տարեկան էր: Հոր մահից հետո իրենց ընտանեկան կյանքը դժվարանում է: Այդ տարին մայրը իրեն դպրոց չի դնում, քանի որ իրենց սեփական կենդանիներին արածացնող էր պետք, և հարմարագույնը ինքն էր: Եղբայրը պիտի շարունակեր դպրոցը, մինչդեռ Հայկը տակավին նոր պիտի սկսեր: Այս կարգադրությամբ թե՛ դրամ վճարելու տաղտուկից կազատվեին, և թե՛ էլ մեծ եղբայրը չէր զրկվի ուսումից: Պատանի Հայկը ականա համակերպվում է

---

<sup>4</sup> Նյութը վերցված է «Հայկ Ասատրյան՝ Տարոնականության Ռահվիրան» գրքից (Երևան, 2008):

առժամապես ու սկսում է արածեցնել իրենց փոքրիկ հոտը: Իր մեջ սակայն արթնացած լինելով ուսման սերը՝ դիմում է դպրոց հաճախող ընկերակիցներին ու հետաքրքրվում նրանց դասերով: Վերադարձին խնդրում էր եղբորը, որ դաս տա իրեն: Տաճատը սիրով ընդառաջում էր: Հայկը եղբորից սովորում է այբուբենը:

Քայց սա երկար չի տևում: Մի գիշեր Հայկը թողնում է իր ծննդավայրը ու ապաստանում մորեղբոր՝ Տեր Սարգիս Կարապետյանի մոտ, որ բնակվում էր իրենցից քիչ հեռու մի գյուղաքաղաքում: Տեր Հայրը հաճությամբ էր լսում փոքրիկի խոսքերը, որոնք սրտին են դիպչում... նա ըմբռնում էր կացությունը ու չէր ուզում նյութականի համար քրոջ զավակին զրկել ուսումից, ուստի որոշում է գոհացում տալ Հայկի փափագին:

Երկրորդ օրը Տեր Սարգիս քահանան պստիկին տանում է տեղի դպրոցը՝ արձանագրելու: Տնօրենը սակայն մերժում է՝ առարկելով, որ կրթարանը իր դուռը բացել է երեք ամիս ի վեր, և այլևս տեղ չունեն: Քահանան տակավին բերանը չբացած՝ Հայկը դառնում է տնօրենին ու ասում նրան.

- Ես կարող եմ կարդալ ու գրել և շուտով հասնել ինձ ընկերացողներին: Հետո, ոչ մի բանի պետք չունեմ, կգրեմ ծնկներիս վրա: - Պատանյակի սույն խոսքերը խորապես ազդում են թե՛ տնօրենի, թե՛ քահանայի վրա: Տնօրենը ընդունում է նրան: Շատ չանցած՝ Հայկը սիրվում է բոլորի կողմից ու դառնում դասարանի առաջին աշակերտը: Վարժարանի ազգային մթնոլորտը իր բարերար ազդեցությունն է ձգում պատանի Հայկի սրտի ու մտքի վրա: Այնտեղ լսում է անունները Գևորգի, Հրայրի,

Անդրանիկի, Գալեի, Չոլոյի, Մանուկի և այլոց: Ծանոթանում է նաև նրանց գործունեությանը:

Հայկը հետզհետե ոգևորվում է հայ ֆիդայիների գործերից, որոնք իր ուսման հետ արձարծում են նրանց հանդեպ ունեցած սերը: Տեղի Հ. Յ. Դաշնակցության դեկավարները, տեսնելով Հայկի ուսման մեջ ունեցած առաջադիմությունն ու զարգացումը, դպրոցը ավարտելուց հետո նրան նշանակում են Աշակերտական Միության անդամ: Նա շրջում է զանազան վայրեր՝ դրապես իր օժանդակությունը բերելով Աշակերտական Միությանը: Որից հետո երկրորդական ուսումը շարունակելու համար մեկնում է Երևանի թեմական դպրոցը:

Իր մասին Անդրե Ամուրյանն ասում է. «Առաջին անգամ Հայկին հանդիպեցի 1917թ-ի Ռուսական Հեղափոխության սկզբնական ամիսներին: Հայկը Երևանի «Թեմական Դպրոց»-ի աշակերտ էր: Էջմիածին եկավ «Կուսակցական-Աշակերտական Միության» կողմից՝ պատգամավոր հրավիրելու Երևան, ուր պիտի խոսվեր Կուսակցական Աշակերտական կազմակերպության մասին ու կապ պիտի ստեղծվեր մասնաճյուղերի հետ»:

Այդ օրերին Ա. Ամուրյանն աշակերտում էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ուսանողների հանձնարարությամբ Ամուրյանը Հայկի հետ Երևան է մեկնում ժողովին մասնակցելու համար: Այնտեղ Հայկը ընտրվում է իբրև գործոն և ապա «Ուսանողական Բյուրո»-ի անդամ: Հայաստանի Հանրապետության օրերին Հայկ Ասատրյանը լիուլի կատարում է իր վրա դրված բոլոր պարտականությունները: Նա մասնակցում է Հ. Յ. Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովին, որ տեղի է ունեցել

1919-ին Երևանի մեջ: Պատգամավոր էր ընտրվել Աշակերտական կազմակերպությունից:

1921-ի Փետրվարյան Ապստամբությանը ևս բերում է իր մասնակցությունը: Երբ Կարմիր Բանակը Հայաստան մտավ, ուզեց ձերբակալել ապստամբության մասնակցողներին: Մի գիշեր իրեն ծանոթ և դպրոցի նախկին դասընկերներից մի քանի հոգի գալիս են՝ հայտնելու, թե կառավարությունը իրեն ևս պիտի ձերբակալի. լավ է, որ հեռանա: Նույն օրն իսկ Հայկ Ասատրյանը հրաժեշտ է տալիս մորը, քրոջը, եղբորն ու մորեղբորը, և ընկերների հետ ձիերը նստած՝ հասնում է պարսկական սահման ու անցնում Թավրիզ: Այնտեղ մնալով՝ ստանում է պարսկական անձնագիր: Թավրիզի մեջ իրար են միանում Հայաստանի ուսանողներն ու մտավորական դասը: Շատ չանցած՝ Զոր. Գարեգին Նժդեհը ևս Թավրիզ է ժամանում, ու երկուսը միասին անցնում են Եվրոպա:

Հ. Յ. Դաշնակցությունը ուսանողներ ուղարկեց Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրահայի համալսարանը՝ ուսանելու. նրանցից մեկն էլ ինքն էր:

Ա. Ամուրյանն ասում է. «Հայկը մեծ եռանդով նվիրվեց փիլիսոփայության ճյուղին: Կարդալու և պարապելու հետաքրքրական և ինքնօրինակ կերպ ուներ: Նախ՝ վերարկուն երբեք չէր հագնում, այլ նետում էր ուսերին: Հաճախ նստում էր հատակին ու Ֆրիդրիխ Նիցշեի և կամ Կանտի գիրքը առջևը դրած՝ կարդում էր եղանակով՝ ճիշտ դերվիշի տպավորություն ձգելով: Արդեն կենցաղով էլ Հայկը դերվիշ էր, աննյութասեր, կյանքի հաճույքների վրա քամահրանքով նայող, սակավակեր ու սակավապետ, շատ ուտելիքներից զզվող, և՛ վանականի, և՛ աշխարհականի տիպ: Ուներ ճշտորոշ և խիստ

սկզբունքներ. ասում էր սուսն ու կեղծիքը, շողոքորթությունն ու քծնանքը, մարդկանց թերությունները ասում էր իրենց ճակատին: Իր ունեցածը ոչ միայն կիսում էր ուրիշի հետ, այլ նույնիսկ տալիս էր ամբողջովին՝ հաջորդ օրը անոթի մնալու պայմանով»:

1924-ի վերջերը, երբ Շեյխ Սայիտը Թուրքիայի մեջ ապստամբության դրոշն էր բարձրացնում, Հայկը արտակարգորեն հետաքրքրվում է այս հարցով և այդ օրերին դասախոսություն էլ տալիս ուսանողական տան մեջ դաշնակցական ուսանողներին:

1930-ին Ասատրյանը ավարտում է Պրահայի Կառլով Համալսարանի փիլիսոփայական ճյուղը դոկտորի աստիճանով: Այս անցնում է Բուլղարիա, ուր մնում է Գարեգին Նժդեհի մոտ: Նա իբրև կուսակցական գործիչ, շրջում է Պլովդիվ, Սդարազակոբա, Վառնա, Ռուջուկ, Պուրկազ, Հունաստան, Ռումինիա, Գերմանիա և այլ վայրեր:

Հայկ Ասատրյանը 1933-ին դառնում է խմբագիրը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայի մեջ հրատարակվող «Ռազմիկ» թերթի, ուսուցիչ՝ Գևորգ-Մեսրոպ ճեմարանում և միաժամանակ քարտուղար՝ կուսակցության Կենտր. Կոմիտեի: Նա գործել է միշտ Ջոր. Գարեգին Նժդեհի հետ:

1942-ին փիլիսոփա Դոկտ. Հայկ Ասատրյանը, ավարտելով իր «**Armenian vor posten**»<sup>5</sup> գիրքը, փութով մեկնում է Բեռլին՝ այն գերմաներենի թարգմանել տալու և անմի-

---

<sup>5</sup> Խոսքը, հավանաբար, «Armenien Der Arische Vorposten in Vorderasien» գրքի մասին է - «Հայաստան - Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում»: Գրքի նախաբանը գրել է Գարեգին Նժդեհը:

ջապես հրատարակելու համար: Այս բանը շատ կարևոր էր՝ նրա համար, որ մի շարք գերմանացի և ֆրանսիացի գիտնականներ սխալ տեղեկություններ էին տվել հայ ցեղի ծագման մասին: Հետևաբար հարկ էր գերմանացիներին հասկացնել, թե Հայը սեմական ծագում չունի, այլ՝ արիական:

1943-ին Հայկը վերադառնում է Սոֆիա ու կրկին անցնում իր խմբագրության պաշտոնին: Այդ ժամանակ գրել էր մի ուրիշ գիրք ևս, որ տակավին լույս չի տեսել:

1944-ին համայնավարները գրավեցին Բուլղարիան ու ձերբակալեցին 32 դաշնակցականների: Նոյեմբերի 20-ին Գարեգին Նժդեհը, իսկ 30-ին էլ Հայկ Ասատրյանը ձերբակալվում են: Ապա՝ Ներսես Աստվածատուրյանը<sup>6</sup> և ուրիշներ: Հայկին նախ ուղարկում են Քիշնևի բանտը, ուր շատ են չարչարում նրան՝ նույնիսկ ջրից զրկելով:

---

<sup>6</sup> Գարեգին Նժդեհի և Հայկ Ասատրյանի մտերիմ գաղափարական ընկեր, (1897, Կ. Պոլիս, - 1953, Իրկուտսկի մարզ, ԽՍՀՄ), ցեղակրոնության գաղափարախոսության ակտիվ գործիչներից մեկը: Եղել է Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության Բուլղարիայի շրջանի պատասխանատու գործիչ: Վարել է առևտրական գործունեություն՝ նյութապես զգալիորեն օժանդակելով ազգայնական շարժումներին: Հայկ Ասատրյանի հետ համատեղ 1936 թ. Սոֆիայում հրատարակել է «Ցեղ և Հայրենիք» կիսամյան, որը երկար կյանք չի ունենում: 1937-1938 թթ. Հայկ Ասատրյանի և հետ հրատարակում է «Տարոնի Արծիվ» ամսաթերթը, որն իրենց կողմից հիմնած Տարոնական շարժման պաշտոնական մարմինն էր: 1945 թ. հունվարի 27-ին ձերբակալվել է և դատապարտվել 10 տարվա ազատազրկման: Մահացել է 1953 թ. օգոստոսի 28-ին Իրկուտսկի մարզի կալանավայրում: 1963 թ. արդարացվել է:

Ապա՝ Ուրալի բանտը, ուր մնում էին իր մյուս ընկերների մի մասը՝ գրեթե ամեն օր անոթի ու ծարավ: Օրեցօր բանտերը լցվում էին բանտարկյալներով: Մնունդի զգալի պակասն ու խոնավությունը և ցուրտը պատճառ են դառնում, որ մարդիկ մեռնեն բանտի մեջ: Հայկը ունենում է սրտի տագնապ ու ընկնում անկողին: Մի օր բանտակիցներից մեկը գալիս և իմաց է տալիս Հայկին, թե Ներսես Աստվածատուրյանը մեռած է, և նրան գերեզմանատուն պիտի տանեն՝ թաղելու: Հայկը հազիվ հազկարենում է գլուխը անկողնուց վեր հանելով՝ պատուհանից տեսնել իր սիրելիի դիակը, որ դուրս էին հանում: Այդ գիշեր ավելի է ծանրանում ու ամիսներով մնում պառկած: Ասատրյանի հիվանդության ծանր օրերին էր, որ իրեն ձուկ էին բերում ու կերցնում էին՝ առանց փշերը մաքրելու: Փշերը մտնում էին լինդերը ու ծանրորեն վնասում են իր առողջությունը: Այս անգամ էլ ավելի ծանրանալով՝ բռնվում է ցինգա հիվանդությամբ:

Փիլիսոփա Դոկտ. Հայկ Ասատրյանի բանտարկությունից քիչ անց ձերբակալում են նաև իր ընտանիքն ու երկու աղջիկներին և աքսորում են Փլիվենտ, ապա՝ Փավլիքենե: Տեղացի համայնավարները Հայկ Ասատրյանի տան դռան վերևը գրել էին. «Այս տան մեջ ապրում է կառավարության թշնամի մի կին, որի ամուսինը բանտում է գտնվում. պետք է միշտ հետապնդել նրան»: Իսկ Չեկան ստիպել էր Հայկի կնոջն ու աղջիկներին, որ ամեն առավոտ ու իրիկուն երթան՝ ստորագրելու ներկայության թղթերը: Այսպես սահում են օրեր, շաբաթներ, ամիսներ... Ոչ մի լուր Հայկից: Մինչդեռ Չեկայի պաշտոնյան ամեն օր գրեթե գալիս էր և սուտ զրպարտություններ գրելով՝ ստիպում էր տիկնոջը ստորագրել

դրանք: Տիկինին արգելվում է նույնիսկ աշխատանքը, որ կարենա պահել իր երեխաներին: 1947-ին Չեկայի կողմից տիկին Ասատրյանը ստանում է մի երկտող, որ գուժում էր մահը Դոկտ. Հայկ Ասատրյանի: Դոկտ. Հայկ Ասատրյանի մահվան սև լուրը հաղորդելուց հետո Չեկայի պաշտոնյան այս անգամ տիկնոջը մոտենում է Հուդայի ձևով՝ նոր մեքենայությամբ... խրատում է նրան ամուսնանալ, որպեսզի կարողանա աշխատանքի իրավունք ստանալ և պահել իր զավակներին, հակառակ պարագայում կհամարվի հակակառավարական անձ: Տիկին Ասատրյանը ճարահատ 1951-ին ստիպված է լինում ամուսնանալ մի բուլղարացու հետ, որի շնորհիվ կարողանում է պահել երկու աղջիկներին:

Մի քանի տարի հետո, 16 ապրիլ 1955-ին, Հայկ Ասատրյանը, ծանր հիվանդ, վերադառնում է Սոֆիա և մնում է իր մեծ աղջկա՝ Հեղինեի մոտ: Նա ցավով է լսում Չեկայի խաղերը իր ընտանիքի գլխին, և ստիպվում է հաշտվել ողջ իրականության հետ: Կինը գրեթե ամեն օր այցելում է իրեն՝ տանելով խնամատարական աշխատանք: Հայկը հազիվ թե ոտքի էլած՝ առաջին գործը եղավ այցելել կորսված կամ բանտերի մեջ մեռած իր ընկերների ընտանիքներին ու զավակներին:

Բանտարկության տասը տարիների ընթացքում Ասատրյանը գրել է «Դյուցազներգություն» հայ ժողովրդի մասին:

13 հունվար 1956-ի երեկոյան փիլիսոփա Դոկտ. Հայկ Ասատրյանը, անկողնուց ելնելով, տաք բաղնիք է առնում ու ապա իր Հեղինե աղջկան կանչելով՝ ասում է նրան.



- Պատրաստ եմ մահը դիմավորելու, բայց չեմ ուզում, որ ինձ մերկացնեն ու լվան:

Մահվան այդ մեկ-երկու ժամերին նա ապրում է իր սիրելի անհետացող ընկերների հետ՝ հարատևորեն հիշելով Ներսես Աստվածատուրյանին ու Ջոր. Գարեգին Նժդեհին: Եվ երեք անգամ, երկինք նայելով, ասում է.

- Ա՛խ Հայաստան, ա՛խ Հայաստան, ա՛խ Հայաստան:

Ու կնքում է իր մահկանացուն սրտի կաթվածով: Այսպես վերջանում է կյանքը ինքնօրինակ, ինքնատիպ, արտակարգ նկարագրի տեր, կարող մտավորական Դոկտ. Հայկ Ասատրյանի, որ միշտ մնաց տոգորուն, ազգային ջերմ զգացումներով:

Լոս Անջելեսից ընկեր Սարգիս Սարունու «Հեղափոխական Ալբոմ»-ին ուղղած 13 Հունիս 1970 թվակիր նամակից մեջբերում ենք այն մասը, որ վերաբերվում է Դոկտ. Հայկ Ասատրյանին.

«Երբ 1955 թ. ապրիլին վերջացրած, լինելով տասնամյա ատժամանակաշրջանը, մեզ դեպի տուն ուղարկելու պատրաստության մեջ էր, Սիբիրից բերին Մոսկվային մոտիկ Պքովի կայանը: Այս կայանի մեջ արդեն կիսանկախ էինք: Ահա այդտեղ՝ այդ վերջին կայանի մեջ, հանդիպեցի մի լեհ բախտակցի, որ գուրգուրանքով պահել էր Հայկի մեկ ձեռագիրը: Ահա, թե ինչպես: 1955 ապրիլի սկզբներին, երբ դեպի տուն ճամփի ընթացքին Հայկին ևս բերում են այդ վերջին կայանը, վախենալով, որ բուլղարական սահմանի վրա խիստ քննության կենթարկվի արտրավայրի մեջ իր գրած մեկ դյուցազներգությունը, Հայկը ձեռագիրը հանձնում է այդ լեհին, խնդրելով, որ տանի իր հետ Լեհաստան և պահի մինչև որ լավ օրերը գան, և կարողանա Հայկին վերադարձնել այդ գրու-

թյունները: Ձեռագիրը անձնապես կարդացի և վերադարձրեցի լեհ բանտարկյալին: Թերթի լուսանցքների վրա Հայկը գրել էր ընդարձակ մի դյուցազներգություն, որով տալիս էր հայ ժողովուրդի ամբողջ պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը: Թղթի չգոյության հետևանքով, թերթերի լուսանցքների վրա գրված Հայկի այդ հոյակապ դյուցազներգությունը, ով գիտե, որ անձանոթ այդ լեհի մոտ է մնում այժմ, կամ արդեն իսկ անհայտացած՝ անձանոթ այդ մարդու կողմից...»

Այս էլ քեզ տեղեկություն ահա Հայկի մասին: Եթե քեզ անձանոթ է, ասեմ նաև, որ Հայկը աջ բազուկն էր Նժդեհի, երբ «Ցեղակրոնություն» գաղափարաբանությունն էր խմբագրում: Դոկտ. Ասատրյանի մահով Դաշնակցությունը կորցրեց անձնվեր մի գործչի, և մեր ժողովուրդը՝ կարող մտավորական մի անձնավորություն:

Ավո «Հեղափոխական Ալբոմ» 1971, թ. 11, էջ 283-291

## Գ. ՆԺՂԵՀԻ «ՅԵՂԸ ԵՎ ԻՐ ՏԱԿԱՆՔԸ»<sup>7</sup> (խորհրդածություններ)

Ա

Մի իմաստասեր նկատում է՝ մի գրքի արժեքը հասկացվում է նրա առաջին տողերից: Շատ մտածողներ էլ ասում են՝ աշխարհի եղելությունը տառապելով ապրել՝ նշանակում է իմաստասիրել:

Բացե՛ք Նժդեհի գիրքը և անմիջապես, անգամ «Երկու խոսքի» առաջին տողերից պիտի զգաք, որ հեղինակը մեր կյանքի եղելությունըին մոտենում է տառապելով և իմաստասիրորեն մտածելով:

Սովորական հայ գիրք չէ դա, այլ՝ ուղեփոխիչ մի երկասիրություն, որ մեր օրվա մտածական ինքնուրույն գրականության առջև նոր հորիզոններ է բացում:

Նրա արժեքը այն տարբերության մեջ է, որ ունի դա մեր հասարակարանական և քաղաքական սովորական հողվածագրությունից:

Օրվա հայր ձգտում է ավելի երևույթների կերպարանը ճանաչել, քան նրանց բովանդակությունը ըմբռնել: Նրա մտածումը խորշում է իրերի խորքը, էության անդունդները թափանցելու ճիգից:

Այս ճիգը նկատվում է Նժդեհի յուրաքանչյուր խորհրդածության մեջ: Օրվա հայր զբաղվում է հարցերով, բայց չի շոշափում նրանց սիրտը: Նա ազդվում է դեպքերից, զգայուն է իրականության հանդեպ, բայց խուսա-

---

<sup>7</sup> Հայկ Ասատրյանի այս հողվածը Նժդեհի աշխատության մասին տպագրվում է որոշ կրճատումներով:

փում է դրանց ծնուցիչ պատճառների իմաստը մեկնաբանելու տքնությունից:

Նժդեհը իր սիրտն է դրել հարցերի մեջ և իր երևակայությունը լծել մի գործի՝ մեր ողբերգությունը ներկայացնել պատճառագիտորեն:

Օրվա հայը աշխատում է, նույնիսկ աշխատասեր է, բայց քիչ դեպքերում հաջողվում է ճշմարտորեն երկասիրել: Իր աշխատանքը նա պայմանավորում է արտաքին դրդապատճառներով, աշխարհի պարտադրած կարիքներով, որով՝ իր ջանքը չունի ներբխականության դրոշմ:

Նժդեհը ամեն վայրկյան բախում է իր ցեղի ոգու դուռը, պրպտումներ է անում նրա էության կրակարանում և ամեն միտք կամ ճշմարտություն բխեցնում է նրանից:

Օրվա հայը սիրում է արտաքին դիտողությունը, դրա համար էլ նրա գրականությունը ավելի նկարագրական բնույթ ունի: Նա նախընտրում է դյուրաբար տպավորել և ոչ թե իր էությունը ստեղծագործորեն պարտադրել: Նա ավելի խոսում է, քան թե ապրում, ավելի գրում է, քան թե մտածում, ավելի քննադատում է, քան թե քննում:

Նժդեհը աշխարհը դիտում է իր հոգու լուսամուտից և նրան պարտադրում իր ներապրումները: Նրա յուրաքանչյուր բառը արդյունք է ներքին զննության, դրա համար էլ՝ ամեն մի խոսքը խտացյալ մտածում է:

Օրվա հայը սիրում է օտար գաղափարներն ու մտքերը թարգմանել միայն, քիչ դեպքերում նա կարողանում է դրանք ներծուլել և մանավանդ դրոշմել՝ ըստ իր էության պատկերի: Նրա մտավորական ոգորումները հաճախ զուրկ են մտում ցեղային զգացումի վերահսկո-

**դությունից: Դրա համար էլ նա մտավորապես շուտ է այլասերվում:**

Նժդեհը օգտագործու՛մ է միայն օտար մտքերն ու գաղափարները: Նա չի՛ ղեկավարվում նրանցով, այլ ղեկավարում է դրանց: Իր հուժկու ցեղզգացության թափով նա ճմլում է նրանց սիրտը և ստիպում, որ սա տրոփի հայրեն:

Օրվա հայի իմացականությունը զինված չէ կենսագագացությամբ, այլ՝ միայն անթև բանապաշտությամբ: Անգոր բանապաշտությունը հաճախ ենթակային մատնում է մտքի խուճապի, իսկ խուճապահար միտքը միշտ էլ ուրվականներ է ստեղծում, երևակայության անտեղի տառապանք և խնդիրների քառս: Նմանը դառնում է ջղային, զրկվում է ապրումների մշտավառ կրակից, ներքին լարումից ու լավատեսությունից:

Այդ է պատճառը, որ այսօր, երբ ազգերի կյանքը դառնում է մեկ էական կնճիռի՝ կենսաբանական-ցեղայինի շուրջը, հայը հրապարակ է նետել անթիվ «կնճիռներ» և իր բանական ողջ պաշարը վատնում է դրանց վրա: Նա չգիտի խնդիրների «խնդիրը» զանազանել և հարցերի «հարցը», իր կյանքի մեծ հրատապը պարտադրել իր մտածում-զգացումին: Հավիտենականը թողած՝ նա զբաղվում է առօրյայով, տունկը լքած՝ նա կոծում ու աղմկում է թափվող տերևների համար, ինչպես դասալիքը, որ կոփի ժամանակ իր սիրտն ու սուրը գործի դնելու փոխարեն՝ դժգոհում է իր ձիու պայտից, իր կոշիկի գամերից և նրանց տալիս «ռազմագիտական» նշանակություն:

Նժդեհի միտքը գործում է իր սրտի զարկով. այդ պատճառով էլ նա զբաղվում է կենսաբանորեն էական

նով: Հոգու հորձանումով նա մղվում է դեպի ձգողական այն ուժը, որ կոչվում է հավիտենական-ցեղային. դրա համար էլ նա համակված է զգացումի կրակով, մշտախոռով ապրումներով, անցումի կարոտով և լավատեսությամբ: Այս հոգեվիճակը նրան ընձեռում է մտքի լարում, ուշադրության կենտրոնացում, որով՝ հարցերից «հարցը» ընտրելու և նրա մասին հայտնության լեզվով խոսելու ընդունակություն:

Օրվա հայր, ծառայելով չոր բանապաշտությանը, անտեսում է այն ճշմարտությունը, թե իմացությունը կենսաբանական մի գործիք է: Դրա համար էլ՝ նա ոչ թե բովանդակությունը, այլ ձևն է դարձնում նպատակ: Նա վիճում է՝ հենված կրքերի «տրամաբանությանը» և ոչ թե կենսաբանական բարոյականին: Այդ է պատճառը, որ նա անվերջ խոսում է, բայց չի կարողանում իր «գաղափարական» հակառակորդին տարհամոզել: Նա մոռանում է, որ, ընդհանրապես, տրամաբանությամբ «տարհամոզելը» մի նախապաշարում է, որ՝ **աշխարհում ամեն նվաճում լինում է հաղթահարումով**, իսկ վերջինս՝ կենսաբանական ըմբռնում է: Նա չգիտե, որ «հաղթահարել»-ը պայմանավորվում է ինքնահաղթահարումով, ներքին տկարությանց նվաճումով: Նա չգիտե, թե նվաճել սեփական անձը, նշանակում է պատմագործության մարզը իջնել ամբողջական «Ես»-ով, այսինքն՝ ժառանգական և ստացական բոլոր կարողականությունների գորահավաքումով: Մինչդեռ օրվա հայր գործի է լծել միայն իր լեզուն: Երբ սիրտը չի կառավարում լեզուն, սա դառնում է շփոթահարույց գործիք: Մրտի իշխանությունը՝ դա «Ես»-ի օրգանավոր ներդաշնակության, անձի ներքին հավաքականության հայտարարն է: **Անկարելի է ներքուստ ցրված լինել և շինարար**

լեզու ունենալ: Իսկ ներքուստ ցրված են բոլոր նրանք, որոնց իմացության աղբյուրը ցեղը չէ: Այդպիսիք ընդհանրապես ունեն երկարապատում, մանվածապատ ոճ և բեկորային մտածում:

Նժդեհի ոճը բեկորային է, մտածումը՝ ամբողջական: Բեկորային ոճը արդյունք է մտքի անհանգստության Նժդեհը «ցեղահոգ» է: Մտածման ամբողջականությունը պայմանավորվում է նրա խորին ցեղազգացությամբ Նժդեհը ցեղամարդ է: Ցեղամարդը կենսազգաց իմացականություն ունի. նրա լեզուն սիրտն է, որում ցեղի արյունի հետ տրոփում է նրա գոյության խորհուրդը: Մրտով և արյունով խոսել, ասել է՝ էության կսկիծն ու բերկրանքը վերածել բառի, դառնալ պատգամախոս - Նժդեհը պատգամախոս է: Նմանի իմացության աղբյուրը ցեղի էության անդունդն է, ենթագիտակցականը, հավիտենականը:

Նմանի իմացական իդեալը ինքնապաշտպանությունն է, ներիմացությունը: Ներքուստ ամբողջացած, ինքնահաղթահարումի հանգած «Ես»-ն է միայն ընդունակ ներիմացական ապրումի: Այստեղ էլ ճշմարտագրվում է այն տեսությունը, թե բացարձակին ձուլվելը հնարավոր է միայն սեփական ոգու երկնքի տակ՝ անցավորը ապրելով և հավիտենականի մասին մտածելով:

Երկու խոսք ևս:

«Ցեղը և Իր Տականքը» հակադրությունների գիրք է: Կյանքի անկատարության պատճառներից մեկն էլ թերևս այն է, որ օրգանավոր «գոյ»-ը բազմատարր է և տարբերարժեք, որ նա, ինչպես Նիցշեն է ասում, կազմված է և՛ ոգուց, և՛ աղբից: Այս այլազանությունն ու այլարժեքությունը հիմք են դառնում մարդկային բարոյական զգացմանը:

Դրանց վրա է խարսխվում արժեքների ուսմունքը՝ բարոյագիտությունը: Վերջինս արժեքների հակադրությունների գիտություն է: Համեմատական եղանակաբանության կիրարկմամբ՝ բարոյագիտությունը ճգնում է հանգել արժեքների համադրության իդեալին, հանրարժեք բարոյականի ըմբռնումին:

Այդպես է նաև Նժդեհի մեթոդը: Նա միմյանց է հակադրում ցեղազգաց ընտրանու լիարժեքությունն ու ցեղի տականքի անարժեքությունը, և մեր առջև դնում ցեղամարդ հայի գաղափարատիպը:

Ցեղամարդ հայը՝ դա գորութենական բարոյականով օժտված, ցեղային արժեքազգացությամբ համակված հայն է: Դա համադրական հայ «Ես»-ն է, հոգևոր երկվությունից ձերբազատված ամբողջական հայը:

Այս հայն է միայն ստեղծագործ, նա՛ է միայն հոգևոր ինքնակառուցումի ընդունակ, նրա՛ ճակատը միայն կարող է մի օր պսակվել հաղթանակով:

Նժդեհի գիրքը կարոտի և զգվանքի գիրք է: Եվ հենց այդ պատճառով էլ նա հոգևոր ինքնակառուցումի նորատիպ մի փորձ է: Ամեն կառուցում նախատեսում է կառուցանյութերի զննում, մերկացում, ճանաչում: Հեղինակը գտել է մեր կյանքի լուսավոր և սովերային գծերը և դրանք հակադրել միմյանց - ցեղը և իր տականքը: Ցեղը՝ դա կենսագորույթի հավիտենական լուսադրյուն է, որ ոգիները վառում է ինքնահաղթահարումի, մեծագործության կարոտով: Տականքը՝ դա այրված ոգու մնացորդն է, սրտի ապականությունը՝ հոգևոր դիանեխություն, որ միայն զգվանք է հարուցանում:

Այս երկու զգացումները՝ կարոտ և զգվանք, ստեղծագործ ուժեր են: Զգվանքը՝ դա ինքնաժխտումի խոովքն է,



տկարությունների բացասման նախաքայլը: Կարոտը՝ դա բարձրատիպ գոյության տենչն է, իբրև արժեք հավիտենականացնելու ճիգը: Զգվանքը իրականության խայթումն է<sup>8</sup>, կարոտը՝ իդեալի երազը:

Ստեղծագործական ամեն հղություն պատճառվում է իրականության խայթումով, ստեղծագործական ամեն ծնունդ պայմանավորվում է աշխարհի ցավը հաղթահարելու կարոտով:

Հայ ցեղի տականքը՝ դա մեր օրերի ցավն է: Իսկ ի՞նչ է ասում ցավը: Ինչպես իմաստասերն է նկատում, նա ասում է. «Անցի՛ր»: Զգվանքը՝ դա «թռչող թևեր» է տալիս, իսկ ամեն թռչող ոգի, ամեն մտրակված երևակայություն համակվում է նորաստեղծության կարոտով:

Այդ կարոտը: Դա մեր կյանքի լինույթն է. դա լինելիական հայի հոգևոր առաջընթացն է, դա հավիտենական հայի անդադար չուն է:

**Նորաստեղծվի՛ր՝ այրելով մեջդ ինչ որ զգվելի է: Նորաստեղծվի՛ր՝ վառելով մեջդ ինչ որ վսեմ է:**

Այդ ասել է՝ հոգեկերտվի՛ր ցեղորեն, համակվի՛ր հզորանքի զգացումով, եղի՛ր դաշնակցական<sup>9</sup>:

---

<sup>8</sup> 2004թ. հրատարակած «Հայկ Ասատրյան - Հատընտիր» գրքում այս նախադասությունը տրված է այսպես. «Զգվանքը իրականության խթանումն է, կարոտը՝ իդեալի երազը»: Սակայն մեր կարծիքով բնագրի մեջ պետք է լիներ «խայթում» բառը «խթանում» բառի փոխարեն:

<sup>9</sup> Այստեղ և հետայսու պետք է հասկանալ ոչ թե կուսակցական պատկանելությունն, այլ դաշնակցական ոգին և զաղափարախոսությունը: 1937թ. Հայկ Ասատրյանը պաշտոնապես Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից հեռացվել է կուսակցությունից՝ Նժդեհից ավելի վաղ:



Հայկ Ասատրյանը Բեռլինի  
Բարձրագույն քաղաքական դպրոցն  
ավարտելուց հետո, 1926թ.




Հայկ Ասատրյանի ուրվապատկերը,  
1930-ական թթ.



Հայկ Ասատրյանն ու  
Գարեգին Նժդեհն  
ընկերների հետ




1942թ.



Եղբայրը՝ Տաճատը,  
մայրը՝ Հեղինեն,  
քույրը՝ Արաքսյան (1925թ.)



Հայկ Ասատրյանը տիկնոջ՝ Սիրանուշի և դստեր՝ Հեղինեի հետ



Եղբայր Տաճատը



Քույր Արարսյան


Դուստր Հեղինեն կնքահոր՝ Գարեգին Նժդեհի հետ



Դուստր Հեղինեն ամուսնու հետ



Հայկ Ասատրյանի կինը՝ Սիրանուշը դուստրերի՝ Հեղինեի և Արածանիի հետ, 1944թ.





Հայկ Ասատրյանի գերեզմանը Սոֆիայում

Այս է Նժդեհի կոչը, այս է նրա գրքի իմաստը:

## Բ

Նժդեհի գիրքը կրում է «Ամերիկահայությունը» ընդհանուր վերտառությունը<sup>10</sup>: Նրա բովանդակությունը, սակայն, բնորոշվում է «Ցեղը և իր Տականքը» ենթախորագրով: Գրվածքի հորինման իբրև անմիջական շարժառիթ հանդիսացել են ամերիկահայ կյանքի վերջին տարիների իրադարձությունները: Նյութը, սակայն, ընդհանուր է, համահայկական: Դա ներկայացնում է օրվա հայ կյանքի համայնապատկերը:

Հեղինակը խորապես ըմբռնել է, թե ներկան ո՛չ այլ ինչ է, քան անցյալի և ապագայի հանգույցը - մի կամուրջ, որի վրայից պատմագործ ցեղերը կատարում են իրենց հավիտենական չուն: Այդ պատճառով էլ գրվածքն ստացել է վերլուծական նկարագիր, իսկ վերլուծման չափանիշը համարվել է հավիտենական-ցեղայինը: Հայությունը պատմականորեն բաժանված է երկու հակամարտ հոսանքների: Դրանցից մեկը «ցեղահոգ» է, մյուսը՝ անձնագոհ<sup>11</sup>: Մեկի ճակատը պսակում է ցեղի ձեռքը, մյուսի էությունը կնքված է ընկածության մրով: Մեկը վառվում է ցեղի կենդանանորոգ զորութենականությամբ, մյուսը՝ մոխիր է միայն: Մեկն առաջնորդվում է ցեղի լինելիական բարոյականով, ինքնակատարելագործումի տենչ ունի և մարմնացնում է ճակատագիրը

---

<sup>10</sup> Վերնագիր, խորագիր:

<sup>11</sup> Այստեղ՝ գոհի կերպարով հանդես եկող, այլ ոչ թե՛ հանուն որևէ նպատակի իրեն գոհաբերող:

հաղթահարելու, բարձրանալու բնաճիգը, մյուսը՝ էությամբ ստորնահակ<sup>12</sup> է, «տականք»...

Կողմերից մեկը լծված է «վատության» և «ամբարիշտ ուրացում»-ի գործին, մյուսը՝ խայթված է ազգային ամութանքի զգացումից: Սրանով էլ պայմանավորվում է գրքի ողբերգական բնույթը, նրա ցեղացավ շեշտը: Բոլոր ողբերգությունների հիմքը նրանում է, որ մարդս բարոյական զգացում ունի, իսկ երևույթները ենթակա են չարի և բարու սկզբունքներին: Այս սկզբունքները ենթակայական ըմբռնում-ապրումներ են, բայց տիեզերական ցավի շեշտ կա ավետարանչի ա՛յն խոսքի մեջ, թե «Յուրսն եկն և յուրքն զնա ո՛չ ընկալան»<sup>13</sup>: Կյանքի վրա մի անեծք կա, և այդ նրանում է, որ նույն արգանդից և՛ Աբել է ծնվում, և՛ Կայեն, որ մեկը չարն է գործում, իսկ մյուսը տառապում է ուրիշի գործած վատության համար: **Մեր վիշտը նրանում չէ, որ աշխարհում թուրք կա, այլ նրանում, որ թրքատիպ հայ կա:** Հայ, որ ցեղի ձայնը չի լսում, որ նրա առաքելության խորհուրդին չի հավատում, հայ, որ չարության անոթ է և պղծում է մեր ոգու ստեղծագործ երկունքը, որ անասնազգաց է, ընդունակ չէ ապրել ու հասկանալ, թե իր ընկածությունը ի՛նչ սպանիչ ամոթանք, բարոյական ի՛նչ զարհուրելի տառապանք է պատճառում ցեղորեն զգայուն հայ մարդուն: Այստեղ է հայ կյանքի մղձավանջը, այստեղ՝ նրա այրող ցավը, այստեղ՝ մեր ողբերգությունը:

---

<sup>12</sup> ստորությանը հակված

<sup>13</sup> Իրենք (յուրայինները) եկան, և իրենք էլ նրան չընկալեցին:

«Միջավայրը» հատվածում թվելով մարդաաշխարհագրական, հոգևոր-մշակութային, հոգեբանական և տնտեսական ա՛յն գործոնները, որոնք նպաստում են ամերիկահայության ցրվածությանը՝ հեղինակն այդ գաղութը բաժանում էր երկու մասի - «Հայ հասարակություն դառնալու իդեալով առաջնորդվող ազգայնական հոսանք և ցեղորեն դիմագուրկ ցրվածություն»:

Կենտրոնահակ և կենտրոնախույս այս տրամադրությունները ունեն կենսա-հոգեբանական հիմք: Յեղը կենտրոնաձիգ գորույթ է, անցեղազգաց խուժանը՝ կենտրոնացիր հակում: Ցեղորեն զգայուն տարրերն ունեն համախմբվելու բաղձանք, այսինքն՝ ընկերորեն «հասարակություն», ազգորեն պետություն դառնալու իդեալ: Դրա հանդեպ ցեղորեն ուժացած տիպերը համակված են վանողական զգացումով. ձգտում են ձերբագատվել ցեղի գերիշխանությունից և ապրել անձնորեն: Դրանք գուրկ են կախումի, որով պարտականության, ինչպես նաև կարգապահության գիտակցությունից: Դրանք անձնիշխան չեն, այլ՝ միայն «ես»-ական, այսինքն՝ մանր շահերի և կրքերի գերի, որով՝ չունեն ցեղի ինքնիշխանության ըմբռնումը, այսինքն՝ հոգեբանորեն ստրուկ են:

Հոգեբանորեն ստրուկը նա չէ, որին քաղաքականորեն ծանր մի դրություն է պարտադրված, այլ նա՛, որ անձնիշխան դառնալու խռովք չունի: Նմանին պակասում է երկու բան՝ խորին հայրենազգացություն և խորին ինքնազգացություն, որով՝ հայրենասիրություն և ինքնասիրություն: Հայրենասերը կարող է տարագրվել, բայց երբե՛ք հոգեպես տեղափոխվել, ինքնասերը կարող է պարտվել, բայց երբե՛ք անպատվորեն տեղի տալ: Այս



հակամերժ զգացումների փոթորկումն է, որ այսօր գաղութահայ իրականությունը վերածել է կովադաշտի: Ինքնազգաց հայը խոսում է Միացյալ և Անկախ Հայաստանից, վրեժից և հայ ճակատագրի ու դատի շուրջը ցեղորեն համախմբվելու անհրաժեշտությունից, անցեղազգաց հայը, երջանկություն ասելով՝ հասկանում է անձնական շահը, իսկ այդ կարելի է պահովել միայն անհատական ճիգով և նաև Հայաստանից դուրս:

Կենտրոնաձիգ և կենտրոնախույս այս տրամադրությունները հեղինակը պատմահոգեբանորեն բացատրում է նրանով, որ «հայության մի մասը Ամերիկայում արմատ ձգելու նպատակով չի հեռացել երկրից, այլ եղել է պանդխտություն», մինչ «մյուս մասը՝ Հայրենիքը թողել է ընդմիշտ, գնացել դրամ շահելու և նոր կյանք վայելելու նպատակով»:

Տառապանքը ինքնաբուխ բարոյականի մեկ արտահայտությունն է, չարությունը՝ արտաքուստ հրահրվելու տրամադրությունը: Տառապապաշտը ինքնազիտակ երկնող է, ստեղծագործ, նրա իդեալն է սեփական էության արձանացումը (քաղաքականորեն՝ այդ ասել է ազգային պետության կառուցումը): Ցեղորեն վատը, չարը - դա արտաքին թշնամու գործիքն է, նրա զինակիցը, անինքնակամը, դրսից գրգռվողը. դրա իդեալն է բարոյական անձնատվությունը օտարին (քաղաքականորեն այդ ասել է՝ օտարահպատակ մնալու տենչ):

«Ցեղ և Հայրենիք», 1936թ., թիվ 3

## ՀԱՅԵՐԸ ԵՎ ԻՐԵՆՑ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԸ<sup>14</sup>

Մի՞ թե Հայկական Բարձրավանդակն ու հայ ցեղը արժանի էին այս

ճակատագրին: Մի՞ թե այդ առաջընթացն անխուսափելի էր:

Այո՛, ասում է ցեղորեն ան-«ես» մարդը, իրապաշտը, քաղաքաբանողը, նվաստը, խելոքը:

Չկա ավելի վնասակար հիմարաբանություն, քան «իրապաշտական» կոչված կիսամտածումը: Իրապաշտը նա է, ո՛վ չգիտե անցյալը տառապելով ապրել, ո՛վ գտնվում է ներկայի կոպիտ փաստերի ազդեցության տակ, ո՛վ չգիտե կռահել և տեսանել ապագան: Ով ժամանակի մի մասով է ապրում, նա հավիտենականության տիպ չէ, նա ամբողջական էակ չէ, նա մարդաբեկոր է, հոգևոր թզուկ:

Հայաստանի կործանման բուն պատճառներից մեկը հանդիսացավ հայ ժողովրդի մի մասի կոպիտ ներկայապաշտությունը՝ «ոեալիզմը»: Դեռ այսօր էլ շատ հայեր հպարտանում են իրենց մտքի այդ տխուր առաքինությամբ: «Ես «ոեալիստ» եմ և գտնում եմ, որ Հայաստանը այլ ճակատագիր չէր կարող ունենալ, որ գաղութում բացի մեր ազգային մշակույթը և համրանքը պահելուց այլ բան չենք կարող անել, որ առանց մեծ մի ուժի աջակցության Հայաստանի վերանվաճման մասին խոսք լինել չի կարող և այլն., և այլն.»:

Այսպես է դատում «ոեալիստ»-ը, առանց մտածելու, որ Հայաստանը կարող էր այլ ճակատագիր ունենալ, որ

<sup>14</sup> Տպագրվում է որոշ կրճատումներով:

գաղութներում ո՛չ մի ազգային մշակույթ չի կարող զարգանալ և ո՛չ մի համրանք պահվել, որ առանց ռազմաքաղաքական ուժ ներկայացնելու՝ ո՛չ մի պետություն չի կարող մեզնով հետաքրքրվել: Հայկական «ռեալիզմ»-ը միշտ էլ եղել է և է՛ մեր ժողովուրդի տկարության պոչը, որ միշտ էլ քամվել է օտարից և արյունոտվել. նա մի՛շտ էլ հոգևոր մուր է ցանել մեր կյանքի վրա և ստվերոտել մեր պատմությունը:

Հայոց ողբերգությունը պայմանավորվում է այս ազգի մանր, միայն առօրյայի իմաստով գործնական խելքով:

Դարեր անընդհատ հայը ճարտարորեն հաց հանեց իր բարձրավանդակից և կշտացրեց իր ոսոխներին, մի վայրկյանով վտանգից խուսափելու համար՝ նա վար իջավ իր լեռներից և երկրի ռազմագիտական կետերը հանձնեց քյուրտերին, մի վայրկյանով ավելի հանգիստ ապրելու համար՝ նա բռնեց արտագաղթի ճամփան:

Ինչո՞ւ այսպես եղավ:

Հայը երկու բան չըմբռնեց - իր բարձրավանդակի արժեքն ու խորհուրդը և Մամիկոնյանների ցեղային կանչը:

Հայկական Բարձրավանդակը - իրոք դա ճանապարհ է, ասպատակող ցեղերի կարավանների ուղի՞, ինչպես կրկնում ու թոթովում է պարսվողական հայը, «ռեալիստ»-ը: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Դա նախ և առաջ բնական վիթխարի մի բերդ է և անառիկ բերդ: Օժտված հսկայակարկառ լեռնապատերով և բազմաթիվ վսեմատիպ կոներով՝ աշխարհը կարող էր զարկվել նրան և փշրվել, եթե ցեղի ոգին խոսեր այդ տիտանական բարձունքներից: Գեոստֆիական բարձր մի ճշմարտություն է, թե աշխարհագրորեն ամբողջական մարզերը ներկայացնում են բնական մի անհատականություն: Բնական

անհատականությամբ օժտված երկրներում կենսաբանորեն առողջ մի ցեղ կարող է քաղաքական ուրույն նկարագիր ստեղծել, որ ասել է՝ ո՛չ միայն ինքնապաշտպանվել, այլև՝ աշխարհակալել: Հայկական Բարձրավանդակը բնական մի անհատականություն է, ինչպիսիք են, օրինակ, Իրանը, Կենտրոնական Ռուսաստանը, Բրիտանական Կղզիները և այլն: Յուրաքանչյուր բնական անհատականություն ունի իր բնաբնեռը և իր բնակորիզը: Եթե այս կորիզը ազգագրորեն ամբողջական է, և տվյալ ազգը կենսահոգեբանորեն առողջ, նրա քաղաքական ուժի ծավալումը դառնում է անխուսափելի. ազգորեն առողջ օրգանիզմները մի շտ էլ ծավալվում են: Եթե այդ բնակորիզն ազգագրորեն խոցվում է, և տվյալ ազգը ի վերջո կործանվում, գիտցե՛ք, որ նա կենսաբանորեն և հոգեբանորեն փտախտավոր մի ընկերություն է եղել, ընկերային մի հավաքույթ միայն և ո՛չ թե ցեղական և առողջ մի օրգանիզմ. ազգորեն հիվանդոտ օրգանիզմները մի շտ էլ կծկվում են:

Այո՛, ահագին առավելությունների հետ Հայաստանի բնությունն ունի մի քանի թերություններ. օրինակ՝ իր գետային կենտրոնախույս սիստեմը, իր լեռնագոտիների ներանջատական մոլուցքը, իր եզերական կիրճերը: Հակահոս գետերը միշտ էլ առաջ են բերում տնտեսական և քաղաքական պառակտում: Օրինակ՝ Գերմանիայի և Ավստրիայի անջատումը պայմանավորվում է Հռենոս - Էլբա - Օդեր - Շպրեի (միով բանիվ հյուսիսարևմտընթաց ջրերակների) և Դանուբի (հարավ-արևելքընթաց) հակահոս ընթացքով: Բայց **ցեղերի հանճարը նրանում չէ, որ նրանք հարմարվեն միջավայրի բնական**

**պայմաններին, այլ որ այս պայմանները պատշաճեցնեն իրենց գոյությանը:**

Հայության ցեղորեն արթուն տարրի մեջ պատմական ամբողջական անցյալում նկատելի է պատշաճեցման այս ճիգը: Արաքսն ու Արածանին հակահոս են, բայց Այրարատն ու Տարոնը չշեղվեցին համահայկական ուխտից, և հայոց պատմության միակ փայլուն գիծը Տարոնի հայրենանվեր զինակցությունն է Այրարատին: Եվ այսքանը միայն: Ինչո՞ւ նույն ոգին չիշխեց բովանդակ բարձրավանդակում: Ինչո՞ւ հայր չկարողացավ հաղթահարել իր գետերի քմահաճույքը, իր երկրի ներանջատական բնությունը:

Պատճա՞ որ.

Հայր չհասկացավ Մամիկոնյանների ցեղային կանչը: Նա ապրեց ավելի իբրև ժողովուրդ, քան թե իբրև ցեղ:

Առաջին հայ անունը, որ հիշվում է Դարեհի արձանագրության մեջ, դա Դատարսեսն է, «Դարեհի ծառան», այսօրվա ըմբռնումով՝ «ռեալիստ» հայր:

Դավեր Տիգրան Մեծի շուրջը՝ գարշապարից և թիկունքից, որդիներից և ազգականներից:

Արշակունիները չկարողացան ազատվել, Փավստոսի որակումով՝ «շնաբերան» Փիսակներից, Հայր Մարդպետներից, Մերուժաններից:

Եղիշեի ասելով՝ իդեալիստ Մամիկոնյանների հետ Հայրենիքի համար ոտքի ելած «ուխտապահ» բանակի թիվը 66 հազար էր միայն, մինչ ռեալիստ հայերը 60 հազարով խախտեցին ազգային ուխտը:

Մամիկոնյանների վերջին օրհասական կանչին արաբների դեմ փոխանակ 180 հազար հայերի, արձագանքեցին միայն 18 հազար:

Եվ վերջապես մոտավոր անցյալում ճրագով չէի՞ն փնտրվում հայդուկները և ամեն քայլափոխում չէի՞ն հանդիպում ռեալիստը, կրավորականը, անտարբերը, ծաղրածուն, ողբերգուն, սարսափահարը, շահամոլը, խորամանկը, վախկոտը, հաշվետեսը և դավաճանը:

Այսօ՞ր. այսօր սակա՞վ են նրանք, որոնք ո՛չ միայն ցեղի կանչից են սարսափում, այլև «ցեղ» բառից:

Մարդն իր համար ճակատագրական մի անասուն է, կենդանական մի անցում, և նրա գոյությունը արժեք է ստանում միմիայն աստվածայինի հետ հաղորդակից դառնալու տենչով:

**Մենք չենք ճանաչում այլ կերպ և կամուրջ մարդու և Աստծու միջև, քան ցեղը:**

**Ցեղը՝ դա ո՛չ միայն Աստուծո շունչ է, այլև հավիտենականության ուղի:**

Կարելի է և առանց ցեղոգացության ապրել, բայց երբե՛ք ստեղծագործել հավիտենականության ճամփան, որով և պատմություն երկնել:

Հայոց պատմություն - դա երկունքն է արմենական ցեղի ոգու: Հայկական Բարձրավանդակի ճակատագիր - դա հետևանքն է հայ ժողովրդի հոգևոր ցեղաթափության:

Ի՞նչ ես մտածում, տարագի՛ր հայ:

Դեռևս դու շարունակում ես մնալ կես-ժողովուրդ, կես-ազգ, կես-ընկերվարական, կես-աշխարհաքաղաքացի փերեզակ: Դեռևս դու կես-«Ես» ես, կես-մարդ, կես-բարի և կես-չար:

Դու անկայուն ես, քմահաճ և փխրուն. դու դեգերում ես քեզնից դուրս, դու կորցրել ես ինքդ քեզ:

Ի՞նչ ասաց մարդկային հանճարը.

Գյոթենն ասաց.

«Կազդուրում դու ձեռք չես բերի, եթե նա չի բխում սեփական հոգուց»: Զննե՞լ էս հոգուդ խորին անդունդները, տեսնելու, թե ի՞նչ կազդուրիչ ուժեր կան այնտեղ քնած:

Գիտե՞ս ինչ բան է ցեղը՝ ոգուդ այդ օվկիանը անձանոթ: Մի օր խոռվե՞լ էս այդ օվկիանը, նայե՞լ էս երկնքին և գոյությանդ ամբողջական ուժով զարկե՞լ էս հոգուդ կայծքարը:

Լսե՞լ էս Մամիկոնյանների կանչը, դարձե՞լ էս գայրույթի աղաղակ. «Արթնացի՛ր, Հայաստա՛ն»:

Երբ հովիվն է քնած, գայլը կգրավի փարախը: Ցեղը քնած մնաց և Հայկ. Բարձրավանդակը դարձավ թշնամու տուն:

«Արթնացի՛ր, Հայաստա՛ն»: Գիտե՞ս ինչպե՛ս է արթնանում խայթված հպարտությունը, ինչպե՛ս հանկարծորեն մոխիրի տակից բորբոքվում է կրակը:

Կորած է այլևս Հայկական դատը. աշխարհը կարող է ասել՝ այո՛: Բայց մենք կասենք - Հայ, տո՛ւր ցեղորեն արթնացած մի սերունդ, զարկող ու զարկելով ստեղծագործող մի սերունդ, և պատմությունը քեզ պիտի վերադարձնի քո երկիրը:

«Ցեղ և Հայրենիք», 1936թ., թիվ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՃՐԱՎԱՆՊԱԿԻ ՊԱՅՔԱՐԸ

Հայկական Բարձրավանդակի դարավոր պայքարը մտել է նոր մի փուլի մեջ. խորացել են պատմական կնճիռները, խտացել են դարերի բոլոր զգացումները, բնեռացել են ցեղերի գոյության կռահումները. եռում է կյանքի կաթսան, և մոտ է ժամը, երբ նա կպայթի:

Պատմությունը հաճախ է երկրնտրանքներ հասունացնում. ժամանակ հոլովական գորույթը, իրերի տրամաբանությունը հաճախ են հարցերը հղկում և անհրաժեշտականության թափով ու երանգով դնում ազգերի առջև՝ «կա՛մ - կա՛մ»:

Ուր սուր հակասություններ կան, այնտեղ կա պատմական առաջընթացների հղություն, դրությունը հեղաշրջելու խռովք: Ուր իրարամերժ նպատակներ կան, իդեալների խաչաձևում, նաև կուտակված ատելություն, արյան հետքեր, նախճիրների հիշողություն, այնտեղ անխուսափելի է բախումը:

Հոգով սպառվածները կարող են մոխիր ցանել իրենց գլխին, հիմարները՝ «խաղաղություն» զառանցել, բուշնիկները՝ «հայկական հարցը լուծված» համարել, Բայց պատմությունն առօրյա տրամադրություններից տարբերվում է նրանով, որ նա քայլում է դարերի գծով:

Արի-արմենականների և մոնղոլ-թուրքերի հակամարտությունը՝ դա հազարամյակների ժառանգություն է: Հայկական Բարձրավանդակի պայքարը՝ դա դարերի առեղծված է:

Ի՞նչ է կատարվել մեր օրերին: Մեր օրերին այդ առեղծվածը մոտեցել է լուծումի:



Մի կողմից՝ Միացյալ Հայաստանի երազը, մյուս կողմից՝ թուրքերի պաշարած Այրարատը:

Մի կողմից՝ տարագիր հայերի ներգաղթի տենչը, մյուս կողմից՝ կիսամայի թուրքաց Հայաստանը:

Ստբի սովորական հակասություններ չեն սրանք, այլ՝ գոյության: Դատողության օրենքով չեն հասունացել դրանք, այլ՝ էության, բնագոյների, զգացումների հղության ուժով: Դասակարգերի, կրոնների, տնտեսական շահերի հակամարտություն չէ դա, այլ՝ հայրենիքների և ցեղերի:

Ի՞նչ է ասում իրերի տրամաբանությունը.

Խ. Հայաստանում մեկ քո. կմ.-ի վրա՝ 40, իսկ Հայաստանի թուրքապատկան նահանգներում՝ միայն 8 մարդ:

Հայկ. Բարձրավանդակի 84 առ հարյուրը՝ թուրք-թաթարներին, և միայն 13 առ հարյուրը՝ հայերին:

Կամ այն 8-ը, կամ այս 13-ը. երկուսից մեկը պիտի հաղթահարվի:

Ի՞նչ է ասում ոգիների տրամաբանությունը.

«Արթնացի՛ր, Հայաստա՛ն»:

Հայ ժողովրդի ողբերգությունը նրանում է, որ արև է երգում («Արեգակն արդար»), բայց քնամոլ է («Ի ննջման է ծանրության»), իդեալիստ է, բայց դրամատենչ, հայրենասեր է, բայց անձնապաշտ, իմացական է, բայց ոչ կոսահող, խելք ունի, բայց ո՛չ երևակայություն, սիրում է գիտությունը, բայց ծուլանում է նրանից օգտվել, գոռոզ է, բայց հարմարվում է նվաստությանը, քաջ է, բայց խորտակումի զգացում չունի, խիստ է, բայց անկարգապահ, երագատես է, բայց ներկային գերի, ուժի պաշտամունք ունի, բայց ոչ հզորության կամք, կենսաբանական գործենականություն ունի, բայց ոչ կազմակերպական

հակում, մշակութային տենչ ունի, բայց ոչ քաղաքական կորով, արդարամիտ է, բայց ոչ ճշմարտասեր, ցեղ է, բայց գերադասում է ժողովրդի բարոյականը: Զգացումների շփոթ է հայ ժողովուրդը, շուտ եկած էություն:

Իսկ թուրքը - դա հայ ժողովուրդի հակապատկերն է՝ կենսաբանական տկարություն և ուժի ծարավ, անհանճար ոգի և քաղաքական կամք, անմաքուր սիրտ և գրավիչ լեզու, բուրք միտք և կարգապահական հակում, վախի զգացում և խորտակումի մոլուցք:

Հայը խորքով է արժեքավոր, թուրքը՝ մակերեսով, նա էությունը է բարձր, սա՝ արտահայտության ձևով: Հայը հոյակապ ցեղ է և անպիտան ժողովուրդ, թուրքը ստորին ցեղ է և սքանչելի ժողովուրդ:

Խանդավառվե՞նք, երբ Հայկական Բարձրավանդակում հայերը դեռևս համեմատական մեծամասնություն են կազմում:

Ընկճվե՞նք, երբ Անատոլիան թուրքերի համար մարդկային շտեմարան է, երբ թուրք և թաթարները հայերից 5-6 անգամ ավելի են, երբ թուրքերը պետություն ունեն և բանակ: Առարկայական տվյալներ են սրանք, որոնք կարող են և՛ բախտորոշ դեր խաղալ, և՛ մոխիր դառնալով՝ քամուն տրվել:

Ժողովուրդը՝ դա միշտ էլ ներկայապաշտն է, իդեալի և մեծագործության թշնամին, որ իր հացի հետ օրվա մանր փաստերն է ծամծմում: Դա անհավատ «ոռալիստ»-ն է, որ չի հասկանում հակասությունների ուժը՝ հեղաշրջված ոգին հեղաշրջում է փաստերը և նրանց դասավորումը:

Տայքի Շտե գյուղում Վահան Մամիկոնյանը 40 զինվորներով ոչնչացրեց թշնամու 4000-անոց գունդը:

Թուրքիայում հաճախ մի քանի կիսասատակ ոստիկաններ հայկական զանգվածները քշեցին դեպի արքունի զարհուրանքը:

Պատմական գործոնների խառնուրդը մի բան է, որից թվագիտությունը ուղիղ եզրակացություն հանել չի կարող:

Հաղթում է ո՛չ թե նա, ո՛վ փաստերի և նրանց հետևանքների մասին է մտածում, այլ նա, ո՛վ գործում է և եզրակացությունը թողնում պատմությանը:

Թվով սակա՞վ ենք - բայց ահա՛ գիտությունը, որ կրկնապատկում է մարդկային ուժերը:

Հոգով տկա՞ր ենք - բայց ահա՛ արմենական ցեղը, որ կենսաբանական ուժի անսպառ աղբյուր է, կորովի շտեմարան:

Մինչև այժմ ինչո՞վ հաղթեց մեզ թուրքը. իսլամի, քյուրտի, Եվրոպայի հակամարտության, գերմանացիների, դաշնակիցների, բոլշևիկների միջոցով:

Ինչո՞ւ այս բոլորը թուրքին նպաստեցին. որովհետև մեր մեջ արմենական ցեղը չտեսան, այլ՝ հայ ժողովուրդը:

Ի՞նչ է հայ ժողովուրդը. դա մի բան է, որին Բեռլինի Վեհաժողովում խղճահարությամբ ծաղրում են և դեռևս տասնյակ տարիներ նրանից քրիստոնեական վշտով լեցուն հառաչագրեր ստանում, որին դարեր անընդհատ խոշտանգում են և օսման սահմանադրության օրը մի ժպիտով սիրտը գրավում, որին անկախություն են խոստանում և կոտորել տալիս, որին թուրքերի օժանդակությամբ խորտակում են և մոլեռանդ բոլշևիկ դարձնում, որին Լոզանում ձեռնունայն դուրս են նետում և անպատիժ մնում, որին ներգաղթ են խոստանում և իր

հոգևոր հայրենիքից, իր ցեղային բարոյականից և իդեալներից կտրում:

Եթե այս ժողովուրդն է, որ իր քաղաքական հիմարությամբ, իր հոգու աղքատությամբ, իր կոտորված կամքով, իր մանր հաշիվներով, իր հատվածական տրամադրություններով, իր եսականությամբ, իր անկայուն բարոյականով, իր զգացումների խեղճությամբ, իր սրտի ծուռ բաղձանքներով, վաղվա օրհասին, կանգնելու է թուրքի առջև՝ Հայաստանի կնճիռը հիմիկվանից լուծված համարեցեք. նա հավիտենական Թուրան է, Թուրանի կամուրջը և միջնաբերդը:

Բայց կա՛ արմենական ցեղը, որ այսօր իր բոլոր դարերի խռովքն է ապրում. հավիտենական ա՛յն ուժը, որ այսօր, թե՛ վաղը պիտի վարարի մեր էությունը:

Արժեքների ուսմունք չէ դա, այլ՝ ինքնահզորացման տենչ: Քաղաքական դեգերում չէ դա, այլ՝ ոգու կենտրոնացում: Խնդրանք չէ դա, այլ՝ հրաման: Նահատակության քարոզ չէ դա, այլ՝ կենագործումի կամք: Ճակատագրին հնազանդվելու պատգամ չէ դա, այլ՝ պայքարի կարոտ: Նահանջ չէ դա, այլ՝ հարձակում:

Հասունացել է Հայկ. Բարձրավանդակի առեղծվածը և վերջին, օրհասական կոիվը անխուսափելի է:

Ո՛վ պիտի հաղթանակի: Նա՛, որ իբրև ժողովուրդ ավելի ընդունակ է ինքնահաղթահարումի:

Ցեղի կամքից հաղթահարված ժողովուրդ՝ դա ո՛չ միայն ոգու անոթ է, այլև՝ կենդանի ուժակիր, ո՛չ միայն պատմագործ հանճար է, այլև՝ հաղթանակի սուր:

«Ցեղ և Հայրենիք», 1936թ., թիվ 3

## ՎՏԱՆԳԻ ԳԻԾԸ

*Թուրքերը տիրելով Փոքր Ասիային, Հելլեսպոնտոսից (Բարդանել) անցան Թրակիա, մտան Բալկաններ, խորացան մինչև Կենտրոնական Եվրոպայի դռներ, առանց ձեռք տալու Վոսֆորի շուրջը խցկված Բյուզանդական «կայսրությանը»: Նրանք նույնիսկ խնամհական-բարեկամական կապեր հաստատեցին Բյուզանդական կայսրերի հետ: Գրեթե մեկ դար (93 տարի) թուրքերն իրենց տիրապետության կենտրոնում հանդուրժեցին Բյուզանդական կայսրության այդ կղզյակը՝ մի օր էլ (1453թ.) խորտակելու նրա պարիսպները և կայսրերի մայրաքաղաքում սուլթանների գահը հաստատելու:*

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Եթե մի բուլշևիկի հարցնենք, թե ինչ է կատարվում Խ. Հայաստանում, նա կպատասխանի՝ չտեսնված շինարարություն:

Իսկ եթե լուրջ մի պատմագետի հարցնենք, թե ի՞նչ է կատարվում Խ. Հայաստանի շուրջը, նա կպատասխանի՝ այնտեղ քաշվում է դեղին այն պարիսպը, որ մի ժամանակ թուրքերը քաշեցին Բյուզանդիոնի շուրջը:

Այն ժամանակվա Բյուզանդիոնի սահմաններն էին. արևելքից՝ Թուրքիա, արևմուտքից՝ Թուրքիա, հարավից՝ Թուրքիա, հյուսիսից՝ գրեթե Վոսֆորի լայնությամբ մի գծով՝ Սև ծով: Խ. Հայաստանի սահմաններն են. արևելքից՝ կովկասյան Թուրքիա (Ազրբեջան), արևմուտքից՝ Թուրքիա, հարավից՝ Թուրքիա և թուրք-թա-

Թարական Ատրպատական, հյուսիսից՝ Լոռվա ձորի լայնությամբ մի գծով՝ Վրաստան:

Մինչդեռ թուրքերը դարանակալում էին, բյուզանդացիք զբաղված էին աստվածաբանական վեճերով, և օրհասական վայրկյանին Վոսփորից ո՛չ օգնություն ստացան, ո՛չ էլ փրկության ելք:

Այսօր նույնանման օղակի մեջ ընկած հայերը վիճում են քաղաքական օրհենտացիաների և ընկերային խնդիրների մասին, կրքեր են հրահրում և դավեր նյութում, առանց մտածելու, որ Լոռվա ձորի ճամփան կարող է մի օր փակվել:

Այս երևույթի բուն պատճառն այն է, որ մենք սիրտը թողած՝ զոռ ենք տալիս խելքին:

Բայց խելք, որի մեջ սիրտ չկա, կենսաբանորեն ի սպառ անպետք է: Դա մտքի այլասերում է և հոգևոր վայրէջք:

Ամեն բանից ավելի՝ մեզ պետք է ոգու նոր հղություն, ցնցում և խոռվք:

Հայաստանի առեղծված՝ հայոց գոյության առեղծված՝ սրանք ցեղի կնճիռներն են և ո՛չ թե այլասերված մտքի:

Այլասերված միտքը՝ դա անարյուն ճարպիկությունն է, փերեզակների զենքը, ապահովության խաբկանքը:

Ցեղը՝ դա վտանգի կռահումն է, կենսաբանական թափը, հաղթանակի կարոտը:

Հաղթանակ երազել՝ նշանակում է կանխազգալ վտանգը: Վտանգի գիծը՝ դա հաղթանակի կամուրջն է:

«Ցեղ և Հայրենիք», 1936թ., թիվ 1

թվայնացրել է 1915.ինտո նյութ

## ՄԵՐ ՕՐԵՐԻ ՏԱԳՆԱՊԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ<sup>15</sup>

Կա կրոնական, բարոյական, գաղափարական ընդհանուր տագնապ: Թվում է, թե կրոնը դադարել է քաղաքական գործոն լինելուց: Բայց դարավոր հավատալիքները ստեղծում են կյանքի համար բախտորոշ համոզումներ: Մասնավորապես՝ քրիստոնեությունը մեր ժամանակներում ապրում է անթրոպոմորֆիզմի՝ մարդակերպացումի շատ նշանակալից մի առաջընթաց: Խզվել է ընդհանուր կապը, բայց հին համոզումները կենդանի են ազգերի մեջ, և դրանցից յուրաքանչյուրը իր կրոնն է կառուցում «ըստ պատկերի յուրում»<sup>16</sup>: Թեպետև գոյություն ունի, օրինակ, պապական աթոռ, բայց անգամ կաթոլիկ ազգերի համար չկան այլևս քաղաքական կշիռ ունեցող ընդհանուր դոգմաներ: Բարոյական միություն չէ նաև իսլամը: Մա էլ չունի այլևս ընդհանուր և հեղինակավոր կենտրոն: Այստեղ էլ կրոնական համոզումները գնում են ազգային անհատականացման գծով: Չկան այլևս միջազգայնորեն ազդեցիկ քրիստոնեություն, իսլամություն, բայց կան քրիստոնյա, իսլամ ազգեր: Այս երևույթը անզգալաբար<sup>17</sup> նոր շեշտ և ուղղություն է տալիս քաղաքականությանը, որ այլևս նույնիսկ ձևականորեն չի ընթանում ընդհանուր սկզբունքներով, այլ՝ զուտ ազգային տրամադրությամբ:

Միսլալ հասկացողության արդյունք են նաև մշակութային-տնտեսական «կապեր»-ը: Տնտեսական գործու-

<sup>15</sup> Տպագրվում է որոշ կրճատումներով:

<sup>16</sup> ըստ իրենց պատկերի

<sup>17</sup> հետզհետե, կամաց-կամաց

նեության մի ձևն է միայն իր բնույթով միջազգային՝ առևտուրը, որը ընթանում է մրցության սկզբունքով: Դրա հանդեպ մշակույթը՝ որպես ոգու արտահայտություն, զուտ ազգային որակ է: Մշակույթը էության հայտնությունն է. յուրաքանչյուրին հարազատ է միայն ի՛ր էությունը: Չկա՝ համամարդկային մշակույթ, կա՝ միայն ընդհանուր քաղաքակրթություն, որ ոգու և զգացումի տարածում չէ, այլ՝ մտքի և ձեռքի ստեղծած բարիքների, ձևերի:

Անգամ կրոնը զուտ մշակույթ չի տարածում, այլ՝ բարոյական նորմեր և կենսահայեցողություն: Եվ դա մշակույթ չէ, այլ արդյունքներից և միաժամանակ ազդակներից մեկը մշակութաստեղծ ոգու: Այդ պատճառով էլ իր հարուցած ապրումներն այնքա՛ն այլազան և տարբերաչափ են, որքան ազգային և անհատական «Ես»-ի ստեղծած մշակութային որակները:

Ազգային կամ անհատական անձնավորության կնիք է կրում անգամ իմաստասիրական-գիտական մտածումը: Իր արդյունքներով էլ փիլիսոփայությունը դեռ չհանգեց գաղափարների ընդհանրության կամ իմացական մոնիզմի<sup>18</sup>:

Մարդկային իմացականությունն էլ ընթանում է մտավոր բազմաձևության գծով: Այսօր կան գիտական բազմաթիվ սիստեմներ, անթիվ ճշմարտություններ, վարկածներ՝ գոյության հիմքերի, կյանքի իմաստի, թե բարոյականի մասին: Դեռ չկա աններհակասելիորեն ներածա-

---

<sup>18</sup> Փիլիսոփայական համակարգ, որ գոյության նախապատճառն է համարում միայն մեկ սկիզբ՝ կա՛մ մատերիան, կա՛մ հոգին:



կան մի բնագանցություն<sup>19</sup>, որով՝ ընդհանրաբժեք և հանրապարտադիր մի աշխարհայեցողություն, բարոյագիտություն, ընկերային դավանանք: Կրոնական զգացումի, զուտ մշակութային որակների, քաղաքական-տնտեսական շահերի այլազանության հետ՝ ահա՛ նաև իմացական ըմբռումների, գաղափարների, ճշմարտությունների և բարոյական չափանիշների քառս:

Իմաստասիրական մտածումի բազմազությունը իր կնիքը դրել է նաև ընկերաբանության, ուստի և հասարակական շարժումների վրա: Սոցիոլոգիան չընծայեց գիտականորեն անժխտելի ճշմարտություններ, այլ՝ միայն տեսություններ: Անձանոթ է մնում պատմական կամքի խորհուրդը և գիտականորեն աննախատեսելի՝ նրա ուղղությունը: Այդ պատճառով էլ հասարակական շարժումները չունեն գաղափարական միասեռ խորք և նրանցում գործում է նաև «երազների տրամաբանությունը»: Իսկ երազները մի՛շտ էլ կրում են անձնականության դրոշմ: Մասնավորապես Եվրոպայում միմյանց դեմ մահու և կենաց պայքար են մղում դեմոկրատիզմը, ռասիզմը<sup>20</sup> և բոլշևիզմը...

Այս ուղղություններից դեմոկրատիզմը, իր խորքում հենվում է «կամքի ազատության», բոլշևիզմը՝ «նյութա-

---

<sup>19</sup> Դիալեկտիկային հակադիր իմացաբանական մեթոդ, որ երևույթները դիտում է անկախ նրանց կապից ու պայմանավորվածությունից, հակասություններից, փոփոխումից ու զարգացումից, մտահայեցողական ու դժվարըմբռնելի դատողություն, միտք և այլն:

<sup>20</sup> Այստեղ և հաջորդիվ «ռասիզմը»-ը Հայկ Ասատրյանի մոտ կրում է «առողջ ցեղապաշտություն» իմաստը և համահունչ չէ ռասիզմի ժամանակակից վարկաբեկվող ընկալմանը:

պաշտական դետերմինիզմի», ռասիզմը՝ «կենսաբանական հավիտենականի» վրա: Բնագանցական այս ըմբռնումներով որոշվում է այս գաղափարաբանությունների հասարակաբանական արժեքը և նրանց գործնական բարոյականի նկարագիրը:

Դեմոկրատիզմը անգոր է ստեղծել իշխանության կենտրոնացում, որով և՛ ազգային ոգու լիագումար ամբողջացում: Որպես իրավախոհական ուսմունք, նա չի կարողանում վերացնել պետության, ժողովրդի, դասակարգերի փոխհարաբերությունների հակասությունները: Նա պառակտյալ մասերի գումար է և ո՛չ թե օրգանական միություն: Որպես «իրավունքի» և «ազատականության» հին վարդապետություն՝ նա, անշո՛ւշտ, ստեղծել է ավանդություններ և քաղցր նախապաշարումներ («պարլամենտ», «ընտրություն», «քաղաքացիական ազատություն», եվն.), բայց իրենց խորքում դրանք կոմպրոմիսներ են խղճմտանքի հետ, որով՝ հարմար անոթներ գաղափարաբանական պատեհապաշտության և քաղաքական բախտախնդրության: Այս տեսակետով էլ երբեք զարմանալի չէ, որ անգլիական պահպանողականությունը ձեռք է երկարում «քրիստոնեական բարոյականը և մարդկային ազատական հասարակարգը խորտակող բոլշևիզմին»: Դա համապատասխանում է «իրերի տրամաբանությանը». դեմոկրատիզմը և բոլշևիզմը էակից են. տարբերությունը նրանց միջև որակական չէ, այլ՝ քանակական, բարոյական չէ, այլ՝ քաղաքական, հոգևոր չէ, այլ՝ տնտեսական, բովանդակային չէ, այլ՝ ձևական: Այսօր դեմոկրատիզմը բարոյական զենքն է անգլոֆրանսական այլացեղ և աշխարհագրորեն ցրված կայսրությունների տիրապետական քա-

դաքականության, բոլշևիզմը՝ այլացեղ, բայց աշխարհագրորեն միազանգ ռուսական պետության: Առաջինը ձգտում է մարդկությունը նվաճել բարոյական «կատեգորիա»-ներով, երկրորդը՝ տնտեսական երջանկության հեռանկարներով: Նա ներկայանում է ամբոխի բոլոր խավերի առաջնորդը, սա՝ նրա մի դասակարգի: Նա հաշվի է առնում պատմական ընդհանուր զարգացումը և շեշտը դնում քաղաքականության վրա, սա՝ մեկնում է հասարակաբանությունից և քաղաքականությունը երանգավորում է «ընկերային նպատակներով»: Դեմոկրատիզմը մտածումի անսկզբունքություն է, բոլշևիզմը՝ բարոյական կյանքի: Երկուսն էլ չեն խոստանում ոգու, բանականության, սրտի, կամքի, բարոյական զգացումի ներդաշնակություն, որով՝ անհատի և հասարակության, ազգի և պետության, ժողովրդի և դասակարգի օրգանական միություն:

Այդ հակասությունները վերացնելու և օրգանապես միացյալ ազգություն, ընկերություն, պետություն ստեղծելու ձգտում ունի ռասիզմը: Ցեղն է այս շարժումի էաբանական խորքը, ուստի դա չի հենվում միայն սոցիոլոգիայի կամ պատմության վրա, այլ հաշվի է առնում կյանքի բովանդակ ծավալը և մղվում դեպի կենսաբանական մի մետաֆիզիկա: Նա դավանում է ցեղային ոգու հավիտենականությունը, և պատմություն, մշակույթ, ընկերային կազմակերպություն, պետություն և այլն. համարում նրա հայտնությունը: Հավիտենականության կենսաբանական ըմբռնումը նրան ընծայում է ցեղի՝ ոգու և արյան՝ անցյալի, ներկայի, ապագայի օրգանական միության զգացումը, և պահանջ է դարձնում ապ-

րող հասարակության կյանքի կազմակերպումը՝ ըստ այդ զգացումի:

Այստեղ էականը դասակարգային խնդիրը չէ, այլ՝ ոգեկան ուժերի և արժեքների նվիրապետությունը: Այստեղ ամեն ինչ ստորադասվում է ցեղի հավիտենականին և համակարգվում որպես խղճմտանքի, անձնական շահի և հասարակական նպատակի ներդաշնակություն: Դրանով ստեղծվում է հավիտենանպատակ, որով՝ ամբողջական մարդը և ազգային հասարակությունը: Այստեղ չկան համամարդկային խարխափանքներ, անցեղ ընկերության երազանքներ, ո՛չ էլ ներազգային դասակարգային հակամարտություններ: Ցեղն է բոլորի ճակատագիրը, և բոլորը գործում են նրա համար:

«Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 10

# ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ելակետ

Մոտենում են մեր ազգային աղետի՝ Մեծ եղեռնի քառորդ դարը և քաղաքական անկումի՝ Հայաստանի Հանրապետության կործանման 20-ամյակը:

Ստացած հարվածներից հետո դեռ մնում ենք անկյալ՝ հոգով, բարոյականով, մտածումով: Օրեցօր ավելի է վատթարանում կացությունը: Բաժան-բաժան եղած, մասնատված Հայրենիք և աշխարհագրորեն ցրիվ եկած, հոգեբանությամբ հատվածականացած ժողովուրդ: Իրականության ստեղծած վտանգներին, կազմալուծման առաջընթացին կարելի պիտի լիներ դիմագրավել մեկ բանով՝ բարոյական ուժերի զինահավաքումով: Բայց հայ ոգին մնաց քայքայված: Ամեն ոք մանրացավ իր հին մտքերի փշրանքների հետ. հայ մարդը պառակտվեց որպես «ես», որպես ընկերության անդամ:

Հակառակ ներքին փոթորիկների՝ նա եղավ տկարության ծարավ, հաշտվեց այն մտքին, թե ինքն այլևս պատմաստեղծ գործոն չէ: Մոռացվեց արտաքին ճակատը, քաղաքական գործը, և ամեն բան ընթացավ ներքին պայքարի գծով:

Ազգովին վտանգված ենք երկրում, երկրից դուրս: Երկիրը քաղաքական նվաճումներ չարեց, տարածությամբ չընդլայնվեց, ո՛չ էլ դարձավ հայրենիք բոլոր հայերի: Գաղութներում աշխարհագրական ցրվածությունը զուգահեռվեց հոգեբանական ցրվածությունը: Հայությունը բարոյական ամբողջության, քաղաքական կամքի վերա-

ծելու հիմնական աշխատանք չտարվեց: Դեռ այժմ էլ կազմակերպված չէ համահայկականության գործը՝ որպես պրոպագանդ, որպես կազմակերպական մեքենա:

Ազգովին վկայվում է, որ ընդհանուր է քայքայումը: Մեր լեզուն շարունակում է ստեղծել նվաստություն, անկում և հոռետեսություն ախտանշող որակումներ՝ «խլեակ»<sup>21</sup>, «անհայրենիք», «բեկոր», «մնացորդ» և այլն., որոնցով բնութագրվում են օրվա հայի հոգեվիճակը, ճակատագիրը, նրա բարոյական և քաղաքական բովանդակությունը:

Ո՛չ միայն հայրենատեր դառնալու, այլև երկիր վերադառնալու խոսքն անգամ համարվում է «երազատեսություն»: Լքվեց անգամ «ներգաղթ» կոչված քաղաքական մեքենայությունը: Գաղութահայությունը մի վայրում ամփոփելու, ազգային կյանք և հայ հասարակություն ընծայող մի կայան ստեղծելու փոխարեն՝ մենք շարունակում ենք ենթակա մնալ ցրիչ ուժերի քմահաճույքին, մեր սեփական անգորության զգացումի նախապաշարումներին:

Կան մանր երազներ, պատրանքներ, մանր գործեր և ինքնախաբեություն սնուցող անպտուղ ոգորումներ, բայց չկա՝ հայ հասարակություն, որով՝ հոգևոր, բարոյական կազմակերպություն և իշխանություն. չկա՝ մշակութաստեղծ իրական ճիգ, վերադաստիարակչական տրնություն, ո՛չ էլ քաղաքական կամք և լուրջ գործ:

Խոսքի և գործի կատարյալ անհամապատասխանություն, հակասություն: Ավերիչ, կազմալուծող հատ-

---

<sup>21</sup> վերապրած բեկոր, մնացորդ

վածականություն, ամուլ դավանամուլություն, մտքերի լճացում, տեսակետային նախապաշարումներ, պատմական սպանիչ հիշողություն, հարանվանական խտրականություն, իրենք իրենց մեջ ճեղքված, բարոյական տկարությունից թայֆայականացած կազմակերպություններ: Ազգային կամքի, ազգարժեք գործի, ցեղային դավանանքի բացակայություն: Ընդհանուր անկազմակերպ վիճակ: Չկա՝ գիտական վերարժեքավորում անցյալի, հոգեգիտական մոտեցում ներկայի, ոչ էլ մշակված հայեցողություն Հայաստանի ապագայի և Հայկական դատի զարգացման նոր ընթացքի, մղումի, ուղղության մասին: Անձնանպատակ մտավորականություն, տեսակետների և տրամադրությունների պղտոր, կրքոտ և ատելավառ քառս: Զգացումների հակամարտություն, նպատակների և գործերի խաչաձևում: Միության ոգու կատարյալ անկում: Ուժի զգացումի սպառում: Ժողովրդի բարոյական հետադիմություն, նրա թվի նվազում: Տնտեսական, որոշ երկրներում նաև քաղաքական օրավուր անտանելի դարձող պայմաններ: Ամեն հայ լքված, թողված է իր բախտին:

Չկա՝ ազգային կազմակերպված մատակարարություն մեր կյանքի և ո՛չ մի մարզում: Նաև՝ պատասխանատվության զգացում և պահանջ: Եկեղեցու անկում և հոգևորականության բարոյական աղքատություն: Դպրոցների խեղճություն, կրթական սիստեմի պակասավորություն կամ չգոյություն, դաստիարակության անբովանդակություն կամ ցեղային գծի պակաս: Որոշ երկրներում նաև հալածանք, խափանում հայ դպրոցի, կրթության, մշակույթի:

Ամեն գաղութ լքված, թողված է իր բախտին: Բարոյական կապի խզում անհատների և խմբակցությունների միջև: Ընդհանուր ճակատագրի զգացումի աղոտում: Հին և նոր սերունդների անհասկացողություն: Նոր սերնդի լուրջ և համապարփակ կազմակերպության չգոյություն: Ժամանակի ոգու անտեսում - անցեղաճանաչություն: Ստրկականություն՝ փոխառիկ գաղափարների, օտար մաշված մտքերի, ճշմարտությունների նկատմամբ: Այլասերումի կամ առնվազն քաղաքականապես անարժեք, աննպատակ և անգործ մնալու վտանգ: Ահա՛ օրվա հայ իրականությունը, վտանգի և անտարբերության մղձավանջը:

Գիտեն բոլորը, խոստովանում, ահազանգում, գրում են բոլոր հոսանքներին պատկանող գործիչները, թե ընդհանուր է քայքայումը, թե աննախընթացորեն վտանգված ենք որպես համրանք, որպես ազգային դիմագծություն, որպես տնտեսական կարողություն, որպես քաղաքական ուժ և ազդակ: Բայց և այնպես՝ ո՛չ թե ազգովին ստեղծագործ ելքի մասին խոսք և մանավանդ գործ չկա, այլև կույր թշնամանք՝ ցեղահոգ և հայրենահոգ անհատների կողմից եղած վերանորոգչական ճիգերի հանդեպ:



# Ներքին պատճառականություն

Կորած է որևէ ժողովուրդ, որ ծառայում է կուռք դարձած անկենսաբանական նախապաշարումների:

Կենսաբանորեն առողջ և մտածումի բարոյականով օժտված մարդիկ գործում են ո՛չ թե բնական նախապաշարումներով, այլ՝ գոյզացությամբ: Ոգի՛ն է օգտագործողը բնության (որով աշխարհագրական դիրքի), նա՛ է ստեղծում և՛ գոյության խորհուրդը, և՛ կովին ծառայեցնում կրոնը, գիտությունը, համոզումները, տեխնիք միջոցները: Բախտորոշը կյանքում ոգու զորութենականությունն է, խառնվածքը: Բարոյական նվաճում և ընկերակում<sup>22</sup>, քաղաքական հաղթանակ և պարտություն նախևառաջ հետևանք են ոգու խառնվածքային «թերի»-ների և «առավել»-ների: Պատմաստեղծումի արվեստը խորագույն իր հիմքում հոգեգիտություն է: Այս գիտությանն անտեղյակ էինք մենք. նրան խորքով ծանոթ չենք և՛ այսօր:

Ահա՛ մեր աղետների ներքին պատճառականությունը.

ա) Ազգային ոգու խաթարում - արդյունք ժամանակների այլասերիչ ազդեցությունները հաղթահարելու կամքի պակասի, որի հետևանքները եղան՝ հատվածականությունը, հարանվանական չարիքը, պարտվողականությունը, օտարահակությունը և այլն, և այլն, ուր իրար հանդիպեցին հայության եսականությունը, կրավորականությունը, ամեն կարգի փրկություն օտարնե-

---

<sup>22</sup> Ենթադրաբար՝ ընկրկում:

րից սպասելու հոգեվիճակը, անարժեքության, նվաստության զգացումը, շրջապատի բարբարոսությունը և եվրոպացիների շահադիտությունը:

բ) Անինքնաճանաչություն - արդյունք ցեղային հայեցողության չգոյության և պատմության ու պատմա-խմաստասիրության լուրջ ծանոթության պակասի, ի մասնավորի, մեր պատմական կյանքը վարող հոգևոր-իդեական ուժերից օգտվելու անընդունակության:

գ) Իշխանության զգացումի պակաս - արդյունք՝ գոյավար ուժերի խաթարումի և հետևանքը՝ քաղաքական-գաղափարական-հոգևոր անիշխանության, նվիրապետական և հեղինակավորապաշտական բարոյագծերի անկում և շուտ զինաթափվելու տկարություն:

դ) Ճշմարտության զգացումի խաթարում, որ ճակատագիրը շոշափող հարցերի, դժբախտությունների պատճառների մեկնաբանումի մեջ՝ հային մղում է անկենսաբանական մոլորանքների - մի բան, որ ի վերջո հանգել է նկարագրի խաթարումի, մտածումի անբարոյականության, իրատեսության և կամքի պակասի: Օրինակ, հայը իր ձախողանքի պատճառները վերագրում է երկրի բնության (իրականում՝ անառիկ) աշխարհագրական դիրքին (իրականում՝ սահմանված ո՛չ թե ոտից կոխան դառնալու, այլ՝ աշխարհակալելու), արտաքին ազդակներին (բայց ո՛չ իր անընդունակության՝ դրանցից նպատակահարմարորեն օգտվելու):

ե) Բարոյական կորուվի պակաս, որի պատճառով ո՛չ միայն կյանքի առօրյայում, այլև հաճախ բախտորոշ վայրկյաններին ասպարեզ է ընծայում թերուս, հատվածականացյալ, կեղծ եվրոպականություն կրող տարրերին, որոնք մի շտ էլ հանդիսանում են զանգվածի

ուշադրությունը էականից հեռացնող, նրա կրավորականությունը և նպատակի անորոշությունը սնուցանող ներքին ազդակ:

զ) Ընդհանրապես գիտական ոգու, գիտականության պակաս, որի պատճառով թերի եղավ մեր վերածնունդը, և անհաջող անցավ դրան հաջորդող հեղափոխությունը: Դրա պատճառով կարելի չեղավ գիտականություն դնել մեր պայքարի մեջ, անգամ մեր երկիրը ռազմագիտորեն, ազգագրորեն, տնտեսապես լրջորեն ուսումնասիրել - մի թերի, որի հետևանքով մեր հեղափոխությունը, հակառակ իր հերոսների գերմարդկային նվիրվածությանը, չկարողացավ օգտվել ինչպես ցեղի հոգևոր ուժերից, այդպես էլ՝ Հայրենիքի աշխարհագրական կարելիություններից:

ե) Ցեղային դավանանքի, պատմագագացողական, կենսաբարոյական հայեցողության պակաս, որի հետևանքով ղեկավար մտավորականությունը անհաղորդ մնաց իր ցեղի պատմագործ ուժերին և ո՛չ իր ժողովուրդը հոգեգիտորեն ճանաչեց, ո՛չ մեր հարևանները, ո՛չ էլ աննախապաշար պատկերում ունեցավ իր ժամանակի աշխարհի քաղաքական և ընկերային շարժումների մասին:

ը) Պատմական զգացումի պակաս, որի վատթարագույն հետևանքներն են՝ դեգերումը օտար ճշմարտությունների ետևից և պատասխանատվության խնդրի անտեսում: Հայ կյանքում չկա՝ նպատակի իշխանություն և գործնական ուղու ընդհանրություն: Հայությունը բազմանպատակ է, բազմուղի, որ ազգային տեսակետով ասել է՝ աննպատակ, անուղի: Այս հոգեգծերի պատճառով ղեկավարը մնում է անպատասխանատու, իսկ ժո-

դովուրդը՝ գուրկ իրական ղեկավարությունը ճանաչելու ընդունակությունից:

թ) Հոգևոր կյանքի ծայրայեղ տկարացում, որի հետևանքներից են արժեքների նվիրապետության և սրբության զգացումների խաթարումը, եսականության շեշտումը, երջանկության իդեալի անձնականացումը և առօրյայով ապրելու գոհունակությունը:

ժ) Տեսական խղճմտանքի պակաս, որի պատճառով վերացած է մտածումի և խոսքի բարոյականը, որով և՛ փոխադարձ վստահությունը և կուլտուրական ստեղծագործության հավաքական շինարարության հնարավորությունը: Ստեղծվել է հոգեբանական մի մթնոլորտ, որին միայն հիվանդոտ կասկածամտությանն է թևավորում և մի ոճ, որ ծառայում է մի բանի՝ ժխտողականության, ճշմարտություններ [...] <sup>23</sup>: Կենսարժեք ճշմարտությունների հանդեպ գործնական մեթոդ է դարձել տգետ ձևանալ կամ տգիտությունը ծածկել փայլուն տարազներով: Սովորական երևույթ է՝ էականի դեմ անկարևորը հանել, շարժումների դեմ ճակատ ստեղծել, անգործությունը և ժամանակի ունայնագործումը երկդիմի <sup>24</sup>, թեական բանաձևերով արդարացնել:

Որոշ տարրեր սնվում են նպատակի խաբուսիկությամբ և դրանով էլ աննկատ թողնում միջոցների, ուղու, աշխատանքի մեթոդի պակասը:

ժա) Պարտվողականություն, որը շեշտվեց մասնավորապես ազդեցությամբ վերջին աղետների, որոնց հիշատակները շարունակում են հայի մտածողության մեջ

---

<sup>23</sup> անբնթեոնելի

<sup>24</sup> երկիմաստ

անուցանել տկարության, պարտության ճակատագիրը սեփական ուժերի ներգործությամբ փոխելու անկարողության զգացում:

Ժբ) Անլիարժեքության զգացումի տիրապետում, որ հող գտավ մեր ապրած աղետների, կոտորածների, պարտության, տարագրության և սրանց կապված նվաստացուցիչ հիշողությունների պատճառով:

### Խտացում

Հայ կյանքի ժամանակակից տագնապի ենթակայական գլխավոր պատճառներն են իդեական ոգու բացակայությունը և սրտի պակասը: Մինչև այսօր հայը իր ողբերգությունը չապրեց հարկավոր, կենսաթափ խորությամբ և իր կյանքի տագնապը չվերձանեց պատճառագիտորեն: Հոգևոր իր գլխավոր զենքը հանդիսացավ լրագրությունը, որ ավելի ծառայեց մտքի ցրվածության, քաղաքական կամքի կազմալուծումին, հատվածական կրքերի հրահրումին և մոլորանք ստեղծելու գործին:

Անլուծելի են մնում մեր կյանքի էական հարցերը, որ նշանակ է անփութության՝ հանդեպ ճակատագրի, և անլուրջ վերաբերմունքի՝ դեպի զանգվածի քաղաքական դաստիարակության գործը:

Մտքի անիշխանականության, քաղաքական աննպատակության հետ տիրական չարիք է դարձել անգիտակցական վանողականությունը հանդեպ բոլոր այն ոգորումների, որոնք մտքի և կամքի սպառում, տքնություն են պահանջում: Դա նշանակում է, որ դեռ չկա՝ կազդուրվելու ճիգ, չկա՝ կենսաբանորեն ստեղծագործ հավատ դեպի ապագան, չկա՝ լուրջ ուղեխուզություն, հոգ-

ևոր, բարոյական, մտավոր աճում: Մեր կյանքը զուրկ է պրոբլեմներին հղություն տալու, որով՝ ճշմարտախուզական ճիգից:

Մեր էությունը համակված է բարոյական անտարբերությամբ դեպի բոլոր այն հարցերը, որոնք ազգային տեսակետով գոյարժեք են: Մենք նախապաշարված ենք անգորության զգացումով և բնագոյաբար անձնատուր եղած դանդաղ մահվան թովջանքին: Խոսվում է «անել դրություն»-ից և բնական համարվում ժողովրդի կրած բոլոր նեղությունները, աստիճանական քայքայումը, քաղաքական դիմագրկումը, հաշտվողականությունը անհայրենիք կյանքի հետ: Մտքի մակերեսայնությունը հալածանք է բացել բոլոր խոր հասկացողությունների, մասնավորաբար այն ճշմարտության դեմ, թե **չկա՛ անել դրություն, երբ պատմագործ ոգին է ելք փնտրում:** Աղետները և տարագրությունը ո՛չ նոր երևույթներ են, ո՛չ հատուկ միայն մեր ժողովրդին, ո՛չ էլ անհաղթահարելի չարիքներ: Բայց դրանք այդպիսին՝ անհաղթահարելի չարիք կդառնան, երբ ենթական իր անհայրենիք կյանքի ցավից, իր հայրենաբաղձությունից չի՛ ճգնում ավելի ազնվանալ, ոգիանալ, հզորանալ, գումարել իր գոյության անսպառ ուժերը: Դա հնարավոր է, երբ ժողովուրդը ոգու առաջնորդներ ունի: Ճշմարիտ առաջնորդության պակասի իսկական վավերագիրն է օրվա հայության աշխարհագրական ցրվածությունը: Մեր գաղութները հաստատված են առա՛նց քաղաքական նպատակի, առա՛նց ռազմագիտական, տնտեսական ցեղապահպանումի հաշիվների նախատեսումի: Զանգվածին վարել են կույր ուժերը, վայրկյանի հարմարությունը, իսկ դեկավարությունը, կատարված փաստից հետո իր

գոյությունը արդարացրել է հետևյալ անկենսաբանական տրամաբանությամբ. «Իրական պայմանները ստեղծեցին հայկական սփյուռքը»:

Այդ «սփյուռք»-ը հետևանք է ոգու, նպատակի, ծրագրային աշխատանքի բացակայության: Ո՛ր այս որակները չկան, այնտեղ ամենագոր են «իրական պայմաններ»-ը: Ոգու որպիսի՝ ճիգ է պետք, որպեսզի «սփյուռք»-ը կրկին «հավաք» դառնա: Առանց հոգեվերանորոգչական լուրջ ոգորումի՝ մենք գերի կմնանք «իրական պայմաններ»-ի քմահաճույքին: Այս նախապաշարումը մեր գոյության առաջին թշնամին է:

### **Պատմական զարգացում**

Պատահականություն չէ, որ Հայը դեռ չունի իր պատմության իմաստասիրությունը, որ ասել է՝ դեռ չի խոսել իր գոյության խորհուրդի, իր նպատակի հետ:

«Պատմություն» ասելով՝ հայն ավելի՛ հասկանում է իրերի ընթացքի նկարագրությունը, քան ոգու տրամաբանության, իր կյանքի ներքին ուժերի և խորհուրդների մեկնաբանությունը:

Դարեր ի վեր մեզ պակասում են պատմաստեղծումի հոգևոր երեք էական գործոնները՝ պատմական զգացում, նպատակի կամք և ճիգի ժառանգություն:

Պատմական զգացումով է պայմանավորվում պատասխանատվության, որով՝ երկյուղածությամբ դատելու և նվիրումով գործելու պահանջը:

Նպատակի կամքը նախատեսում է գոյությունը իմաստավորելու և սրա հարցերին կյանքի շեշտով մերձենալու արիություն:

Ճիգի ժառանգությունը պարտադրում է հետևողականություն, օրգանաբար ստեղծագործելու ոգեկան ուժ:

Երեք այս որակների ներդաշնակությունն է ընծայում պատմաստեղծումի հոգեվիճակը: Դրա բացակայությունը ախտանիշ է հոգեսպառության, որի հետևանքներից են՝ տկարության զգացումը, ներքին չարությունը, անհամերաշխությունը, եսականությունը, քաղաքական կամքի վատասերումը, աննպատակությունը, հոռետեսությունը:

Ըստ մեր պատմության վկայության՝ հայի գործն ու նպատակը, որով՝ աշխատանքն ու արդյունքը, գոհողությունն ու վաստակը, չեն համապատասխանում միմյանց: Նրա ոգորումների ճակատագիրը կնքում է իրերի քմահաճույքը՝ արտաքին ազդակները, անակնկալ միջադեպերը, պատահարները: Դիպվածապաշտ է հայը, ինչպես պատմական զգացումից, կոսահեղու և ծրագրելու խանդից գուրկ ամեն մարդ:

Օրգանական կապ չկա՝ հայի մտահղացումների և պատմանպատակ տքնությունների միջև: Ո՛չ միայն արվեստին, այլև գիտությանը, անգամ հասարակ գրին ծառայող հայն իրեն համարում է երկնային խորհուրդների ներկայացուցիչ և կտրվում երկրից: Կեղծ խորհրդապաշտությունը հաճախ զրկում է նրան իրական, գործենավոր զգացումների մակաձությամբ (ինդուկցիա), ոգեկան տարրերի համախառնումով նպատակ կառուցելու հնարավորությունից: Հայի նպատակը հղացումն է երևակայության, գործերը՝ տենչերի: Նա չունի գործնական նպատակ և պատմականորեն նպատակադիր գործունեություն:



Մտածումի և կամքի աններդաշնակությունը, բանականության և զգացումի հակասությունը նրա ոգորումները թողնում են անպտուղ, հերոսականները՝ անվաստակ: Անստեղծագործ ողբերգության, այսինքն՝ աղետապաշտության էակ է հայր, որպիսիք են բոլորը, որոնք չունեն նպատակի կամք:

Միայն արտաքին ազդակները չեն պատճառը, որ հայոց պատմական ոգին գուրկ է տրամաբանական զարգացումից: Պակաս է հայոց ստեղծագործական խանդի ներքին թափը, որով և՛ հետևողականության կամքը, ճիգի ժառանգության զգացումը: Անհատը ժխտում է անհատի, սերունդը՝ սերունդի գործը, նպատակը, ուղղությունը: Նոր կյանքի բաղձանքով համակված էակ է հայր, և նրա ճշմարտությունները կարճակյաց են՝ արշալույսից մինչև արշալույս: Գործի, արժեքների հաջորդականություն և կուտակավորում չի՝ ճանաչում նրա պատմությունը: Նորաստեղծությունը նրա համար ո՛չ թե ինքնագերազանցումի քայլ է, այլ՝ ինքնահակասում, ժխտում: Հայր ժառանգական ճիգի մարդ չէ՛, այլ՝ պատմական հիշողության: Նա չի՛ շարունակում գործը, այլ՝ միայն ապրում որպես կատարված փաստ: Նա ավանդապահ է, բայց ո՛չ ստեղծագործ, դիպապաշտ, բայց ո՛չ իրերի շարժի հետ գործող: Հայի հոգևոր զարգացումն ընթանում է անկապ թռիչքներով և ո՛չ թե տրամաբանական շղթայակցությամբ: Այդ է մեկը այն պատճառներից, որ մեր պատմությունը ո՛չ թե արդյունքներ է կուտակում, այլ՝ հակասություններ, աղետներ, սարսափներ վիժում:

Կառուցողական հոգեգիծ չկա՛ որևէ գործի, գաղափարի նպատակի մեջ, եթե դրանք չեն բխում պատմական

զգացումից: Քաղաքական անկումն ու հոգևոր դեգերումն սկսում են այնտեղ, ուր մարդիկ կորցնում են իրանց պատմությունը վարող ուժերի հետքը՝ ճակատագիր դարբնող նախահայրերի ոգու առաջնորդությունը: Հոգեվիճակն է ճակատագրի որոշիչը, և պատմաստեղծական հոգեվիճակը նա է, որում անցյալի ապրումը, ներկայի խնդիրը և ապագայի զգացումը ներդաշնակաբար ազդու են:

Մեծագործ հայրերի նպատակի, գործի ուղղության լքումը հետևանք է ոգու սպառումի: Սպառումն է մայրը ամենայն այլասերումի՝ մտքի, զգացումի, քաղաքական կորովի, թե՛ բարոյականի: Նման այլասերումի արդյունք է պարտվողական հոգեվիճակը: Մոտավոր ժամանակների մեր դեգերանքները, կիսաշունչ գործերը, անհետևողականությունը, պատեհապաշտությունը պայմանավորվում են այդպիսի հոգեվիճակով: Արկածվելը, պատուհասվելը դառնում են անխուսափելի, եթե չի գործում պարտվողական հոգեվիճակը հաղթահարող վերածնական կամքը: Առանց վերածնունդի կարելի չէ՝ հոգեվիճակ, որով և՛ ճակատագիր փոխել: Պատմությունը տրամաբանական արտահայտությունն է այն բոլորի, ինչ ժամանակները կուտակել են որպես ոգեկան տարրեր և կառուցել՝ որպես հոգեբանություն: Պատմական ճակատագիրը նախ և առաջ ոգու տարողություն է: Ոգու տարողականության պակասի պատճառով է, որ լրջորեն դեռ չենք կարողանում պատասխանել մեր կյանքի պատմական զարգացման տեսակետով այնքան էական նշանակություն ունեցող հետևյալ հարցերին.

1) Ինչո՞ւմն է խորհուրդը այն բանի, որ թե՛ համիդյան, թե՛ իթթիհատական, թե՛ միլլիական Թուրքիան Հայաս-

տանի և հայության հանդեպ մնաց քաղաքական նույն տեսակետի և գծի վրա: Մենք չենք ըմբռնել և գնահատել ցեղային գործոնը, որ իր հիմքում ղեկավարն է պատմական կամքի: Չենք ըմբռնել, որ իշխանավորի անձը կամ տվյալ վարչաձևը խորտակելով կամ բարելավելով՝ ազգերի հարաբերությունները չեն փոխվի, գոյության իմաստ և բովանդակություն ունեցող պատմական հարցերը չեն լուծվի: Քսան տարի օսմանյան տիրապետության դեմ կյանքի և մահվան կռիվ վարելուց հետո՝ 1908թ. մեր զինված պայքարն այլևս ավելորդ համարեցինք և հակառակ Կիլիկիո հաջորդ տարվա (1909թ.) ջարդին՝ շարունակեցինք հավատ ընծայել քաղաքական օսմանականությանը, մինչև որ կհասնեին Մեծ եղեռնի օրերը: Անակնկալի՞ եկանք, թե՞ պատուհասվեցինք: Պատմության մեջ, մեր, թե թշնամու, է՞րբ ենք տեսել զգացումների հավիտենականի տրամադրությունը:

Մենք զբաղվում ենք «անմիջական» չարիքով, «անմիջական» կարիքով, պատմությունը մեզ համար վայրկյանի բաղձանք է և տրամաբանություն: Դեռ այսօր էլ չենք սիրում իրերի խորքը թափանցել: Մեզ համար «վայրկյան»-ը և «անմիջական»-ը ո՛չ թե հավիտենականի բնական մի մասնիկը, «անմիջական»-ի մի արտահայտությունն են, այլ՝ վերջինների հակադրությունը:

Վայրկենապաշտն արկածվում է, ներկայապաշտը մնում է անապագա - իրերի կամքով և ոգու տրամաբանության օրենքով թրծված այս ճշմարտությունը դեռ այժմ էլ դժվարանում ենք հարազատել:

2) Ինչպե՞ս եղավ, որ Մեր դրացի բոլոր ժողովուրդները, արիական, թե մոնղոլ, կովկասյան, թե սեմական, քրիստոնյա, թե իսլամ, դուրս եկան մեր դեմ: Թուրքիայի

դեմ ելանք, բայց կայսերական Ռուսաստանի հովանավորությունը ապահովելու փոխարեն միացանք ռուս հեղափոխականներին՝ ավելի ևս գրգռելով ռուս իշխանության թշնամանքը, իսկ դրանից հետո՝ 1914-ին, կամավորական շարժումով միացանք ցարական բանակին:

Փրկություն ակնկալեցինք եվրոպական պետություններին, իսկ մեր դատի հովանավորությունը, թեկուզ Բարոյական իմաստով, հանձնեցինք այս պետությունների կառույցին ընկերային հեղաշրջումով սպառնացող տարրերին, օրինակ՝ Երկրորդ Ինտերնացիոնալին:

3) Ինչպե՞ս եղավ, որ գուտ ցեղային, ազգային-ազատագրական շարժառիթներով և նպատակով ծագած հեղափոխությունը ղեկավարվեց նաև ընկերային լոզունգներով, հակառակ որ Քրիստափորը «հավելյալ արյան» իր տեսությամբ հայ մտավորականությանը զգուշացրել էր սոցիալ-դեմոկրատիզմի պահանջներին հետևելու չարիք-վտանգից: Ի՞նչ շահեց հայությունը իր մտավորականության որոշ մասի դավանած «արևմտյան դեմոկրատիզմ»-ից, բացի նրանից, որ Եվրոպան մեր ծով արյունը փոխանակեց Թուրքիայից սպասած իր քաղաքական և տնտեսական շահերով, որ հին Ռուսաստանը կոտրեց մեր հեղափոխության բազուկը, իսկ օրվա կարմիր Մոսկվան շարունակում է մեզ համարել եվրոպական իմպերիալիզմի ագենտներ:

Ի՞նչ էր «մանդատ»-ի մեր քաղաքականությունը, լուրջ ըմբռնում էր դա աշխարհի մասին, թե՞ ցնորք: Հոգեբանորեն դա չէ՞ր նշանակում ժողովուրդն իր բազուկին չվստահող, քաղաքականապես և մարտապես կրավորական դարձնել կամ հայությունը սին հույսերի մղելով՝ բոլշևիզմը Հայաստանի գոյության դեմ գերագրգռել: Այդ

չանդրադարձա՞վ նաև Կարսի աղետի վրա: Ինչո՞ւ հայ գործքը չկո՞վեց. «առարկայական պայմաննե՞րն» էին անպաստ, ամբողջո՞ւնը խարխուլ, սպառազինությունը թերի, թե՞ չկար մի բան - այդ բոլորից օգտվելու ոգի և վճռականություն, և կար մի բան - այնքան մեծ հույս Եվրոպայի վրա, որ Կարսում պարտվելը կամ հաղթելը չէր համարվում ճակատագրական Հայկական հարցի համար:

Քաղաքականություն ունեի՞նք, ունե՞նք: Երեկ բարեկամ էինք հեռավորներին, թշնամի՝ մերձավորներին: Այսօ՞ր. դեմ ենք բոլշևիզմին և թշնամի կովկասյան հակաբոլշևիկ դրացիներին: Անգլիայից, Ֆրանսիայից հիասթափված ենք, իսկ Գերմանիային, Իտալիային՝ «գաղափարախոսորեն» հակառակ: Որպես թե թշնամի ենք Թուրքիային, բայց, իրականում, ոչինչով է արտահայտվում մեր թշնամանքը:

Օրվա հայությունը կարո՞ղ է քաղաքականություն ունենալ, երբ չունի ցեղային դավանանք, հոգևոր իշխանություն, բարոյական ուժ, ճակատագիր փոխելու կամք և ազգային ղեկավարություն: Կարելի՞ է ներքին ծրագիր ունենալ, երբ չկա արտաքին քաղաքականություն: Իսկ երբ ներքին ծրագիր և արտաքին քաղաքականություն չկա, կարո՞ղ է լինել կազմակերպված, տևական և նպատակորոշ աշխատանք: Ո՞վ չունի արտաքին քաղաքականություն, չունի և՛ ներքին ծրագիր, և՛ կենսամաստ գործունեություն:

4) Ինչո՞ւ արժեքների նվիրապետության զգացումը միշտ պակաս եղավ հայ ղեկավարության մեջ - մի բան, որ անգամ վտանգի ծանրագույն վայրկյաններին, դար-

ձավ ներքին պառակտումների պատճառ, ուժերը ջլատող:

5) Ինչո՞ւ հայ մտավորականության մի մասը շուտ անկրոնացավ. տգիտությունն էր պատճառը, սուտ եվրոպականությունը, թե՞ բարոյական արեիզմը: Սա չէ՞ր հայ եկեղեցականության բարոյական անկումի մի պատճառը: Կրոնը «անհատական խղճի գործ» հռչակելը անտակտություն չէ՞ր, երբ դեռ պետություն չունեցած՝ խզում էինք ժողովուրդը միացնող դարավոր կապը: Ինչի՞ց առաջ եկավ հայ բոլշևիզմը - արդյո՞ք միայն ռուսական ազդեցություն, թե՞ նաև հայ կյանքի բարոյական ներքին պայմանների ախտավիժում: Ինչո՞ւ խոր եղավ հայերի հոգևոր բոլշևիզմը և մակերեսային քաղաքականությունը:

6) Ինչո՞ւ անկարելիության աստիճան դժվար է ամենապարզ ճշմարտությունն անգամ պարտադրել մեր իրականությանը, եթե այդ ճշմարտությունը նպատակիմաստ է, շինարար, ստեղծագործ: Ինչո՞ւ հայությունն անձնատուր եղավ անկենսաբանական մոլորանքների: Ինչո՞վ բացատրել օրվա հայ մտավորականության գաղափարավախությունը, միաժամանակ, անցյալ արժեքների և ավանդների չարաշահումը - նորին թշնամի են, հինը՝ լրբձող<sup>25</sup>, աղարտող: Ինչո՞ւ դժվար է որևէ հանցագործի, հասարակության կամ ազգի դեմ մեղանշած մեկի ո՛չ միայն պատժել, այլև՝ սանձել: Ինչո՞վ բացատրել կեղծիքի տիրապետությունը մեր կյանքում - խոսքի անիմաստություն (օրինակ, ազգային միություն քարոզողները և խանգարիչները միևնույն անձերն են):

<sup>25</sup> կեղտոտող

Ինչո՞ւ չի իրականանում հայկական միությունը, արդ՞յո՞ք դրա պատճառը միայն բոլշևիզմն է: Բոլշևիզմից առաջ կա՞ր հայկական միություն - միաճակա՞տ էին հայերը Եվրոպայի առաջ, երկու պատվիրակություն չէ՞ր նշանակում ապացուցել, որ մենք, քաղաքական իմաստով, դեռ ազգ չենք: Առա՛նց արժեքների նվիրապետության զգացումի, առա՛նց ներցեղային բարոյականի, հոգևոր բռունցքի հնարավո՞ր է որևէ միություն:

7) Ինչո՞ւ հայն անարդար է հայի հանդեպ և թշնամանող - դրանով չի՞ արդարացվում ընդհանրապես օտարների՝ իր հանդեպ ունեցած անարդար և թշնամական վերաբերմունքը: Ասվում է, որ հայ բոլշևիկները, իրար սևացնելով և մատնելով, զոհեր են մատակարարել Մոսկվա՝ Թիֆլիսի հայաջինջ քաղաքականությանը: Գիտենք, որ արտասահմանում մի քանի հոսանքների բաժանված հայերն անվերջ հաճախել են իրենց բնակած երկրների ոստիկանատները և իրար մերկացրել, գրպարտել են՝ առանց անդրադառնալու, որ դրանով քաղաքականապես կասկածելի, բարոյապես անարժեք են դարձնում ընդհանրապես հայությունը: Երբ ներցեղային բարոյական չկա, ազգի յուրաքանչյուր անդամը մյուսի համար դառնում է հալածիչ, ոսոխ, իսկ ինքը՝ ազգային ամբողջությունը, անդամալուծվում է: Հավաքականության զգացումի խաթարումը ինքնին բավական է, որ մի ազգ մեռնի, թեկուզ դա չունենա արտաքին թշնամիներ:

8) Ինչո՞ւ չի ստեղծվում մարտիկը, մարտական ուժը - ինչո՞ւ չկա վերջինի պաշտամունքը, այլ, ընդհակառակն, ճիգ է նկատվում մարտական մեր անցյալը խաթարել կամ մարտական ոգի ունեցող կազմակերպությունները

զբաղեցնել ներքին թնջուկներով և կեղծ մշակութային խնդիրներով - պար, երգ, դերասանություն: Օրվա հայր գիտե՞ օգտվել մեր անցյալից, ի՞նչն է վարում մեր պրոպագանդը՝ ողբերգական-հերոսականի ոգի՞ն, թե՞ եվրոպացուն այլևս զգվանք պատճառող նվաստության զգացումը:

Աշխարհն ինչպե՞ս է ճանաչում մեզ - որպես ջարդվելու ընդունակ, թե՞ հերոսական ստեղծող ժողովուրդ: Ո՞վ է մեղավորը այդ բանում: Ինչո՞ւ որոշ տարրեր բնագրական թշնամանքով դուրս եկան տարոնականության դեմ, որ ասել է՝ պատմա-հոգեբանական հիմք ունեցող այնքան անհրաժեշտ հոգեվերանորոգչական շարժում, նոր հոգեվիճակ ստեղծելու ճիգ: Ի՞նչը պետք է լինի հայ մարդու իդեալը, գործը - կարեկցանք ստեղծել իր շուրջը, թե՞ քաղաքական շահագրգռություն:

9) Ինչո՞ւ նոր սերունդ դեռ չի դիմագծվում, հակառակ որ մի սերնդի կյանք անցավ վերջին տարագրությունից ի վեր: Ժողովրդի կյանքում օրգանական-հոգևոր աճում գոյություն չունի, ցեղի կենսա-բարոյական ուժե՞րն են սպառվել, թե՞ արհեստական խոչընդոտներ կան:

Ինչո՞ւ ցեղակրոնությունը չդարձավ ընդհանուր շարժում, երբ դրա համար կար հնարավորություններից էականը - հոգեբանական հողը, երբ ամենուր կար խանդավառություն և սպասում: Ո՞վ ստեղծեց երկու սերունդների հակամարտությունը: Ախտաբանորեն վերծանվե՞լ է այն խնդիրը, թե ինչ է նշանակում նախանձի մթնոլորտ ստեղծել սերնդի և սերնդի միջև: Առանց հաջորդության բնական զգացումի կարո՞ղ է բարոյական կապ ստեղծվել հին և նոր սերունդի միջև: Առանց կյանքին հասարակագիտորեն մոտենալու, առանց ժամանակի ոգին



ըմբռնելու՝ կարելի՞ է նոր սերնդի դաստիարակության մասին խոսել:

Գոյություն ունի՞ նորահաս սերնդի դաստիարակության և կազմակերպության լուրջ ծրագիր, աշխատանք, որ նշանակում է՝ ծրագիր և աշխատանք հայության ապագայի համար: Ովքե՞ր են նոր սերնդի մղում «հաճելի ժամանակների», մանրագործության, հոգևոր գաղջության, նպատակի չնչինության: Ինչո՞ւ դեռ չեն հարազատվում հասարակագիտական հետևյալ երեք ճշմարտությունները.

ա) ժողովրդի հոգևոր վերանորոգումը հնարավոր է միայն նորահաս սերունդի միջոցով,

բ) հարանվանացած, հատվածականացած մի ժողովրդի միության հաշտարար ուժը նոր սերունդն է,

գ) հայրենիքի ինքնապաշտպանության գործի կազմակերպությունը տարվում է նորահասի խնդրի կապակցությամբ:

10) Գոյություն ունի՞ հայկական պրոբլեմատիկա. ո՞րն է դա: Ինչո՞ւ ցայսօր չճշտվեցին մեր երկրի և ժողովրդի ճակատագիրը շոշափող խնդիրները և սրանց կարևորության աստիճանը: Առանց ճշմարտախոզության կա՞նցյալը հասկանալու ճիգ, առանց սրան հնարավոր է նպատակավոր դիրքորոշում ներկայում, առանց վերջինի կա՞ լուրջ աշխատանք ապագայի համար: Առհասարակ, մոլորանքը և ինքնախաբեությունը չէին մեր կյանքը վարող ուժերը: Ճի՞շտ է, որ մենք թշնամիներ և բարեկամներ ունենք: Ինչ ենք անում թշնամիների դեմ, ինչ՞ բարեկամների համար: Հասարակագիտականորեն հիմնավորված է օրվա հայ խոս-

քը, մամուլը: Ինչո՞ւ հայ կյանքում ամեն խոսք կրում է ծիծաղելի մեծամտության կամ թունաթափության կնիք:

Ինչո՞ւ ճշմարտությունը չի գնահատվում՝ ըստ իր քանական կշռի: Քանի՞ զգացումի, քանի՞ ճշմարտության է ծառայում յուրաքանչյուր հայ: Ներքուստ պառակտված այս էություններով կարելի՞ է ստեղծագործ ընկերություն, ազգ, հայրենիք, պետություն ստեղծել: Կա՞ այդ բոլորը ստեղծելու կենդանի իդեալ: Ամեն ինչ բաղձանք չէ՞, այլապես, ինչո՞ւ ողբերգության 20 տարին անցավ առանց շոշափելի գործի:

Քսան տարի անպտուղ անցկացնել չի՞ նշանակում հաստատել, թե՛ որպես պատմաստեղծ գործոն, միտք և առաջնորդություն՝ մեռյալ է հայությունը: Եվ, վերջապես, հաշվի առնվե՞լ է, թե բարոյական որպիսի՛ կործանում է քսան տարի անընդհատ տարբեր երկինքների տակ հիսուններկու ազգերի ինքնասիրությունը շոյել: Դրանից հետո ինքնակամ դառնալու ընդունակություն մնո՞ւմ է: Անկախության ցավ ունենալ, բայց ոգորում, պայքար չունենալ՝ չի՞ նշանակում անզգա դառնալ և հաշտվել դանդաղ մահվան ճակատագրին:

## Ընդհանրացում

Հայության բոլոր դժբախտությունների ենթակայական պատճառը ոգեսպառությունն է: Իրական ամեն ուղի և նպատակ նախատեսում է ոգեկան ուժ: Անստեղծագործ նպատակ, ունայն գործ, անկենսաբանական խոսք - դրանք բոլորը պայմանավորվում են սպառվածության զգացումով: Ոգեսպառ, ասել է՝ անուղի, աննպատակ, նան՝ սխալադատ: Սխալ դատողություններ

րով կառուցված ճշմարտությունները անկենսաբանական են: Անկենսաբանական ճշմարտությունների ծառայող ժողովուրդների կյանքը դանդաղ մահվան մի առաջընթաց է, նրանց պատմությունը՝ սև թվականների պաշտամունք:

Տխուր երգերի և ձախողված հերոսականների, անստեղծագործ ողբի և անգոր ափսոսանքի, երկարատև հորանջումների և երեքական տրամադրությունների հեղինակներ և միաժամանակ գոհեր են նման ժողովուրդները: Ճակատագիրը Դեր-Չոր և իրար հաջորդող խորտակումները պարտադրեց մեզ, որովհետև նպատակագրային իր տեմպերամենտով թշնամին գերազանցեց մեզ: Նա մեզ գտավ անուղի, ներքուստ տատանվողի հոգեվիճակում, և վարեց մեզ այնտեղ, ուր կամենում էր: Չքմեղանում ենք, որ «խաբողեցինք»: Չկա խաբողել, կա ինքնախաբեություն: Խաբողում են բոլոր նրանք, որոնք ղեկավարվում են ո՛չ թե կամեցումով, այլ՝ տրամադրություններով:

Սխալ բոլոր հաշիվների աղբյուրը ոգեսպառությունն է: Նույն հոգեվիճակն է այսօր հայությանը պարտադրել նվաստության, անարժեքության, իր ուժերը ստորագնահատելու և իր գոյությանը սպառնացող ուժերի անհաղթահարելիությամբ նախապաշարվելու զգացումը: Հոռետեսությունը, թե կարող է որպես հայ ապրել, հետևանք է ա՛յն բանի, որ բարոյական իր կորովը տկար է համարում:

**Կորած է ամեն ժողովուրդ, որ թողած իր ներաշխարհը՝ անվերջ թոթովում է «ոեալ պայմաններ»-ի մասին:**

Գոյության մեծագույն «ոեալ»-ը ոգին է: Երբ չկա՝ այս հասկացողությունը, մտածումը ճշմարտության

փշրանքներ է վիժում, և էությունը գերի է դառնում «արտաքին ազդակներ»-ին: Այդտեղ ներկա են արդեն ցեղային պահպանության հռետեությունը, քաղաքական անկարողության զգացումը և ճակատագրին հնազանդվելու բաղձանքը: Այս հոգեվիճակից ծնվում է ներքին չարությունը, որի հետևանքով՝ գործի չափանիշը դառնում է նախանձը, խոսքը ստանում է թունաթափության, և պրոպագանդը՝ տկարության վաճառքի բնույթ:

Մեր արտաքին քաղաքականությունը հենվում է կեղծիքի վրա, որովհետև դա թելադրվում է տկարության զգացումից: Քաղաքականությունը ենթադրում է՝ նախ ցեղային սուր ինքնազգացողություն, ինքնահարգանք և իրավունքի գիտակցություն: **Հայը վարժվել է իր իրավունքը սպասել օտարների արդարամտությունից: Դրա համար էլ նա բարեկամներ չունի, որովհետև կանխավ մատնում է մուրալու իր տկարությունը:**

Իր պրոպագանդում հայը երևան չի գալիս որպես արժեք, այլ՝ որպես կարեկցանք հայցող: Չկա՝ ուժի և հզորանքի պրոպագանդ - դրա համար էլ՝ կա թշնամանք տարոնականության, ցեղակրոնության դեմ: Տկարության թշնամանքը թույլ չի տալիս, որ ըմբռնենք կյանքի ճշմարտությունը: Մրա հետևանքն է, մի կողմից՝ կեղծ մարտականությունը, մյուս կողմից՝ թշնամանքը դեպի մարտականը:

Ոգեսպառը թշնամի է ճիգ և կորով պահանջող ամեն բանի: Դրա հետևանքներից են նաև մտքի ցրվածությունը, կեղծ մխիթարությունը, կեղծ ինքնագոհունակությունը, քաղաքական սուֆիզմը, հոգևոր շինականությունը: Իմ համոզումը հրամայված ճշմարտությունն է: Հորս և ո՛չ թե նախահայրերիս ճամփով. Այստեղ՝ հին սերնդի

անկենսաբանական մեծամտությունը, նորի՝ ծուլությունը: **Դեպի նախահայրերը - դա երևակայության լարում, մտքի տքնություն և մեծագործության ճիգ է պահանջում:** Կրկնի՛ր, որ «ամեն ինչ կորած է և անկարելի» և մտածի՛ր անձիդ մասին: Այդ ավելի՛ դյուրին է, եսականացնող և գրավիչ:

Դաստիարակչական անգործություն կա հայ ընտանիքում, նվազ բացառություններով ծնող կա, մայր չկա: Հայ կինը դաստիարակչական իր դերը չի խաղում: Ուզո՞ւմ ես սերունդը «հայ պահել», նախ ստեղծի՛ր ցեղահոգ մորը: Կանանց կազմակերպությունները փոխանակ այս գործին միայն ծառայելու՝ իրենց նպատակը լցնում են մանր բարեգործություններով:

Ո՛ր է հայ հայրը: Մանուկի և պատանու համար առաջին իրական գաղափարատիպը, շոշափելի հերոսը իր հայրն է: Ի՞նչ է օրվա հայ մարդը որպես գաղափարատիպ, որին բնագդաբար ձգտում է նմանվել մանուկը: Երբ պարտվողական հայրեր կան, դուրս կգա նվաստության զգացումով համակված սերունդ:

Եկեղեցին և դպրոցը՝ կրոնը և դաստիարակությունը, դարձել են անբովանդակ: Նրանք ներքին ապրում չեն, այլ՝ արտաքին կրթություն և ծես: Խորհուրդ չի՛ մնացել նրանցում, որովհետև հայ անհատը շարունակում է մնալ չվերանորոգված, այսինքն՝ կենսաբանորեն հավատաթափ:

Հայաստան և հայրենասիրություն - դրանք նախատեսում են քաղաքական վերաբերում դեպի հայրենիքը: Դա ենթադրում է խորին մտահոգություն ապագայի հանդեպ, որով և հստակորոշ մի ծրագիր և կենդանի, ուղղագիծ և հարատև աշխատանք: Ինչո՞վ է արտահայտվում

օրվա հայ մարդու հայրենասիրությունը: Կարելի՞ է երևակայել ավելի գաղջ, իր խորքում ավելի վիրավորական վերաբերում, քան Հայաստան «մեխ ու տախտակ» ուղարկելով, սնարժեք մի «ներգաղթ»-ի հավատ կեղծելով, երկրի «բարգավաճում»-ը փառերգելով կամ թերությունները քննադատելով, ի մի բան՝ ունայնագործությամբ և խոսքի քամիաբանությամբ հայրենասիրական պարտականությունը բավարարված համարել:

Հայը ի՞նչ բովանդակություն է դրել իր ներգաղթի և ի՞նչ ապրում՝ իր օտարության մեջ: Երկրին սպառնում է սուրբ, արտասահմանին՝ ձուլումը: Այս չէ՞ օրվա տիրական մտածումը, հեղինակավոր ճշմարտությունը: Եվ դա խուճապ չի՞ ստեղծել ամեն տեղ: Մեր ցրվածությունը չարիք համարելով՝ ուզում ենք, որ հայությունը հավաքվի Երկիր: Բայց խուճապահարի հոգեվիճակը թույլ տալի՞ս է, որ այդ ուղղությամբ մենք նպատակավոր մի քայլ առնենք: Ո՞ւր է բոլշևիկասեր տարրի տարիների «քաղաքականության» և հակաբոլշևիկ տարրի տարիների «պայքար»-ի արդյունքը: Կա՞ քաղաքականություն, կա՞ պայքար, եթե զանգվածը չի՞ դաստիարակվել և կազմակերպվել որպես Երկրի ինքնապաշտպանության ակտիվ ազդակ: Կա՞ վտանգը հաղթահարելու որևէ հավանականություն, եթե դա չես դարձրել ճակատագրիդ անբաժան ընկերը, եթե չես որոշել ապրել վտանգի թագավորության մեջ: «Ես և վտանգը ճակատագրի եղբայրներ ենք, և նրա թագավորության մե՛ջ միայն կարելի է հաղթահարումի, այսինքն՝ ստեղծագործումի կամք ու կոռով մշակել»:

Բայց այս խոսքը կարող է ասել միայն վերանորոգված ժողովուրդը:

Չվերանորոգված ամեն էակ տկար է: Նմանը չունի՝  
 ունալ քաղաքականություն: Տկարությունը աշխարհի  
 հետ լեզու չի գտնում: Հայր թշնամի է թե՛ Ռուսիային, թե՛  
 Թուրքիային, թե՛ հին իր «դաշնակիցներին», թե՛ դրացի  
 ժողովուրդներին, թե՛ հայկական ներքին որևէ խմբակ-  
 ցության, որին ինքը չի պատկանում: Նա պատերազմ է  
 հռչակել աշխարհին և խաղաղորեն նստել օտարության  
 մեջ ձեռք բերած իր խրճիթում: Խոսքով «ծովից ծով Հա-  
 յաստան» է հոլովում, գործքով՝ անտարբեր է անգամ  
 «Արարատյան կորիզ»-ի ճակատագրի հանդեպ:

Անկարելի նպատակի սնուցիչը - դա ոչինչ անելու հո-  
 գեբանություն է: Որպես սպառված էակ, օրվա հայր ներ-  
 քին ճակատում գործում է նախանձի զենքով, արտաքի-  
 նում՝ կեղծ ինքնապաշտպանվողի «մտորումներով»: Այս  
 պատճառով սուտը դարձել է գործունեության մի-  
 ջոց, ինքնախաբեությունը՝ ղեկավար սկզբունք: Դրա  
 հետևանքներից է ստամտավորականության, հոգով փե-  
 րեզակ տարրի տիրապետությունը մեր կյանքում: Ամեն  
 շինարարություն, մասնավորապես ազգային-պետա-  
 կան, պահանջում է իդեալիստական խորքով, նախա-  
 ձեռնության ոգով օժտված ղեկավարություն և հեղափո-  
 խիչ, ակտիվացնող երիտասարդական ուժի մասնակ-  
 ցություն: Մեծ ժողովուրդները ազգային շինարարու-  
 թյուն ասելով՝ հասկանում են նախ և առաջ նորահաս  
 սերնդի դիմակերտումը, նրան ինքնապաշտպանողա-  
 կան ուժ դարձնելու աշխատանքը: Տգետ և անձեռնահաս  
 մի ղեկավարություն - ահա՛ ժողովրդի ապագայի առա-  
 ջին թշնամին: Ապագա ստեղծվում է ժամանակի ոգու

ըմբռնումով և այս ոգուն համապատասխանորեն դաստիարակված և կազմակերպված նորահասի միջոցով: Նորահասը ուժապաշտ է, դա համախմբվում է ուժի հմայքի շուրջը և մոտենում միայն ա՛յն նշանախոսքերին, որոնք դառնում են կոնկրետ մի նպատակի շուրջը: Չկա՛ քացարձակ հրամայական, կա՛ հրամայականի վերածված բարոյական մի բովանդակություն: Տարբեր արդյունք է ստացվում, երբ ասում են՝ «եղի՛ր հայ», «հա՛յ մնա», և տարբեր, երբ ասում են՝ «եղի՛ր այս տիպի հայ», «ունեցի՛ր այսինչ նպատակը»: Ո՛ւր դաստիարակությունը բովանդակություն, որոշ իդեալ և հստակադիր նպատակ չունի, այնտեղ չկա՛ դաստիարակություն:

Առհասարակ, մեր կյանքում քացակայում է ապագայահոգ գործ անելու և արածը որոշ մեթոդով, սիստեմով, նպատակադրորեն առաջ տանելու կամքը: Այդ ասել է, որ գոյություն չունի՛ լուրջ կազմակերպություն:

«Հայկական կազմակերպությունները» անուն են և ո՛չ թե բովանդակություն: Դրսից նրանք ուժի խաբկանք են տալիս, իրենց հարկի տակ անկազմակերպության տիպարներ են:

Հասարակական կազմակերպվածությանը զուգահեռվում է՝ մտածումի անկազմակերպությունը: Աշխարհայեցողության պակասից մի՛շտ էլ տառապել է հայ մտավորականությունը, և անուղի են մնացել նրա գաղափարական ոգորումները: Մտքի քառսից ստեղծվում է նպատակի անորոշություն և գործունեության աննպատակություն: Հայը տքնում է, աշխատում, արյուն թափում, բայց մինչև այժմ լրջորեն չի անդրադարձել այն խնդրին, թե ինչո՞ւ իր ճիգերն անպտուղ են մնում: Վաղուց է, ինչ հայը, որպես մտածող, դարձել է հետևակ և հետևում է



արդեն մաշված, սպառված ճշմարտությունների: Հայ մտածումի համար գարունը բացվում է ա՛յն ժամանակ, երբ Եվրոպայում արդեն ուշ ամառ է, և պտուղը՝ քաղված: Հայը ուշացող է նաև մտքի զարգացման աստիճանաչափով: Նրա որդեգրած գաղափարները կրում են մակերեսայնության, գիտականության պակասի, սկզբունքային ներհակության դրոշմը: Միևնույն անհատի մեջ հավասարապես տեղ են գտնում անիշխանակա-նությունը, բացարձակապաշտությունը, իդեալիզմը, ռեալիզմը, աշխարհաքաղաքացիությունը, թունդ ազգայնականությունը, միևնույն քաղաքական ծրագրում՝ միջազգայնականությունը, անհատապաշտությունը, ընկերային հեղափոխության երազը, ազգային պետություն ստեղծելու նպատակները և այլն, և այլն: Որ այս հակասությունների պատճառով հայությունը տուժում է քաղաքականապես, կասկածելի դառնում թե՛ հեռավորի, թե՛ դրացու, թե՛ «աջ»-ի, թե՛ «ձախ»-ի աչքում - դրան անդրադառնալու տրամադրություն դեռ չունի՝ հայ մտավորականությունը: Որպես հապաղող և հապաղվածը սխալ ըմբռնող՝ նա իրար է խառնել ժողովուրդ, ազգ, ցեղ, դասակարգ, դեմոկրատիա, սոցիալիզմ, կամքի ազատություն, ինդիվիդուալիզմ, սուբյեկտիվիզմ, քաղաքականություն, ընկերային վարդապետություն, կրոնական զգացում, խղճի ազատություն և այլն հասկացողությունները և սխալ էլ կիրարկում է: Առհասարակ, նա իրար է խառնում ձևը և բովանդակությունը. դեռ այսօր էլ ոմանք սոցիալիզմը հակադրում են ցեղին, վերջինը՝ դեմոկրատիային: Պակասավոր է և՛ հայի ճշմարտության զգացումը, որի պատճառով ո՛չ միայն իմացական, այլ՝ բարոյական խնդիրներում քմահաճ է: Առանց

ուտիլիտարիզմի<sup>26</sup> մասին հասկացողություն ունենալու՝ հայի համար ճշմարիտ է հաշվին եկող խոսքը: Առհասարակ, նա սկզբունքները անձնական շահի համար օգտագործող է, չի՛ սիրում բարոյական վերահսկողություն և օրինապահություն - կարգապահությունը բացարձակ արժեք և նպատակ է հռչակում, երբ իշխանավոր է. դա նրա աչքում անեծք և չարիք է դառնում, երբ ենթարկվում է: Իշխելիս՝ բռնավոր, ենթարկվելիս՝ դեմոկրատ - այսպե՛ս է հայը: Նա աշխարհը բարոյապես արժեքավորում է իր անձնական վիճակով, դիրքով:

Իր ամբողջ մոլությունները հայը պսակում է հոգևոր անջատողականությամբ, որով նա արդարացնում է ներքին իր պառակտումը, քաղաքական հատվածապաշտությունը: Իրականում աննպատակ՝ նա ստեղծել է մանր և կեղծ նպատակներ և դրանց շուրջը անթիվ միություններ, որոնցից յուրաքանչյուրը իր մեռելն է լալիս և էժան կերպով փառավորվում: Ո՛ւր շատ միություններ կան, այնտեղ չկա միություն, ուր շատ փառավորյալներ կան, այնտեղ չկա փառք: Պատակտված և փառքի գծից դուրս ընկած ժողովուրդ՝ հայության հատվածապաշտ տարրերը բնագղական սարսափ ունեն ցեղի, տարոնականության հանդեպ, որոնք ձգտում են հոգեբանորեն միատարր ազգություն և հանրապարտադիր ազգային բարոյականություն ստեղծել: Մանր անձնա-

---

<sup>26</sup> Ուտիլիտարիզմը մի տեսություն է, որը ցանկացած քաղաքական հարցի լուծումը փորձում է գնահատել նրա հետևանքների տեսանկյունից: Այդ դեպքում օգուտը համարվում է միակ կամ հիմնարար արժեք:

պաշտությունը հին սերնդի որոշ ներկայացուցիչների «վարակել է» անհերոսապաշտության ախտով: Այն, որ դեռ այսօր էլ հնարավոր է դավադրել և սևացնել վտանգի օրերին անուն և արժեք ստացած հայ մարդկանց, վատթարագույն ինքնամատնությունն է հին սերնդի որոշ ներկայացուցիչների մանր անձնապաշտության, անհայրենասիրության: Դա ապացույց է, որ հին սերունդը նորի դաստիարակության գործում, ընդհանրապես, անընդունակ է օգտվել հայ հերոսականից և հերոսներից: Դա ապացույց է, որ նրա գործածած բառերը սին են, անիմաստ, նրա պաշտամունքը անցյալի հանդեպ՝ կեղծ և հույսը դեպի ապագան՝ մոլորանքի զենք:

«Ռեզումիկ», Սոֆիա, 1938-39թթ., թիվ 113-10

# ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԸ

(«Խոռովք»-ի առաջադրությունները)

«...Ձի ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտություն,  
այլ ծոյք են և ձանձրացողք»:

## Անանիա Շիրակացի

Դեռևս Ե դարում հայ մտավորական ընտրանին անհրաժեշտություն զգաց իր ստեղծագործական ճիգերի մեջ մտցնել իմաստասիրական գիծը: Այդ և հաջորդ մի քանի դարերի հայ մտավորականները հպարտանքն ունեին իրենց անվանը կցել «փիլոսոփոս» կամ «իմաստասեր» մակդիրը:

Դրանք կարողանում էին ժամանակի գիտական ոգին կայտառ պահել Հայաստանում:

Հետևական դարերում, սակայն, երբ «դպրոցապաշտության» (սխոլաստիցիզմ) կապանքներից ազատագրված եվրոպական մտածումն իմաստասիրության մարզում բռնեց նոր և վիթխարի նվաճումների ուղին, Հայաստանի պատմությունը մեզ պարտադրեց հոգևոր կյանքի անկման մի շրջան:

Մենք չօգտվեցինք Վերածնության (Ռենեսանս) և լուսավորության դարաշրջանների գիտական ոգորումներից, այլ զարկ տվինք ոչ-գիտական կամ կիսագիտական գրական սեռերին և աստիճանաբար խորթացանք իմաստասիրելու արվեստին: Եվ այդ ա՛յն չափով, որ առանց այն էլ վիպապաշտության խոր ազդեցությամբ դրոշմված՝ 19-րդ դարում սկսված մեր վերածնությունը

չկարողացավ հոգուտ գիտական իմաստասիրական մտածման արդյունքների որդեգրման՝ մի ուղեփոխություն առաջ բերել: Մյուս կողմից՝ հենց նույն վերածնության շնորհիվ ասպարեզից վտարված գրաբարի հետ՝ հների ստեղծած արժեքներն էլ դարձան գրեթե մեռյալ տառ:

Նախնյաց մտավոր արդեանց<sup>27</sup> ստորագնահատմանը զուգահեռ՝ գերագնահատվեց «առօրյան», և գործնականում անտեսվեց այն ճշմարտությունը, թե ժողովուրդների պատմությունն ուժական մի առաջընթաց է (դինամիկական մի պրոցես), որում ամեն «ներկա» պայմանավորվում է «անցյալ»-ով, ամեն «լինելի»՝ մի «եղյալ»-ով: «Առօրյան» մի դատարկություն է, որ ուզում է լցվել պատմագործ «ես»-ի ինքնարձանացմամբ, դառնալ հավիտենարժեք «ներկա»:

Թեպետև, հայ իմաստասիրությունը 15 դարի պատմություն ունի, բայց այսօր ողբալի է մեր գիտական պաշարը, և ամոթալիորեն աղքատ՝ մեր փիլիսոփայական գրականությունը:

\* \* \*

Պատճառները, որոնց հետևանքով հայ մտածումն իմաստասիրության մարզում գրեթե անպտուղ մնաց, բաժանվում են երկու կարգի.

- ա) առարկայական-պատմական.
- բ) ենթակայական-հոգեբանական:

---

<sup>27</sup> արդյունքների

Պատճառների առաջին խմբակցությունը պայմանավորվում է Հայաստանի բնության ներանջատական նկարագրով և մեր քաղաքական ճակատագրով:

Իմաստասիրությունը հորինվածների (սիստեմների) մի գիտություն է, իսկ երկրի անմիաձույլ նկարագիրը, պատմական աղետավոր ցնցումները, անկանոն և ընդհանրապես աննպաստ քաղաքական ելևէջները զրկելով ժողովուրդը սեփական կյանքը հորինվածաբար կազմակերպելու կարելիությունից՝ նրան անընդունակ պիտի դարձնեին զարգացնել մտածումի այնպիսի բարդ մի հյուսվածք, որպիսին է իմաստասիրությունը:

Ինչո՞վ բացատրել, ուրեմն, ա՛յն փաստը, որ Հայկական «ես»-ը չկարողացավ բնական իրողություններն ու պատմական անցքերը պատշաճեցնել իր կենսական շահերին կամ ուրիշ խոսքով, ինչպե՞ս եղավ, որ մեր գոյության կովում «առարկայական իրականությունները» հաղթահարեցին մեզ:

Որո՞նք էին արգելիչ պատճառները. արդյո՞ք միայն թշնամիների քանակական գերազանցությունը, միայն երկրի և շրջապատի աննպաստ պայմանները: Բայց ուժերի տնտեսության օրե՞նքը՝ ժողովրդական կամ ազգային կազմակերպյալ կորովի (էներգիա) նպատակահարմարորեն սակավ սպառումով շատ արդյունքներ ձեռք բերելու արվե՞ստը: Մեր բարձրավանդակի իրավամբ անատիկ դի՞րքը: Առա՛նց ժխտելու արտաքին ծանր պայմանների և գործոնների դերը՝ չենք կարող (և պետք չէ՛) ուրանալ մեր ենթակայական մեղքերը: Բարոյական մեղքերը քավելու համար քրիստոնեական եկեղեցին հանձնարարում է զղջում: Պատմա-քաղաքական մեղքերը քավելու համար գիտությունը հանձնարարում

է անցյալի աննախապաշար վերագնահատում, այսինքն՝ հին ճշմարտությանց թոթափում և նոր ճշմարտությանց որդեգրում:

Վերագնահատելով մեր անցյալը՝ պիտի խոստովանենք, որ ենթակայական մեր անթիվ մեղքերը սրվեցին, դարձան անհաղթելի չարիք նաև այն պատճառով, որ մեր կյանքի ու գործի մեջ գիտականություն չմտցրինք:

Եվ չմտցրինք շնորհիվ մասամբ այն թերության, որ արդեն 13 դար առաջ, մատնանշում է Շիրակացին. «...զի ո՛չ սիրեն Հայքս իմաստ կամ գիտություն, այլ ծոյլք են և ձանձրացողք»:

Ցայսօր էլ սրբագրումի փորձ չարեցինք, և հետևանքն ա՛յն եղավ, որ հոգևոր ծուլությամբ պայմանավորված՝ մտավոր մակերեսայնությունն ահա՛, իւեղղում է մեզ:

\*\*\*

Այսօր, մեր կյանքի ո՛ր կողմն էլ վերցնենք՝ գիտականության փոխարեն հանդիպում ենք բանդագուշանքի, մտածումի փոխարեն՝ հույզի, ձևի փոխարեն՝ քառսի, կազմակերպության փոխարեն՝ անկանոնության:

Միայն գաղութներում հրատարակում ենք հարյուրի չափ թերթ-պարբերաթերթեր, որոնց 90 տոկոսը ծառայում է տգիտության և հոգևոր պառակտումի գործին: Ունենք հարյուրավոր «վարժարաններ», բայց հազիվ 1-2 կանոնավոր դպրոցներ: Ունենք հազարից ավելի «վարժապետներ», բայց մանկավարժության սկզբունքներին ծանոթ, հազիվ, 1-2 տասնյակ ուսուցիչներ:

Ավելի՛ն:

Ունենք ահռելիորեն սրված գոյության կնճիռ-թափառական ժողովուրդ և քաղաքականապես հոշոտված հայրենիք: Բայց վերակազմական, վերանվաճողական համազգային ճիգ... Մեր մտավորականության մի մասն է միայն երկնում: Մյուսը, նստած ոռուսական տակառում, երերվում է հայոց խռովահույզ լճակի ալիքներին և թմբուկ զարկում «աշխարհի մեկ վեցերորդականի» համար: Երրորդը բացել է երախը և խոսքի ցեխ է թափում: Չորրորդը փակել է ոգու դուռը և սեփական տկարությունն է որոճում: Իսկ թո՞ւրքը. նա քշում է իր երիվարը հայոց ամայացած դաշտերով, բարձրանում մեր հպարտ լեռները, տրորում նրանց զգայուն կուրծքը և մնում... անպատիժ:

«Արթնացի՛ր, Հայաստա՛ն», անհրաժեշտ, բայց տարածամ կոչ, անհրաժեշտ, որովհետև ահարկու է մեր կյանքի խռովքը, տարածամ, որովհետև ճշմարիտ գիտության համար անասելիորեն խուլ են մեր ականջները, և զարհուրելիորեն կույր՝ մեր աչքերը: **Ուրիշ ժողովուրդներ ոտքի են ելնում վտանգից առաջ, մենք մրափում ենք աղետից հետո էլ:**

Ինչո՞վ բացատրել այս երևույթը. կենսաբանական տկարության մը: Բայց ինչե՛ր կարող էր անել իր ճակատագրի խռովքը գիտակցորեն ապրող 2-3 միլիոնանոց ժողովուրդը:

«Իրապաշտական» սովետությունները, «առարկայական» փարիսեցիությունները չեն անցնում այլևս:

Երևույթը բարոյագիտապես բացատրվում է այն փաստով, որ հայ մտավորականությունը, հակառակ սքանչելի բացառությունների, ո՛չ ցեղի ամոթանքն ապ-



րելու առաքինություն ունի, ո՛չ էլ՝ ինքնափրկության հավատ:

Եվ չունի, մասամբ, շնորհիվ հոգևոր ծուլությունից, մտավոր մակերեսայնությունից ծագած չարիքների:

Ունե՛նք մի հայրենիք՝ վեհակառույց մի բարձրավանդակ. վերձանե՞լ ենք նրա բնության խորհուրդները:

Ունե՛նք մերթ փառքով օծված, մերթ մրով ծեփված մի պատմություն. իմաստասիրե՞լ ենք նրա մասին, ծանոթացե՞լ նրա ընթացքի հատկորոշ ելևեջներին, նրա զարգացման ներքին օրենքներին, դեկավար սկզբունքներին:

Ունե՛նք կենսական և հոգեկան բարձր կարողություններով օժտված մի ժողովուրդ՝ կենսաբանական ուժականության (բիոլոգիական դինամիկա) անսպառ մի շտեմարան. ուսումնասիրե՞լ ենք նրա մարդա-հոգեբանական յուրահատուկ գծերը, փորձե՞լ ենք գիտական լույսի տակ դնել նրա առաքինություններն ու մոլությունները, սրբագրել՝ նրա հոգեբանական թերիները, մշակել՝ դրական կողմերը:

Ինչո՞ւ զարմանալ, որ չկարողացանք մեր բարձրավանդակի ռազմագիտական անառիկ կետերն օգտագործել մեր ինքնապաշտպանության համար, կամ մեր ժողովրդի կենսա-հոգեկան կարողությունները վերածել դիմադրական և ստեղծագործ ուժի, կամ մեր մտավորականությանը պարտադրել ազգայնորեն ձևակերպյալ մի աշխարհայեցողություն, գեթ համահայկական և համահայաստանյան զգացում:

Ինչո՞ւ դժգոհել աշխարհից, երբ ինքներս խորշելով իմաստասիրելու արվեստից՝ զրկվեցինք մեր հոգևոր և մարմնական ուժերը գիտականորեն կազմակերպելու կարելիությունից, դարձանք անուժ և անսկզբունք մի

հոտ, խաբվեցինք քաղաքական բոլոր «առևտուրներ»-ի մեջ և ճշմարտորեն հերոսական մեր պայքարների պատմությունը փակեցինք պարտությամբ:

\* \* \*

Ձեռնարկելով այս «փիլիսոփայական-գիտական» ամսագրի հրատարակումը՝ ամենից առաջ պիտի ջանանք դարմանել այս թերիները, այսինքն՝ վերացնել այն պատճառները, որոնք մեզ պահում էին մտավոր մակերեսայնության շրջագծում:

Դրա համար, հոգեփոխության փորձերին զուգահեռ, մենք պիտի կատարենք հորինվածական աշխատանք, ճգնելով իրականացնել հետևյալ առաջադրությունները.

ա) Հորինվածի (սիստեմ) վերածել հայ մտածման արդյունքները, այսինքն՝ ցուցահանել հայ փիլիսոփայության գծերը, մշակել նրա պատմության և ներածության տարրերը: Ուսումնասիրել նաև այժմյա հայ կյանքի հոգևոր խմորումները և վերլուծել որոշ աշխարհայեցողություն ունեցող հայ հոսանքների գաղափարաբանությունը:

բ) Լույս սփռել հայոց հոգեբանական առանձնահատկությունների վրա, միջոցներ առաջարկել մեր հոգեբանական թերիները սրբագրելու և առավելությունները համացեղային ստեղծագործ կորովի խթանն ու խարիսխը դարձնելու: Հոգեբանորեն կազմակերպել մեր ցեղի ինքնապաշտպանության և վերափրկումի գործը:

գ) Մշակել հայոց պատմության փիլիսոփայությունը: Գիտական ուսումնասիրության նյութ դարձնել մեր պատմական կյանքի միջավայրը՝ Հայկական Բարձրա-

վանդակը՝ իր բնական, աշխարհագրական, ցեղագրական, մարդաբանական, տնտեսական, կրոնական և այլ առանձնահատկություններով:

դ) Լույս սփռել հայոց պատմական կյանքի, ընկերաբանական կառույցի և սրա հոլովությունների վրա: Արժեքավորել մեր կյանքի հնագույն և նորագույն հեղափոխությունները, գտնել կամ որոնել մեր պատմ. կյանքի զարգացման տրամաբանական կապն ու տարերային ցնցումների շղթայակցությունը, ինչպես նաև՝ մատնանշել մեր քաղաքական-հասարակական վերածնության ուղիներն ու կարելիությունները:

Մակայն հորինվածական այս աշխատանքով մենք ձգտում ենք ո՛չ թե մեր «արվեստ»-ն ու «մշակույթ»-ը շքեղազարդելու, այլ մեր կյանքի խոռվքը ստեղծագործ ուժի վերածելու նպատակին:

Ըստ այսմ՝ մենք էլ հայ մամուլի մի քանի ընտիր ներկայացուցիչների հետ պիտի հետապնդենք հիմնական մի նպատակ՝ մեր ցեղային «ես»-ի հաղթական ինքնարձանացումը հայոց պատմական կյանքի բնամարգում: Միայն թե խնդիրներին մոտենալու եղանակով, որով մեր առաջարկելիք միջոցներով մենք պիտի տարբերվենք նրանցից:

Մենք ելակետ ունենք հոգեբանական ա՛յն կենսագործ ճշմարտությունը,

**թե առա՛նց ինքնահաղթահարման անկարելի է որևէ այլահաղթահարում:** Այս ասել է՝ արտաքին թշնամու պարտության էական պայմանը՝ մեր ներքին տկարությանց ոչնչացումն է: Որով՝ մեր առաջին նշանաբանն է՝ **«Մա՛հ ներքին տկարությանը»:**

Պայքարելով մեր ներքին տկարությանց դեմ՝ մենք հույս ունենք կազմավորել հոգեբանական ա՛յն նախատվյալները, որոնք ցեղակամ, ասել է՝ ինքնակամ դարձած զանգվածներին անխուսափելիորեն պիտի մղեն մեր առաջադրած երկրորդ նշանաբանի հարագատմանը՝ **«Մա՛հ արտաքին թշնամուն»:**

Այս նպատակները նվաճելու համար անհրաժեշտ է.

ա) Շտապեցնել մեր պայքարի վերսկսումը:

բ) Գիտականություն մտցնել մեր ընդհանուր գործունեության և հոգեճանաչություն՝ մեր վաղվա ռազմարվեստի մեջ:

Պահանջներ են սրանք, որոնք առա՛նց հոգեբանելու, առա՛նց իմաստասիրելու կմնան անիրականանալի բաղձանքներ:

Սովորական փորձառությունից գիտենք, որ առա՛նց մեր նպատակներն իմաստավորելու՝ նրանք կմնան աղոտ, իսկ առա՛նց հորինվածական աշխատանքի՝ մեր ճիգերը կանցնեն ապարդյուն:

Փիլիսոփայությունը, ձգտելով աշխարհի իրականությունները քննության առնող գիտությունների արդյունքներն ընդհանրական հորինվածի վերածել և իմաստավորել՝ ընձեռում է մեզ կենսագործ և ընդհանրարժեք ճշմարտություններ:

Այս ճշմարտությունները վերացական ըմբռումներ չեն, այլ կյանքում հաղթանակներ նվաճելու գործնական միջոցներ:

Որդեգրել այս միջոցները - նշանակում է՝ սպառազինվել հոգեբանորեն, իսկ սպառազեն հոգեբանությամբ պայքարի մտնել - նշանակում է՝ քայլել դեպի հաղթանակ:

Մեզ մնում է... արմատախլել հոգևոր ծուլության և մտավոր մակերեսայնության չարիքները, լծվել հայ իմաստասիրության շենքը վերա - և նորա - կառուցելու աշխատանքին: Ոչի՛նչ կարող է վտանգված մի ժողովուրդի մտավորականությանն ավելի՛ բարձր երջանկություն պատճառել, քան հոգեբանորեն կազմակերպված ներուժ աշխատանքը՝ նրան՝ այդ ժողովուրդին, ստեղծագործելու և հաղթելու արվեստին վարժեցնելու:

Որ իմաստասիրությունն այդպիսի մի արվեստ է, այդ գիտեն իրենց գոյության պայքարը գիտության օրենքներին և զենքերին պատշաճեցնող մեծ ազգերը, այդ կռահել էին հին դարերի հայ բարձր մտավորականները, այդ պիտի գիտնանք նաև մենք՝ ստեղծագործելու և հաղթելու կարողից տառապողներս:

## ՏԱՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ<sup>28</sup>

Տարոնականությունը հիմնելով՝ մենք ուզեցինք բարոյական և հոգևոր վերանորոգումի հետ կառուցված տեսնել հայկական աշխարհայեցողություն, ազգային ընդհանուր դավանանք:

Այդպիսի դավանանք չունի մեր ժամանակների հայությունը: Եկեղեցու աստվածաբանական կենսահայեցողությունը հանրապարտադիր չէ այլևս. կան հարանվանություններ, կա նաև կյանքի պատմական զարգացումը, որ վաղուց ի վեր խախտել է ո՛չ միայն «հանդերձյալ»-ի հավատը, այլև քրիստոնեական զգացումը ընդհանրապես:

Ահա՛ Անգլիայի և Ամերիկայի մեջ ծայր տված «բարոյական վերազինման» շարժումը, որ ճիգ է վերականգնելու քրիստոնեական բարոյականը, որով՝ խոստովանություն, թե տկարացած է մարդկանց կրոնական զգացումը: Հայոց քրիստոնեությունը մի ժամանակ նույնացավ ազգային սկզբունքին՝ «հայ-քրիստոնյա»: Բարձր, շա՛տ բարձր ըմբռնում էր այդ կյանքի բովանդակության մասին՝ մեկը հայոց պատմության ամենակենսիմաստ հղացումներից՝ գործ առավելապես Մամիկոնյանների, որոնց մեջ հայկականությունը հանգել էր բնագանցումի, և աստվածայինը մարմին էր ստացած:

Առանց էաբանական խորքի իմաստ չունի մարդկային կյանքը: Ո՛ւր էության բարձր զգացում կա, այնտեղ

<sup>28</sup> Տպագրվում է որոշ կրճատումներով:

կա գոյությունը բնագանգելու, այսինքն՝ աստվածայինով լցնելու պահանջ: Դրանով էր, որ Մամիկոնյանները ճշմարիտ աստվածապաշտություն, անգերագանգելի հայրենասիրություն և միաժամանակ մեծ հերոսական ստեղծեցին: **Քաջ կարող են լինել շատերը, բայց հերոսական ստեղծում է միայն նա, ով իր տքնության ու գործի, կյանքի ու մահվան խորհուրդի մեջ տեսնում է Աստուծո կամքի արտահայտությունը:** Հերոսը մի՛շտ էլ Աստուծո խոսքի առաքյալն է և հավիտենականության բանաստեղծը:

Ղևոնդ Երեցը Աստուծո հետ էր խոսում, և Եղիշէն Մամիկոնյան մարդու հերոսականի իմաստը տեսնում էր «իմացյալ» մահվան մեջ: Աստուծո հետ խոսողը միայն կարող է «իմացյալ մահ» ունենալ, և նմանը միայն ընդունակ է երկրի վրա անմահ գործեր երկնել:

Ստեղծագործ են այն ազգերը, որոնց էաբանական խորքը որդեգրած գաղափարների և հասարակական կազմակերպության ձևի միջև հակասություններ չկան:

Նա, ով սուրը Աստուծո անունով և Հայրենիքի համար չէր վերցնում, կարող էր ծագումով Մամիկոնյան լինել, բայց բարոյապէս երբէ՛ք պատկանել այդ ընտանիքին:

Մամիկոնյանը նախ և առաջ աշխարհայեցողության մարդ է: Դրա համար էլ նրա գործունեության մեջ կա բարոյական հետևողականություն: Մամիկոնյանի մոտ դուք չէք տեսնի գաղափարաբանական պատեհապաշտություն: Մետաղյա կոռ համոզումների տեր էակ է նա, և նրա բոլոր կառուցումները դրված են բարոյական ժայռի վրա:

Դարձե՛ք դեպի օրվա մեր իրականությունը, և դուք պիտի տեսնեք խարխափումներ և հակասություններ:

Միննույն կազմակերպությունը իր շարժումը սկսում է Հայաստանի անկախության նշանաբանով, իր գաղափարաբանությունը հիմնավորում է մարքսական նյութապաշտական վարդապետությամբ, կռվում է հայ ազգի փրկության համար, քարոզում է համերաշխություն իր ժողովուրդը ճնշող և խոշտանգող թուրք տարրի հետ, ցույցեր է անում՝ հույսը դնելով Եվրոպական պետությունների միջամտության վրա, միանում է այս պետությունների կառույցին սպառնացող Եվրոպայի ընկերվարական կազմակերպություններին և մի օր էլ ներկա Խ. Հայաստանը դավանում է «ազատ», «անկախ», «երջանիկ» հայրենիք և Հայկական Դատը՝ լուծված:

Այս քառսի պատճառով ստեղծված է օրվա անվճռական հայր: Բարոյական անկայունությունը ստեղծում է մտածումի ցրվածություն, երկրորդը՝ նպատակի անորոշություն, իսկ վերջինը՝ ճիգի, գործունեության աննպատակություն:

Մտածումի ցրվածության անմիջական արդյունքներից մեկն է նաև «ես»-ի ներքին պառակտումը, ինչպես և հասարակական կամքի բեկորացումը և հատվածապաշտությունը: Օրվա հայ կյանքի պառակտումները հետևանք են ազգային ընդհանրաբժեք և հանրապարտադիր աշխարհայեցողության չգոյության: Բավական չէ միություն քարոզել, պետք է գտնել կառուցողական նյութերը, միջոցները՝ հոգևոր զենքերը: Միությունը կկառուցվի: Կկառուցվեն բոլոր ճշմարտությունները: Ճշմարտությունը հնարավոր է, երբ գոյիմաստ խոսքի շուրջ հյուսվում են մի շարք աններհակասելի դատողություններ: Միությունը կառուցվում է, երբ կա հանրապարտադիր նպատակը, նաև բարոյական բռունցքը, որ



ձգողական իր կարողականությունը ստանում է էաբանական խորքից: Երեկ եկեղեցին միացուցիչ ուժ էր, որովհետև գորավոր էր հայ մարդու կրոնական զգացումը: Որո՞նք են օրվա հայի տիրական զգացումները: Ինչի՞ շուրջ կարելի է կենտրոնացնել հայությունը:

Նախ՝ հայ մտավորականությունը չունի գիտական պատրաստություն (արժանավորները թո՞ղ ներեն մեզ) և ընդունակ չէ մետաֆիզիկական խորքով և պատմափմաստասիրորեն հիմնավորված հայկական աշխարհայեցողություն ստեղծել: Մեր քաղաքական կազմակերպությունների ծրագրերը օտար ճշմարտությունների թարգմանական խառնարաններ են: Այդտեղ կան հայկական նշանաբաններ, բայց ո՛չ հայկական գաղափարախոսություն: Բոլորը սկսում են «մարդկություն», «մարդկային» բառերով և հայ զանգվածի փրկությունը տեսնում են ընկերային բարենորոգումների մեջ: Այդ ընկերային պահանջները չեն բխում Հայաստանի առավելապես երկրագործական նկարագրից, այլ՝ Եվրոպայի բանվորական դասակարգի պայմաններից: Փոխված են Հայաստանի ազգագրական պատկերը, քաղաքական վիճակը, անգամ Եվրոպայի պայմանները, բայց և այնպես մենք կառչած ենք մնում հին «դասակարգային» մտածումին:

Անստեղծագործ է այդ մտածումը և իր բնույթով՝ զանգվածը պառակտող: Դասակարգային վարդապետությունը ստեղծում է «ընկերային շահակիցներ», բայց ոչ ճակատագրի եղբայրներ: «Դասակարգ»-ը նախատեսում է շահակիցների միություն, որ իր խորքի մեջ համազոր է ազգային օրգանիզմի ընկերային մասնատումին: Մի՛ ասա «հայ աշխատավորություն», «հայ քաղքենիություն», «հայ ավատատեր», «հայ կղեր», ազգը մի՛

պատկերի՛ր ներքուստ պառակտված, այլ ասա՝ «հավիտենական հայկականություն», «հայություն»: Ամբողջականության զգացո՛ւմը միայն կարող է քեզ մղել օրգանական միության գիտակցության պահանջին: Քանի դեռ հատվածապաշտ ես, կեղծ են բոլոր քո քարոզները միության մասին: Քանի դեռ ներքուստ միազգաց, ընկերորեն ամբողջազգաց չես, ունայն են և ինքնախաբեություն քաղաքական քո բոլոր գործերը: Միությունը ստեղծվում է ո՛չ թե կողմերի, հատվածների սակարկություններով, այլ ընդհանուր նպատակի, արժեքի ենթարկվելու բացարձակ կամքով: Ո՛ւր հատվածներ, դասակարգեր կան, այնտեղ չկա նպատակի, արժեքի ընդհանրություն, ուստի և՛ ճշմարտորեն հայրենանպատակ քաղաքականություն, որովհետև սա, ամեն բանից առաջ, ընդհանրական ապագայի մտահոգություն է: Մենք չգիտենք՝ ընկերային ինչ դիրք, բախտ, ճակատագիր կունենան մեր որդիները և նրանց հետնորդները, բայց մենք գիտենք, որ նրանք հայասերունդ են և ուզում ենք, որ բոլոր պարագաներում նրանք մնան այդպիսին՝ հայ: Ընկերային վիճակը, դիրքը անցավոր են, կա՛ միայն ոգու և արյունի հավիտենականություն: Եվ կենսաբանորեն առողջը ա՛յն ժողովուրդն է, որ արթուն բնագդ ունի իր տեսակի հավերժացման համար:

«Տեսակ» հասկացողությունը կենսաբանական է և ո՛չ ընկերային: Այդ նշանակում է կենսաբանական որակները՝ ոգին, արյունը, կարող են կազմել գոյիմաստ աշխարհայեցողության հիմքը, և ո՛չ թե պատմական կամ ընկերային որևէ մտածումը, գաղափարը, բովանդակությունը կամ ձևը: Այդ նշանակում է նույնպես, որ առողջ, ուստի և պատմաստեղծ է ազգային, քաղաքա-

կան, հասարակական ա՛յն կազմակերպությունը, որ իր կենսազգացությունը, բարոյական հրամայականը, նպատակադրությունը, գաղափարախոսությունը, ճշմարտությունները, համոզումները, տեսիլքները և գործելու կամքն ու մեթոդը ստանում է իրեն հարազատ էաբանական խորքից՝ ցեղից:

Որևէ աշխարհայեցողություն պիտի ունենա իր բնագանգական խորքը: Առանց վերացումի չկա ընդհանուր դատողություն, առանց վերջինի՝ ընդհանրապարփակ ճշմարտություն: Աշխարհայեցողությունը նախ և առաջ այդպիսի ճշմարտություն է: Մենք ընդհանրացումի, վերացումի ենք ենթարկում նյութական երևույթները և «նյութ» ընդհանուր հասկացողությամբ հորինում ենք «մատերիալիստական» աշխարհայեցողությունը: Հոգևոր որակների բացարձակումով մենք հիմնավորում ենք «իդեալիստական» (ավելի ճիշտ՝ «սպիրիտուալիստական») աշխարհայեցողությունը: Մրանցից մեկը «քանակական» ըմբռնում է, մյուսը՝ «որակական»՝ նյութ և ոգի: Մրանց գուգադրության կամ հակադրության ըմբռնումով մենք հորինում ենք «դուալիստական» աշխարհայեցողությունը:

\*\*\*

Ցեղի մեջ մենք հանդիպում ենք երկու այդ գոյարմատների կենսաբանական ներդաշնակությանը: Ժառանգականության օրենքով մենք այդտեղ հաստատում ենք նաև ոգու և նյութի (արյան) անսպառելիություն: Այս անսպառելիությունը ապացույց է, որ ցեղը էաբանական խորք է: Դրանից են բխում ազգությունը, որ առավելա-

պէս որակային՝ մշակութային-ոգեկան ըմբռնում է, և ժողովուրդը, որ առավելապէս քանակական, կենսաբանական գումարի, հավաքի հասկացողություն է: Մրանով պիտի բացատրել այն երևույթը, որ խառնվածքով իդէալիստ մարդը սովորաբար ազգայնական է, մինչ մատերիալիստը՝ ընկերապաշտ է, ժողովրդական, դասակարգազգաց: Ազգայնականի համար խանդի և իմաստության աղբյուրը ոգու հերոսագործությունների պատմությունն է, ժողովրդականը կյանքի մեծագույն արժէքը տեսնում է ներկան շահագրգռող ընկերային գաղափարների մեջ:

\* \* \*

Մինչև տարոնականությունը հայ մարդը շա՛տ քիչ անգամ է առիթ ունեցել զբաղվել իր կյանքի էաբանական հարցերով: Նա ապրել ու գործել է օտար ճշմարտություններով՝ հարատևորեն ենթակա զգացումի և բանականության ներքին հակասության: Ո՛ր չկա էաբանական խորքի և որդեգրված բանական համոզումների հարազատություն և ներդաշնակություն, այնտեղ չկա կամքի նպատակաիմաստ ուղղություն, որով և՛ պատմաստեղծ ճիգ ու գործունէություն:

Հին հայերն ունեին իրենց դուալիստական աշխարհայեցողությունը (շեշտը դրված ոգեկան կողմի վրա): Քրիստոնեական մոնոֆիզիստական (միաբնութենական<sup>29</sup>) դավանանքը երկրից կտրելու աստիճան «ոգիաց-

---

<sup>29</sup> Միաբնություն - երրորդության, երեք անձերի մի բնություն ունենալը, համագոյություն, խոսքը Քրիստոսի միաբնակ կամ երկբնակ լինելու մասին է:

րեց» հայ մտածումը: Այստեղ՝ գլխավոր պատճառը, որ մենք եղանք քրիստոնեության համար ամենից շատ արյուն թափողը, բայց գործնականապես նրանից ամենից քիչ օգտվողը:

Գաղափարախոսական մեր բոլոր խարխափանքները, քաղաքական սխալները, կազմակերպական թերիները պայմանավորվեցին նրանով, որ մենք չունեցանք հայկականորեն հիմնավորված աշխարհայեցողություն: Անձանոթ մեր էաբանական խորքին՝ ցեղին, իմաստությունը և ուղղությունը չառանք հայոց անցյալը վարող ուժերից, այլ՝ Եվրոպայի ներկան խռովող ընկերային հոսանքներից: Այդ հոսանքները սնանկացան Եվրոպայի մեջ, իսկ մենք կորցրեցինք նաև Հայրենիքի և ժողովուրդի մեծ մասը և սրա հետ՝ կամքի և մտքի կենտրոնացման ընդունակությունը: Բայց կառչած մտավոր հին նախապաշարումներին՝ մենք շարունակում ենք մնալ բազմազաղափար, բազմանպատակ, բազմուղի, ուստի՝ հատվածամոլ, ցրվողական և քաղաքականապես անստեղծագործ:

Բոլոր պատմակառուցումների առաջին պայմանը հոգեկան ուժերի կենտրոնացումն է և ամբողջականության զգացումը: Մեկը ճակատագրական քայլերից դեպի ոգեկան կենտրոնացումը և ուժաստեղծումը՝ նոր աշխարհայեցողության կառուցումն է: Քանի դեռ պակասավոր էր հասկացողությունը կենսաբանության մասին, մարդիկ խոսում էին «բացարձակ»-ներից: Այդ տիեզերապաշտությունը մեր ճակատագիրը ստորադասում էր գերբնականին, ընդհանուրին: Գերբնականը անկենսաբանական հավիտենականությունն էր և ընդհանուրը՝ մարդկությունը: Հավիտենականը ապրվում էր որպես

նախախնամություն, կամք տիեզերական մեքենականություն ինքյան<sup>30</sup>, իսկ մարդկությունը՝ որպես վերացական գաղափար: Էապես սա համագոր էր բնական կապի խզումին կենդանի մարդու և Աստուծո, անհատական անցավորության և տեսակի հավիտենականության միջև: Մարդու կրոնական զգացումի աղարտման գլխավոր պատճառներից մեկը «մարդկություն», «մարդկային» վերացական հասկացողությունները կուռք դարձնելն էր: Այս է պատճառը այն իրողության, որ աշխարհաբաղաբացիական բոլոր ոգորումները, ի վերջո, հանգում են անկրոնության:

Մենք մատնանշեցինք մեր նոր աշխարհայեցողության էաբանական խորքը - ցեղը: Որպես կենսաբանական ըմբռնում՝ դա նախատեսում է բնական կապ մարդու և հավիտենականության միջև: Ոգու գծով դա մեզ առաջնորդում է դեպի աստվածայինի կենդանի զգացումը, արյունի գծով՝ դեպի կյանքի հավիտենականության զգացումը: Ո՛ւր հավիտենականության առողջ զգացում կա, այնտեղ ներկա է Աստուծո կամքը: Իր խորքի մեջ ցեղը Աստուծո կամքի արտահայտություն է: Դա նաև օրգանական միություն է ոգու և նյութի, որով՝ բնորեն համադիր աշխարհայեցողության խարիսխ:

Ցեղն է միայն ընդունակ դնել հավիտենական, սրբազան և գորութենավոր նպատակ: Ցեղի հավիտենական խնդիրը Հայրենիքն է: Ցեղի համար դա ո՛չ թե շահագործելի հող է և ավելի լավ ապրելու միջոց, այլ՝ էության պահանջ: Հայրենիք տեսչալով՝ մենք ավելի ուզում ենք

---

<sup>30</sup> ինքնին

Մասիսի ճակատը տեսնել, քան Արարատյան դաշտի մեջ բամբակ մշակել: Մեր նախահայրերի սրբաստանները և գերեզմանները ձգողական ավելի մեծ խորհուրդ ունեն, քան Մշո, Կարնո կամ Վանա շուկաները:

Տարբեր են ցեղի և ժողովուրդի բարոյական բովանդակությունները: Ժողովուրդը մի շտ էլ առօրյայի մտահոգություն է, Ցեղը՝ էության տանջանք: Տանջանքով շաղախված նպատակը միայն կարող է շարժման մեջ դնել մեր ողջ էությունը: Դավանելով ցեղային աշխարհայեցողություն՝ մենք մեզ ամբողջացած պիտի զգանք որպես ներքին մարդ և ընկերության անդամ: Ներքին ամբողջականության զգացումը ինքնին ուժերի կրկնապատկում է անհատի մեջ և հասարակական ներդաշնակության, ազգային օրգանական միության պահանջ:

Ցեղի առաջին հրամայականն է՝ հայրենատիրություն: Այդ կամքով վերցրու՛ սուր, գրիչ, բահ, ինչ որ կարող ես: **Բոլոր պարագաներում դու նպատակի զինվոր ես և ճակատագրի եղբայր նրանցից ամեն մեկին, որոնք տքնել են, տքնում են ու պիտի տքնեն հավիտենական Հայաստանի համար:** Այդպես գործելով՝ դու քո մեջ պիտի զգաս ներկայությունը Մամիկոնյան հայի: Դա արդեն բարոյական սպառազինություն է և հաղթանակի ապահովություն:

«Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 11

ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ<sup>31</sup>

Քաղաքական աշխատանք տանել կարենալու համար  
անհրաժեշտ է երեք գործոն.

1) Պատմական զգացում:

2) Կազմակերպված ուժ:

3) Ապագայատենչ խռովք:

Առանց պատմական զգացումի՝ խորք, որով և ստեղծագործական ներքնակ գորութենականություն չունի որևէ կազմակերպություն, առանց վերջինի՝ նպատակախիմաստ չէ որևէ ապագայատենչություն: Ավելին՝ առանց երեք այս գործոնների ներդաշնակության չկա ընդհանրապես պատմաստեղծումի որևէ իրական ճիգ:

Մեր ձախողանքների բուն պատճառը. թերի չէ՞ր պատմական զգացումը, պակասավոր չէ՞ր կազմակերպությունը, և անորոշ չէ՞ր պատկերումը ապագայի մասին:

Վերցնենք ապագան. ի՞նչ էինք ուզում՝ կյանքի, պատվի, գույքի ապահովում, ավտոնոմիա, ֆեդերացիա, ընկերային հեղաշրջում, անկախություն: Մենք անծանոթ էինք նպատակի տեմպերամենտի օրենքին: Նպատակի թովչանքը ստեղծագործական մեծ ուժ է, և այս ուժը ազդու է, երբ նպատակի սահմանումը հստակ է և

---

<sup>31</sup> Տպագրվում է որոշ կրճատումներով:



վճռորոշ: Բոլոր կարգի պատեհապաշտությունները առաջ են գալիս նպատակի անստուգությունից կամ այլազան նպատակների ներքին բախումից:

Դառնանք պատմական զգացումին, ի՞նչ բանին ավելի ականջ տված ենք. մեր պատմության ձայնի՞ն, թե՞ Պոլսից, Թիֆլիսից եկած հովերուն: Ի՞նչպես էինք ապրում հայկական ողբերգությունը. ավելի իբրև ներքի՞ն, թե՞ իբրև արտաքին պատճառների գումար: Որի՞ն էինք կապել փրկության հույսը. հայ ժողովրդի ներքին կարողությանը, թե՞ Եվրոպային:

Ի՞նչ էր կազմակերպության ուժը. անհատներ, բայց ոչ զանգված, խմբեր, բայց երբեք զինված բազմություն: Պայմանները - աննպաստ էին անշո՛ւշտ: Բայց հեղափոխություն ասել է՝ նախ և առաջ պայմանների հաղթահարում: Երբ չկա այդ, անհատները հերոսական կատեղծեն, բազմությունները կդառնան կրավորական զոհ, և հեղափոխությունը կանցնի աննպատակ:

Հեղափոխությունը և՛ տարերային ուժ է, և՛ մտածումի սիստեմ: Տարերքով է պայմանավորվում ոգու ընդհանուր շարժը, սիստեմով՝ կազմակերպության արտահայտչական թափը: Այսպես, որովհետև կազմակերպությունը ամեն բանից առաջ խառնվածք է, նկարագիր: Ի՞նչն էր պատճառը, սակայն, որ հայ հեղափոխությունը ընդհանուր շարժի չվերածվեց:

Մովորություն է պատճառները որոնել «իրական պայմանների» մեջ: Բայց հնարավո՞ր է ուղիղ ըմբռնում «իրական պայմանների» մասին, երբ պակաս է պատմական զգացումը, և հստակորոշ չէ նպատակը:

Հայ հեղափոխությունը հաջողեց մեկ բանի մեջ. նա պանծացրեց նահատակության ոգին: Մեծ նվաճում էր

այդ՝ հերոսածին հղության, ճակատագիրը հաղթահարելու ուղիղ ճանապարհ:

Ո՞րտեղից էր գալիս այդ ոգին - ահա՛ թե ի՛նչը գիտականորեն ուսումնասիրված չէր: Մենք հոգեգիտություն չմտցրեցինք մեր շարժումի մեջ, չծանոթացանք մեր առաքինությունների աղբյուրին, և հետևանքը այն եղավ, որ նահատակության ոգին ի վերջո հանգեցավ կրավորական ոչնչացումի:

Հայ հեղափոխության մեկ այլ նվաճումը եղավ փրկության տեսիլքը: Տեսիլք, բայց ո՛չ գործնական նպատակ: Ընկերային բովանդակություն ունեցող գործնական նպատակը նախ հանրապարտադիր է և միասնեո: Հայ հեղափոխությունը իր նպատակները հաշտեցրեց քաղաքական վայրկյանի պահանջներին, դարձավ նպատակի պատեհապաշտ - այստեղ՝ ներքին պատճառը պատմական տխուր եզրակացության:

Տարբեր նպատակ էինք հետապնդում Համիդյան օրերին և հանկարծ կառչեցինք օսմանյան սահմանադրության համապետական նպատակներին: Բոլորովին այլ պատկերում ունեինք սահմանադրության մասին, և հանկարծ դրվեցինք ջարդի պատկերի առջև: Չէինք կռահած որևէ արարատյան անկախություն և հանկարծ ունեցանք հանրապետություն: Նոր սկսեցինք քարոզել այն (Միացյալ և Անկախ Հայաստան), ինչ որ որդեգրած պիտի լինեինք 30 տարի առաջ, և հանկարծ նետվեցինք գաղութներ:

Իրոք, ողբերգական ճակատագիր՝ հակասություն պատմական ընդհանուր առաջընթացի և մեր նպատակների, իրականության և մեր իդեալների:

Պատճառագիտորեն քննել այս երևույթը նշանակում է ո՛չ միայն վերծանել մեր պատմությունը, այլև գտնել մեր ճակատագիրը շոշափող հարցերի բանալին:

Անմիջապես ասենք, որ մտքի տառապանքից ծնունդ առան երկու նոր շարժումներ՝ ցեղակրոնությունը և տարոնականությունը:

\*\*\*

Մենք ունեինք կազմակերպություն. հակասություն չկա՞ր իր ընկերվարական ծրագրի և ցեղաշունչ գործի, իր մտավորականի և ռազմիկի հոգեաշխարհների միջև: Կարդացե՛ք Դաշնակցության ծրագիրը և կարդացե՛ք նրա պատմությունը, և դուք պիտի տեսնեք, որ չկա ոգու և արյան ներդաշնակություն: Ծրագիրը պաղ միջազգայնականություն է, պատմությունը՝ խռովիչ, սրտատուչ հայկականություն: Ծրագրի մեջ լեզու առած է եվրոպական-ռուսական դասակարգային մտածումը, պատմությունը՝ հայտնությունն է հայկական ցավի և հերոսական ոգու: Այս հակասությունից չտուժեցի՞ն հեղափոխության նպատակը և գործը: Ո՛ւր երկու ոգիների պայքար կա, այնտեղ կա ներքին տատանում, քաղաքական դեգերում և ձախողանք:

Ի՞նչն էր պատճառը այդ երևույթի: Մեր վերածնունդը թերի էր: Առաջնորդող լույսը ամբողջովին չստացանք հայոց պատմությունից, այլ նաև Եվրոպայի ընկերային շարժումներից: Եվրոպայի ընկերային շարժումները իրենց միջավայրին հատուկ հոգետնտեսական հղություններ, ոգորումներ էին, մինչդեռ հայ երկրի և ժողովուրդի կյանքի պայմանները այլ էին: Մենք շեղվեցինք

Քրիստափորի «Հավելյալ արյան» տեսության գծից: Դա պատգամ էր՝ պատմական զգացումով օծուն խորին ծանոթություն ճակատագրի: Ռուսական 1905-ի հեղափոխությունը, օսմանյան 1908-ի սահմանադրությունը վարագուրեցին մեր աչքերը: Մենք կտրվեցինք ոգու իրականությունից: Հայոց պատմության ձայնը չմնաց անվիճելի առաջնորդի դերի մեջ: Եվ այդ եղավ շնորհիվ այն իրողության, որ մենք անձանոթ էինք մեր վերածնունդը ճշմարտորեն հոգեգծող գործոնին՝ տարոնականությամբ:

Հոգեգիտորեն մոտեցանք հայոց պատմության ներքին տարերքին, բախեցինք մեր ցեղի ոգու դուռը, օրհասական կանչով ոտքի հանեցինք բոլոր ժամանակները, իմաստասիրաբար փորձեցինք վերծանել այն հարցը, թե ինչու սկզբից մինչև այժմ այդպիսին է տարոնական հայր՝ ցեղի գոյության պայքարի մեջ զուտ հայկական կրոնական խանդ դնող:

Եթե ուզում եք նորը ստեղծել, դիմեցե՛ք ձեր պատմության հին ուժերին, խառնվածքի ա՛յն տարրին, որ անցյալի մեջ ստեղծագործ է եղել և հավիտենական: «Վերածնունդ» նշանակում է պատմական ոգու վերակենդանացում: Վերածնունդ չկա և ո՛չ մի տեղ, ուր բացակայում է իմացական տառապանք և զգացումի խռովք՝ անցյալը կենդանիորեն հոգեգծելու և դարձնելու ներկայի առաջնորդը: Մեր «Վերածնունդ»-ի մեջ գործեցին խորթ, հայոց պատմությանն անձանոթ տարրեր: Այդ էր պատճառը, որ հեղափոխությունը չդարձավ խորքով ազգային հոգեբանություն, արտահայտությամբ՝ համահայկական շարժում:

Ի՞նչ ենք ուզում մենք: Մենք ուզում ենք իրար շղթայել, իրարով լրացնել քաղաքական կորովի երեք անհրաժեշտ տարրերը՝ պատմական զգացումը, կազմակերպված ուժը և ապագայատենչ խռովքը: Առաջինի աղբյուրը տարոնականությունն է՝ հայոց պատմությունը վարող հավիտենական ուժը: Երկրորդը ինքը՝ Դաշնակցությունն է, ժամանակի համահայկական միակ կազմակերպված ուժը: Երրորդը՝ ցեղակրոնությունը, որ ապագայի տենչ է, ուղին նոր սերունդի:

Տգիստությունը և չարությունը միայն կարող են հակասություն կամ իրարամերժություն տեսնել երեք այս հոգևոր բովանդակությունների միջև:

Հայը վաղուց կորցրել է աշխարհը համադրաբար պատկերելու, որով իր որակները համադրորեն օգտագործելու ընդունակությունը: Քանի դեռ հոգենորոգաբար չենք վերակառուցել այդ ընդունակությունը, կիսատ պիտի մնան մեր բոլոր գործերը, և ձախող՝ ճակատագիրը հեղաշրջելու փորձերը:

**Ոգու գործ է կազմակերպությունը. իսկ ոգին գալիս է ցեղից:** Գալիս է այնպես, ինչպես արյունը: Մարդը ո՛չ միայն ֆիզիկական հատկանիշների գումար է, այլև հոգեկան գործոնների մի ամբողջություն: Զուգահեռականություն, ներքին փոխադարձ կապ կա ա՛յն հատկանիշների և այս գործոնների միջև: Ո՛չ միայն ժառանգականությունը, այլև պատմությունը, մշակույթը ունեն գարգացման իրենց ներքին «տրամաբանությունը»: Ժառանգականությունը նախ և առաջ տիպի և խառնվածքի փոխանցում է: «Տիպ»-ը և՛ մարմնական ըմբռնում է, և՛ հոգեկան: Իսկ խառնվածքը: Ֆիզիկական «տիպ»-ի հատկանիշները նրանք են, որոնք մնում են դիակի վրա:

«Դիակ» ստացվում է ա՛յն ժամանակ, երբ որևէ էակի մեջ սպառվում է գոյության դինամիզմը: Դիակը չունի գոյության ուժականություն, որով նաև՝ խառնվածք: «Դիակ» նշանակում է կենսաբանական ուժերի դադար: Ի՞նչ են այս ուժերը, որոնց «դադարում»-ով որևէ օրգանիզմ գրկվում է խառնվածքից: Այդ ուժերը կենսահոգևոր գործոններ են:

Դեռ Արիստոտելը գիտեր և հիմնավորեց, թե ոգին է մարմնի ստեղծիչը: «Էնթելեքիան» է, որ կառուցում է «օրգանոն»-ը: «Էնթելեքիան» ոգին է և «օրգանոն»-ը՝ օրգանիզմը: Ամեն կազմակերպություն ընկերային օրգանիզմ է: Որևէ կազմակերպություն կենսիմաստ է, երբ ունի պատմական առաջադրություններ: Ոգին պայմանավորում է «կենդանությունը», իսկ պատմությունը, որով և պատմական իմաստով նպատակադիր կազմակերպությունը՝ կենդանի մարդոց գործ է: Այսինքն, նախ և առաջ՝ ոգու գործ:

Երբ գիտենք, որ ոգին և արյունը ցեղից են գալիս, երբ գիտենք, կազմակերպությունը ոգին է, իսկ հեղափոխությունը, կռիվը՝ արյունի նվիրաբերում: Երբ գիտենք այս բաները և մնում ենք անցեղաճանաչ, այդ, այդ պարագայում իրավունք չունենք դատապարտել աշխարհը: Մենք ենք մեր ձախողանքների պատճառը:

«Հիմնապես» ինչո՞վ է բացատրվիում 1915-ի աղետը: Մեր գործիչները էապես երկու բան են ասում.

1) Անակնկալորեն պայթեց համաշխարհային պատերազմը:

2) Թուրքերը մեզ խաբեցին:

Ինքնարդարացո՞ւմ է սա: Չես ունեցել կռահումի ընդունակություն, չես նախապատրաստվել, և թշնամին,

օգտվելով քո միասնությունից, չսպասված հարվածներ է հասցրել քեզ: Եվ դու ջախջախված ու պարտված ես, չնայած որ պարտությանդ համեմատությամբ դու տկար չէիր, և թշնամին հզոր չէր՝ իր տարած հաղթության համեմատությամբ:

Ո՞վ է մեղավորը:

Այնուհետև կրկնի՛ր - «Թուրքը ոճրագործ է, դահիճ, նենգ, կեղծավոր, խաբեբա»: Աշխարհը կփոխվի՞:

Աշխարհը կփոխվի ինքնասարբազրումով, որ ասել է՝ գոջումի մեծ ողբերգանք և նորակերտումի անդուլ ճիգ:

Չղջումը մեծ առաքինություն է և ապագա կառուցելու բարոյական ուժ: Հրեաները լալիս էին Եփրատի եզրին և այժմ էլ ունեն «Լացի պատ»-ը: Հրեաների ամբողջական ապագան «Լացի պատ»-ի խորհուրդի մեջ է: Հայը հոգեգիտության մասին հասկացողություն չունի: Բայց ողբերգությունից ավելի մեծ ստեղծագործող ուժ չկա երկնքի տակ: Ճշմարտորեն ողբերգել, նշանակում է գոյության ողջ դառնությամբ, ցավով, ցասումով, ոգորումով խորհրդածել ճակատագրի մասին: Նշանակում է ինքնաժխտումի սարսուռով և կարոտով ելուղի փնտրել այն բանի համար, որը քանի դեռ հայտնություն չի ստացել, վերջ չունի քո բարոյական տագնապը:

Առանց պատմության բոլոր ուժերի ներդաշնակության անհնար է պատմական գործ կատարել:

Ոգու բանակ - ահա՛ թե ի՛նչ դիմագծություն պիտի ունենա հայության նոր կազմակերպությունը:

Ի՞նչ կարող են տալ մեզ այդ ուղղությամբ տարոնականությունը և ցեղակրոնությունը:

Տարոնականությունը հայ ցեղի հոգեբարոյական այն ուժն է, որով դիմագծված է մեր պատմական անցյալը:

Վերցրե՛ք հայոց պատմությունն ստեղծելու առաջին ճիգը: Այրարատը գրավող տարոնական հայերը, անշո՛ւշտ, իրենց բուն Հայրենիք Տարոնի մեջ քաղաքական ուժ և կազմակերպություն ունեին: Եվ այդ ուժը մեծ էր, Հայաստանաստեղծ, հայակերտիչ: Վերցրե՛ք Վահագնապաշտության խորհուրդը, Արտաշեսյանների՝ Հայաստանը ազատագրորեն և քաղաքականապես ամբողջացնելու հսկայաթափ կորովը: Վերցրե՛ք հայոց քրիստոնեացումի բարոյա-քաղաքական խորհուրդը, Մեսրոպի գործի իմաստը, Մամիկոնյանների գերմարդկային հայրենասիրությունը, անգամ հոգեգիտորեն դեռ չվերծանված «Սուլթան Ս. Կարապետ» որակում-ըմբռնումը հոգեբանականը, մեր մեծ մատենագիրների տարոնցիական ծագումը և առհասարակ հայ մատենագիրների տարոնական ոգին:

Այս բոլոր ոգորումները, խռովքները, նվաճումները իրենց եռքը ստացած Տարոնից և հաճախ ձևակերպումի հանգած տարոնական հայերից նվաճված և նրանցով բնակված Այրարատի մեջ (ուրիշ ի՞նչ բանի մեջ փնտրել Տարոնի և Այրարատի զինակցության գաղտնիքը) - այո՛, սրանք է, որ կազմում են մեր պատմական ճակատագիրը: «Պատմական ճակատագիր» հասկացողությունը նախատեսում է և՛ բնագորը, և՛ գիտակցությունը, և՛ անբանականը, և՛ բանականը: Դա լիամփոփ կյանքն է՝ իր բոլոր հոլովություներով, որով և՛ ներկայի հոգևոր պատվանդանը և ապագայի բանալին:

«Վերածնունդ» նշանակում է պատմական ճակատագրի լիակատար վերապրում: Ազգը, որը անընդունակ է իր անցյալի մեջ որոնել իր ներկայի խորհուրդը և ապագայի աստղը, նման ազգը գուրկ է պատմական



զգացումից, որով՝ նոր պատմություն կերտելու կորովից և հանճարից: Մարդաբան Ֆոն Լուչանը, որ այդքան ինամով (նաև բարյացակամորեն) ուսումնասիրեց մեր ցեղային պատկանելիության հարցը և ապրող ժողովուրդի կյանքը, մեզ որակեց «քաղաքականապես հիմար»: Քաղաքական ամեն հիմարություն պայմանավորվում է նախ և առաջ պատմական զգացումի բացակայությամբ: Ահա մեր ինքնախաբեությունների, սխալանքների և, վերջին հաշվով, աղետավոր ձախողանքների ներքին պատճառը: Թողնում ենք այլևս, որ հայրենասեր ամեն հայ ինքն անձամբ խորհրդածի այն մասին, թե ի՞նչ կարող է տալ մեզ տարոնականությունը, որ իր խորքի մեջ հայոց պատմական զգացումի գիտությունն է, ցեղային վերադաստիարակության ուսմունքը:

\*\*\*

Ցեղակրոնությունը մեր նոր սերունդի տարոնական խոռվքն է: Դաշնակցականությունը ապրել և ըմբռնել իբրև մեր ցեղի հավիտենական ոգու հայտնությունը, կրոնականություն՝ զգացումի և բանականության, սրտի և մտքի մոլեռանդություն դնել ցեղի պայքարը և ճակատագիրը վարող կազմակերպության մեջ - ահա՛ ցեղակրոնության եությունը և նպատակը:

Նոր սերունդին հասուկ է կյանքը իբրև երջանկության խորհուրդ և ամբողջականություն ապրելու մղումը: Նա մի՛ շտ էլ շղթայակցություն է փնտրում գոյության բնեռների միջև. գիտի գոյության ողջ կարոտով շե՛ շտ դնել այն հարցի վրա, թե «որտեղից՞ ենք գալիս, ո՞ւր ենք գնում»:

Նոր սերունդը հավասարապես ավանդապաշտ է և ապագայատենչ: Նա առեղծվածային հանգույց է անցյալի և ապագայի միջև: Գիտե լալ անցյալի համար և մոլեգնել ապագայի կարոտից: Հավասար խանդով կարող է սարսռալ Վարդան Սպարապետի երիվարի պատկերի առջև և տենչալ օդանավորություն: Նա տպավորումի էակ է նախ, դրոշմվելու անգիտակցական բաղձանք և ըստ միջավայրի բարոյական պայմանների ներազդեցության՝ ընդունակ և՛ Հայաստանի համար քաղցրորեն մեռնելու, և՛ սիրուց փխրվելու, և՛ համամարդկային գաղափարի համար զոհվելու, և՛ մանր եսականությունը ճակատագիր դարձնելու:

Ցեղորեն առողջ նոր սերունդը նախատեսում է հավիտենականության խանդով օծուն դաստիարակություն:

**Ի՞նչ է հավիտենականությունը - կրակ՝ անցյալի մոխիրների տակ և բոցավառում՝ ապագայի հորիզոնի վրա:**

Տարերքի էակությամբ է պայմանավորվում աշխարհի համասեռության ըմբռնումը և անցյալի ու ապագայի էակությամբ՝ հավիտենականությունը: Ժամանակը ապրումային մի առաջընթաց է և ապրումների շղթայակցությունը, նրանց տրամաբանական ներքին կապակցությունն է միայն ընձեռում ամբողջականության, որով և՛ հավիտենականության զգացումը:

Ցեղակրոնությունը մեր ժամանակների առաջին կազմակերպված փորձն է՝ ամբողջական հայ մարդը ստեղծելու՝ տարոնատիպ հայր:

Անցյալը միայն մոխիր պատկերել ու ապագան՝ անորոշ, մշուշ, խավար, նշանակում է՝ խորտակվել ներկայի մեջ: Այդպես է լինում, երբ չկա ուղիղ ըմբռնում հավիտե-

նականության և ամբողջականության մասին, երբ ոգին, անցյալը և ապագան միմյանց զոդելու տքնություն չունի:

Ցեղակրոնությունը, ահա՛, այդ տքնությունն է: Եվ դա պատմագործումի լիազգաց կարոտ, նպատակ և իմաստ ունեցող միակ հոգեշարժն է:

Սպառազինվել և տարոնական պատմական զգացումով, սպառազինվել և ցեղակրոնության բերած ամբողջականության իդեալով և խռովքոտ ապագայատենչությամբ – ահա՛ հոգևոր այն զենքերը, որոնք հայոց մարտական կազմակերպությունը կարող են վերածել պատմաստեղծ ուժի:

Չհասկանալ այս բանը, նշանակում է կամ աղքատիկ գոհունակություն ցուցահանել ահավոր եղածի և տխուր ներկայի հանդեպ, կամ չհասկանալ ժամանակի ոգին:

Իմաստությունը և ոգին քաղել տարոնականությունից, խանդը՝ ցեղակրոնությունից, և գործը վստահել դաշնակցականությանը: Ուժերի այս համադրությամբ միայն մենք ընդունակ կդառնանք պատմական գործ կատարելու, ապագա ստեղծելու:

## ՈՒԺԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ<sup>32</sup>

Նիցշեն իմաստասիրության մեջ մտցրեց կենագործ ա՛յն ըմբռնումը, թե ճշմարտությունը մի տեսակ մոլորություն է, առա՛նց որի, սակայն, որևէ էակ անկարող է կենսաբանորեն նպատակահարմար մի քայլ առնել:

Ելնելով այս վճռից՝ կենսաբան իմաստասերները և գործնապաշտության (պրագմատիզմ) հետևող մտածողները զարգացրին և ընդլայնեցին ա՛յն տեսակետը, թե ճշմարտությունը գործունեության մի միջոց է՝ աշխատելու և նվաճումներ անելու մի եղանակ (մեթոդ):

Ըստ «գործիական ճշմարտության» (ինստրումենտալ ճշմարտություն) այս ըմբռնումի՝ էակները և նրանց իմաստավորումները ձախողում կամ հաջողում են շնորհիվ իրենց որդեգրած ճշմարտությունների կենագործ կամ կենսապան ներքնակ հատկության: Ըստ այսմ՝ մարդիկ և մարդկային իմաստավորումները՝ ցեղ, ազգ, ժողովուրդ, ապրում են իրենց կառուցած ճշմարտությունների ուժով և մեռնում սրանց անուժական, անգործնական նկարագրի հետևանքով:

Կան առաջատար ճշմարտություններ, որոնք դրդում են ենթակային՝ օրհնել անցյալը, սիրել ներկան և այսել

---

<sup>32</sup> Հոդվածը 1932թ. «Բացարձակապաշտության և կարելիականության տեսության գործնական նշանակությունը» վերնագրով՝ ընդարձակ կերպով տպագրվել է «Խոռվք» ամսագրում:

Այն, թեև բավականին կրճատված, սակայն պահպանելով հիմնական էությունը՝ 1939թ. «Ուժական ճշմարտություն» վերնագրով արտատպվել է «Տարօնի Արծիվ»-ում (թիվ 1): (Հայկ Ասատրյան – Հատընտիր, 2004)

ապագան; և, ընդհակառակն, այնպիսիներ, որոնք անցյալը դարձնում են անեծքի, ներկան՝ ցավի և ապագան՝ սարսափի աղբյուր:

Առաջինները լավատեսության, ասել է՝ հաղթանակի հոգևոր զենքեր են, երկրորդները՝ հոռետեսության, պարտվողականության նախադրյալներ:

Ամեն վերելքի կամ անկման մեջ, սակայն, դեր ունեն ոչ միայն մեր որդեգրած ճշմարտությունների բովանդակությունները՝ «ի նչ»-ը, այլև մեր ըմբռնելակերպը նրանց մասին՝ «որպե՛ս»-ը:

Ըստ գործնապաշտ մտածողների՝ Ջեյմս և համախոհներ, «ճշմարտություններն ապրում են վարկով», իսկ ամեն «վարկ» նախատեսում է վարկավորող մի աղբյուր, արժեքավորող մի «ես»:

Ինչպես որ առա՛նց արժեքավորման չկա արժեք, այդպես էլ՝ առա՛նց ճշմարտագրման՝ չկա ճշմարտություն, իսկ ամեն ճշմարտագրում արդյունք է «ես»-ի, ենթակայի, ճշմարտագրողի ներհոգևոր ոգորումների, դեգերումների, գործունեության:

Ճշմարտությունը խտացյալ մի հորինույթ է, իսկ առա՛նց կառուցումի չկա հորինույթ, որով՝ ճշմարտությունը կառուցվում է - նա կառույց է, իսկ ամեն կառույց հնարավոր է մի կառուցողի միջոցով:

Ճշմարտագրելիս յուրաքանչյուր ոք վարվում է այնպես, ինչպես Նարեկացին իր «Ողբերգության Մատյան»-ը կազմելիս («Մտացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, դիզի, բարդեցի, կառուցի, ցուցի»):

Ինչպես ամեն երկ, այնպես էլ ամեն ճշմարտություն, նախ մեր էության դրսևորումն է: Բայց երկասիրելիս մենք ազատվում ենք ներքին տանջանքից, մինչ ճշմար-

տագործելիս կապվում ենք մեր կռահումների ձևին և բովանդակությանը: Երկասիրելիս մենք թոթափում ենք անցյալը, ճշմարտագործելիս՝ սպառազինվում ենք ապագայի համար: Մենք ենք ստեղծում, կառուցում մեր ճշմարտությունները, ապա՝ դրանք դարձնում մեր գլխին պատուհաս կամ օրհնաբեր նվաճումների միջոց:

Ճշմարտությունները մի՛շտ էլ ընդհանրացումներ են, այսինքն՝ բանականության ընձեռած բանաձևումներ: Նրանց ճակատագիրը, սակայն, որոշվում է ա՛յն դրդապատճառներով, որոնց ներազդեցությամբ կամ պարտադրումով բանականությունը մղվում է վերացման, ընդհանրացման, բանաձևումի, կարճ՝ ճշմարտագործման:

Ճշմարտությանց կազմավորման խնդրում վճռական դեր են խաղում հատկապես երկու տարբերորակ ազդակներ: Դրանցից մեկը կերպզգացության գործոն միտքն է, մյուսը՝ գոյզգացության զինակիր կամքը:

Առաջինով պայմանավորվում է մեր ճշմարտությանց ձևական կողմը, երկրորդով՝ բովանդակայինը:

Ըստ այսմ՝ ճշմարտությունը մտային և կամային որակների փոխադարձ ազդեցությամբ և կապակցությամբ առաջ եկած մի համադրույթ է:

Առաջատար և կենագործ են ա՛յն ճշմարտությունները, որոնց համադրույթը տեղի է ունեցել մտային և կամային որակների՝ ձևի և բովանդակության բնաչափ ներգործությամբ, չափի զգացումով, որոնցում առանց միակողմանի չափազանցումի հաշվի են առնված ճշմարտագործ ենթակայի բանական իրավունքները և կենսաբանական շահերը, և վերջապես՝ որոնք ո՛չ սոսկական

մտորոշումներ են, ո՛չ էլ՝ սոսկական կամավճիռներ, այլ՝ վճռորոշումներ:

Նման ճշմարտությունները մենք անվանում ենք ամբողջականության ճշմարտություններ, որովհետև նրանցով միա՛յն ենթական հրապարակ է գալիս՝ իբրև ամբողջական անձնավորություն, իբրև «բանական» և «կենսաբանական» էակ միաժամանակ:

Կենսաբանական մի էակ մի՛շտ էլ շահեր է որոնում, որով՝ նրա ճշմարտություններն անխուսափելիորեն օգտապաշտական (ուտիլիտարիստական) նպատակադրություն ունեն:

Որքան էլ մարդկային մեր բանականությունը հաճախ «գերերկրային»-ի սնապարծությամբ է համակում մեզ, այնուամենայնիվ, մեր ճշմարտությունների գործնական արժեքը չափորոշվում է նրանով, թե ինչքան և որպես են նրանք ծառայում մեր կենսաբանական նպատակներին:

Արժեքավոր է ամե՛ն ճշմարտություն, որ կենսաբանորեն նպատակահարմար է: Անարժեք և անիմաստ է ամե՛ն ճշմարտություն, որ կենսաբանորեն նպատակահարմար չէ:

Կենսաբանորեն նպատակահարմար ճշմարտությանց ամենացայտուն հատկանիշն ա՛յն է, որ նրանք կրում են բարձր խառնվածքի (տեմպերամենտ) և ներքին ուժականության (դինամիկա) դրոշմը:

Ուժական ճշմարտությունների հեղինակը մի հանճար է, որ ինչպես Նիցշեն է ասում՝ «դարերի սիրտը բռնում է ձեռքը և ճմլում մեղրամոմի պես»:

\*\*\*  
Թեյն-Կրե 5 1915. in 20 ԶԵԵ

Դավիթ Անհաղթը, հերքելով Պյուռհոն «իմաստակ»-ի թերհավատությունը, հանգեց իմացաբանական լավատեսության՝ կարելիապաշտության: Ըստ նրա՝ իմաստունը նա է, ով ընդունում է կարելիությունը, այսինքն՝ լավատեսորեն ձգտում է հնարավորի իրականացման: Դարեր հետո Դավիթ Անհաղթի ժողովուրդը, կանգնած իր գոյության ահարկուորեն սրված կնճիռի առջև, այլ մի դատելակերպ որդեգրեց՝ մեծապես բացարձակապաշտական:

Այսօր, մեր կյանքի գերագույն կնճիռը մեր Հայրենիքի վերանվաճման խնդիրն է:

Բայց ի՞նչ ենք մտածում այդ մասին.

- Մեր ճակատագիրը կախված է միմիայն Ռուսաստանից, իսկ մեծամասնականների ճակատագիրը կորոշվի միմիայն Մոսկվայում:

Ինչո՞ւ:

- Մեր ճակատագիրը կախված է միմիայն թուրքական եղելություններից:

Ինչո՞ւ:

Այս «ինչո՞ւ»-ները կարևոր չեն, որովհետև բացարձակապաշտը միակողմանիորեն կույր է և հասկացողություն չունի կարելիությունների մասին. նա չի ըմբռնում, որ, օրինակ՝ մեծամասնականների բախտը կարող է որոշվել մի աննշան լեռան ստորոտում, մի գետակի ափին, մի լճի եզրին, մի մարդու մահով, աղետավոր մի արկածով, ռուսական գյուղում ծայր տված մի շարժումով, արտաքին մի պատերազմով, իսկ հայկական խնդիրը կարող է լուծվել մեծամասնականների քաղա-



քականության փոփոխմամբ, Թուրքիայի դեմ պայթող արտաքին մի պատերազմով, հայերի մի ընդվզումով և այլն, և այլն:

Դրա հանդեպ անչափելիորեն նշանակալից է խնդրի հոգեբանական կողմը: Եթե, իրոք, մեր ճակատագիրը կախված է Ռուսաստանից կամ թուրքական եղելություններից, էլ ինչո՞ւմն է մեր հայկական գործոնի դերը: Ի՞նչ արժեք ունենք մենք իբրև պատմագործ ուժ: Ոչի՞նչ: Կամ, եթե մեծամասնականների ճակատագիրը միմիայն Մոսկվայում պիտի որոշվի, ի՞նչ արժեք ունեն մեր սերն ու ատելությունը, մեր հիացումն ու դժգոհությունը նրանց նկատմամբ: Ոչի՞նչ:

Այս ապրումները ներհոգևոր բովանդակություններ են, իսկ նման ամեն բովանդակություն խտացյալ մի ուժ է և հակամետ՝ պատմական ձև ստանալու: Մակայն բացարձակապաշտն ասում է, որ այս ձևը տալիս է մի ուրիշը, անդրզգացական մի ուժ, բայց ոչ ինքը՝ տառապող, հուսացող ու մարտնչող «ես»-ը:

Ծուլության իմաստասիրությունն է սա: Դրա կրողները նրանք են, որոնք օրինակ թուրքական եղելությունների մասին խորհրդածելիս ասում են.

- Թուրքիան անհաղթահարելի է, մանավանդ որ բարենորոգումները նրան անհրաժեշտորեն կազդուրում են:

Կամ՝

- Թուրքիան անխուսափելիորեն գնում է դեպի կործանում, բարենորոգումներն էլ ավելի պիտի խախտեն նրա դիրքը, և նա անհրաժեշտորեն պիտի ենթարկվի քայքայումի:

Ծուլի մտածումը մի՛շտ էլ նենգ է և գիտե բացարձակապաշտական բանդագուշանքներով ինքնամխիթար-

վել կամ արդարացնել սեփական «ես»ի տկարությունները:

Ո՞վ ասաց, թե մի ժողովուրդ անհաղթահարելի է, ո՞վ՝ թե որոշ օրենքների կիրարկմամբ նա անպայման ուժեղանում է, կամ ո՞վ՝ թե բնական որոշ օրենքների պարտադրումով նա անխուսափելիորեն գնում է դեպի անկում:

Սո՛ւտ է, թե ծնունդների նվազումը կամ հավելումը տևական երևույթներ են, կամ, թե նրանց հետևանքով մի ժողովուրդ կարող է սպառվել կամ անբնականոն չափով աճել, սո՛ւտ է, թե տնտեսական տագնապի կամ փաթթամության հետևանքով մի ազգի քաղաքական կառույցը կարող է իսպառ փլչել կամ հավիտենապես ամրապնդվել, սո՛ւտ է, թե բարենորոգումները կարող են մի երկրի անթիվ բարիքներ տալ և ո՛չ մի չարիք, կամ անթիվ չարիքներ և՛ ո՛չ մի բարիք:

Ճի՛շտ է միայն մի բան - ա՛յն, որ քաղաքականորեն մենք բացարձակապաշտ ենք միայն նրա համար, որ գործելու, մարտնչելու տրամադրություն չունենք:

- Թուրքիան անհրաժեշտորեն հզորանում է:

- Թուրքիան անհրաժեշտորեն կործանվում է:

Ի՞նչ է այս բանաձևումների հոգեբանական աստառը - ո՛չ այլ ինչ, քան՝

ա) Եթե Թուրքիան անհրաժեշտորեն հզորանում է, ապա ինչո՞ւ կովել, ինչո՞ւ մաքառել, ինչո՞ւ նորանոր գոհեր տալ, երբ նա անհաղթահարելի պիտի մնա:

բ) Եթե Թուրքիան անհրաժեշտորեն կործանվում է, ապա ինչո՞ւ աճապարել, ինչո՞ւ ավելորդ արյուն թափել, ինչո՞ւ չսպասել իրերի բնական ընթացքին, մինչև որ նա տրամաբանական օրենքով բոլորովին կքայքայվի:

Աղաչո՛ւմ ենք, հայրենակիցնե՛ր, խոովքոտ այս օրերին ձեզ պահեք ձեր իմաստությունները, և եթե կարող եք, տվեք մեզ երկաթ, վառոդ, ցեղի ցավից ցնցված վրիժառու ոգիներ, նրա գոյության հրամայականով առաջնորդվող կամքեր, ինքնափրկումի հավատով սպառազեն սրտեր, և մենք կդառնանք կարոտի սլաք, հաղթանակի նետ, բացարձակապաշտության օրենքները խորտակող ուժ, պատմության անիվը դարձնող գործոն:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՈԳՈՒ ՈՒԺԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եղեգնի փողից ծուխ էր բարձրանում,  
Եղեգնի փողից բոց էր բարձրանում,  
Եվ բոցերի մեջ մի պատանի վազում...

Այսպես եղավ հայ կամքի խորհրդանշան, հայոց պատերազմական Աստված Վահագնի ծննդոցը: Իր գոյստացման բնույթով նա հիշեցնում է հայոց աշխարհի երկրաբանական լինելիությունը: Վահագնածնության երգը մի խտացում է հայոց տիեզերածնական (կոսմոգոնիական) ըմբռնումի: Նա հրահոսների և երկրաշարժերի մի աշխարհի ժողովրդի դիցաբանախառն բնափիլիսոփայությունն է: Մտահղացման առիթը պատմական ժամանակներում լճային մի խառնարանում տեղի ունեցած հրահոսային ժայթքման ահարկու մի տեսարանը տված պիտի լինի:

Հոգեբանական տեսակետից, սակայն, չափազանց հետաքրքրական է, որ հայն իր կենսաբանական կամքը պատկերում է ըստ իր հայրենիքի բնաուժական ներբնակ գորույթի, ըստ վերջինիս ժայթքողական արտահայտության: Մա լինելիական հոգեբանություն ունեցող մի էակի հղացումն է: Ուժական մի աստուծո ըմբռնումը կարող է միայն ուժական կամզգացությամբ պայմանավորվել:

Աշխարհի երևույթները բաժանեցինք կայական և ուժական ստորոգածների: Նաև ցեղերի հոգեբանությունը, նրանց պատկերումը հավիտենականության մասին,

նրանց գործնական և վերացական իդեալները կրում են կայական կամ ուժական նկարագիր:

Ցեղերից ոմանք ունեն լինելիական զգացում, ոմանք՝ հատողական: Առաջինները նորատենչ են, վերջինները՝ ավանդապաշտ: Նրանք իրենց գոյության իմաստը կապում են ապագային, սրանք՝ անցյալին կամ ներկային: Նրանց հավիտենականության իդեալը տևական շարժումն է, սրանցը՝ հարակայությունը: Նրանց երջանկությունն ասում է «եղիցի՛», սրանցը՝ «կա՛»: Նրանք կյանքը զգում են կենսաբանորեն, սրանք ապրում են մեքենայորեն: Նրանք պաշտում են կենագործ ուժը, սրանք՝ վերացական իմացությունը և այլն., և այլն.:

Նիցշեն, փառաբանելով գերմանների լինելիական հոգեբանությունը, նրանց էության մեջ տեսնում է զրադաշտական կենսախինդ ուժը, լինելիական հաճույքը, (werdelust) և այդ իսկ պատճառով նրանց բարձր դասում ձևապաշտ, մեքենայագաց, հոգով քարացած և կայապաշտ ռոմաններից (այսպես կոչված «լատինական» ցեղեր): Ուրիշ շատերի հետ՝ Բերտրամը նույն Նիցշեին համարում է գերմանական լինելիական նոր կրոնադիցաբանության մեծ առաքյալը, գերմանական ոգու ուժականության մարմնացումը, իսկ Լուտերի շարժումը՝ գերմանական լինելիական ուժականության հաղթական ծառայումն ընդդեմ ռոմանական կայապաշտական-դավանամոլական (դոգմատիկ) հոգեբանության:

Գերմանական ոգու ուժականությունը ցայտունորեն աչքի է զարկում նաև գերմաներեն հաղթ և ռազմաշունչ լեզվի մեջ. մի լեզու, որ աճեցողական ներբնակ զորույթ ունի, որ անընդհատ նորաստեղծվում է, մինչ ֆրանսե-

րենն, օրինակ, կնքված ու կադապարված է «քարացած» ձևերի մեջ:

Ահեղ է նաև մեր հայ լեզվի ուժական թափը: Ինչպես մեր շատ հոգեգծերը, այդպես էլ մեր լեզվի առանձնահատկությունները փիլիսոփայորեն-հոգեբանորեն տակավին չեն վերծանված: Բայց առաջին իսկ ակնարկից՝ նրանք գալիս են վկայելու, որ հայ ոգու անդունդը բազմախորհուրդ մի ուժաստան է:

Վահագնաճնության երգի փշրանքը հայ քաջքային (դեմոնական) ոգու հուժկու արձանացման մի վկայագիրն է, հավանաբար տիեզերածնական դյուցազներգության վիթխարի մի կոթողի կտորը:

Նարեկացին՝ հայոց ամենամեծ մտածող-բանաստեղծը, որի ոճն արդեն ահռելի ուժականությամբ օժտված վարար մի հեղեղ է, իր «առուղեկան<sup>33</sup> հավիտենական»-ի գաղափարով տուրք է տալիս իր ցեղի ուժապաշտ ոգուն: Դրանով նա ընդունում է, որ այս աշխարհում ո՛չ թե հարակայության, այլ հարատև շարժման, անցումի սկզբունքն է հավիտենական:

Նարեկացուց մի հազարամյակ հետո «Ձախորդ օրեր»-ի հեղինակ Ջիվանին՝ հայ ժողովրդի մտածող-աշուղդ, կյանքի լավատեսության հիմքը տեսնում է հենց նրանում, որ այս աշխարհում ոչինչ է կայուն, որ «փոփոխակի անցքեր շարունակ՝ կուգան ու կերթան»: Ուժապաշտ մարդ-էակի բարոյական երջանկության ըմբռնում է սա, ընդդեմ կայապաշտական կենսահայեցողության բարոյականի քարոզիչներին, որոնք կյանքի հո-

---

<sup>33</sup> անցավոր

ռեռեստութեան հիմքը տեսնում են անցավորութեան մեջ, որոնք աղաղակում են «կանգ առ, ակնթա՛րթ», որոնք սոսկալով մահից՝ կառչում են անփոփոխ, անանց և տենչագուրկ «հանդերձյալ»-ի բանդագուշանքին:

«Մասմայ Ծոեր»<sup>34</sup> ավանդավեպը, որի հերոսներն առյուծ են պատառում, սրի մի հարվածով 40 գումեշի կաշի, 40 ջրադացի քար և նրանց տակ եղած հսկայամարմին Մարամելիքն են կտրում, ճկույթի մի հարվածով ապառաժ քարից կրակ են հանում և այլն, և այլն, այդ ուժական ավանդավեպը տալիս է հարատև շարժման (perpetuum mobile) պատկերը: Հերոսի (Մասունցի Դավիթ) գայրույթից քարերը թռչում են այնպիսի ուժգնությամբ, որ նրանք «մինչև էսօր գնում են, հա՛ գնում»: Նրանք «գնում են» բոլորի, հազարամյակներ, միլիառամեակներ հետո եկող սերունդների համար: Այդ քարերը պոկվել ու նետվել են «պատմական» մի վայրկյանում, բայց նրանց չուն այլևս «հավիտենական» է, որովհետև, քանի այս աշխարհը կա՝ «Այսօր»-ը վերջ չունի: Անվերջանալի և անվախճան շարժականություն - ահա՛, սասունցի ուժապաշտ հայ լեռնականների ըմբռնումը հավիտենականության մասին:

Այսպես՝ ահարկու է հայ էության ուժական գիծը: Ապագայապաշտ է հայը. նրա կյանքի ամենաազդու մղոնը լինելիական տենչանք է, գալոց հավիտենականի կարոտը: Իր խոռվքոտ Հայրենիքի հրահոսային տարերքի պես գալիքի խորհուրդն է եռում նրա ոգում: Ուժականատիպ մարդ-էակի երկունք է սա՛ լինելիական հա-

---

<sup>34</sup> Մասնա Ծոեր

ճույքի կորուվը, որ կենսաբանորեն առողջ ժողովուրդը  
օժտել է սերնդագործական բարձր կարողությամբ, որ  
պատմության պարտադրած վտանգների կամրջին՝ ար-  
յունլվա հային մղում է խորհրդածել. «Վերջը լավ կլի-  
նի»... Ե՛րբ, ո՛ւր է այդ վերջը. դա էլ պատմականորեն  
թանձրացյալ ժամկետ չէ, այլ հավիտենորեն լինելիա-  
կան, մտանորոզ մի հույս: Հայը կարող է ն՛ կրավորա-  
կան զոհ լինել, բայց նա մի՛շտ էլ մեռնում է հավատով:  
Այս հավատը նրան ներշնչում է ցեղային անմահության  
զգացում - զգացում, որ պայմանավորում է կենսաբանա-  
կան գորութենականության արտասովոր թափով:

Լինելիական հայը - դա հավիտենատենչ մարդն է,  
հավիտենական հայը:

Դանուբյան մի նավում 1925 թվականի ամռանը կար-  
դացի տարագիր մի հայի թողած հետևյալ արձանագ-  
րությունը. «Աշխարհում ամեն՛ն բան կմեռնի, բա՛յց հայը  
չի մեռնի»...

«Տարոնի Արծիվ», 1938 թ., թիվ 3-4



## ՑԵՂԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ԻԲՐԵՎ ԱՆԲԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐ

Դեռևս չի զարգացել այն գիտությունը, որ պիտի կոչվի աշխարհիմաստություն (գեոսոֆիա): Հոգեբանությունն էլ մինչև հիմա չկարողացավ հղկվել իբրև հոգեիմաստություն (պսիխոսոֆիա):

Բնագանցությունը սկզբից ցայսօր լծվեց գոյության հանելուկը մեկնաբանելու գործին, ուզեց հասկանալ Եսի և բնության, ոգու և նյութի, կյանքի և առարկայի իմաստը: Գիտական մի շարք սիստեմներ, ահագին վարկածներ, գործնական նշանակություն ունեցող «ճշմարտություններ» կուտակեցին, և, սակայն, հարցը, թե ի՞նչ է գոյը, ի՞նչ է կյանքը, ի՞նչ է սրանց իմաստը, դեռևս սպասում է իր պատասխանին:

Ընդհանուր առմամբ այն գիտությունները, որոնք բնագանցությանն օգնելու հավակնությամբ գործի լծվեցին, իրենց պրպտումների ընթացքում պարզեցին մի բան, թե «ես»-ի և «ոչ ես»-ի, ոգու և նյութի փոխհարաբերությունը շատ ավելի բարդ է, քան միարմատական (մոնիստական) մտածողներն ենթադրում են, թե նրանց միջև եղած կապն ու անկապը շատ ավելի խորհրդավոր է, քան երբևէ կարող է ըմբռնել այսպես կոչված «մարդկային առողջ հասկացողությունը», քան կարող են սահմանել սովորական «ճշգրիտ» գիտությունները:

Աստվածաբանությունը, գաղափարապաշտ մտածողների զարգացրած տիեզերածնությունը (կոսմոգոնիա), տիեզերաբանությունը (կոսմոլոգիա), բարոյագիտությունը, պատմափիլիսոփայությունը և այլն, որոնք այն-

քան հուզիչ հավատով հետապնդում էին նպատակի և նպատակադրության խնդիրը, և հոգեբանությունը, որ այնքան խնամուտ կերպով երևան հանեց իմացության բանական և զգայական տարրերի այլազանությունը, անգամ նոր վիտալիստների՝ իր խորության մեջ այնքան նշանավոր կենսաբանությունը, և վերջապես դրանց հետ ողջ իմաստասիրությունը, հանդիպեցին բանապես անըմբռնելի և անբացատրելի խորհրդավոր մի ուժի՝ բնատարերային մի Մեֆիստոֆելի<sup>35</sup>, որ ոգին և սրա հայտնությունը հանդիսացող պատմությունը հաճախ շեղում է նպատակի գծից:

Այս ուժը կոչվում է *անգիտակցական, տարերային, անբանական* և սովորաբար անսպասելիորեն ազդու է դառնում պատմականորեն ճակատագրական վայրկյաններին և հաճախ որոշում դեպքերի բախտը, անկախ մեր իմացական ըմբռնումներից, մեր բարոյագիտական սկզբունքներից և բարոյական զգացումներից: Դրա շնորհիվ է, որ շատ հաճախ կյանքում անբացատրելի են մնում հետևյալ տիպի հարցեր.

Ի՞նչպես է լինում, որ աշխարհում հաճախ անբարոյականը հաղթում է բարոյականին, թզուկը՝ հսկային, մանրորեն նենգը՝ ոգու մեծությանը:

Ի՞նչպես է լինում, որ հաճախ մեր որդեգրած գաղափարները, մեր

բանականությունը, մեր զգացումները դավաճանում են մեզ:

---

<sup>35</sup> Գյոթեի «Ֆաուստ» փիլիսոփայական ողբերգությունում Մեֆիստոֆելը գայթակղիչ է և Ֆաուստի ախոյանը:

Ի՞նչպես է լինում, որ հաճախ բարին ենք կամենում և չարը գործում:

Ի՞նչպես է լինում, որ հաճախ սրտի խորագույն հուզումով, նվիրումով և վճռականությամբ մեր նպատակին ձգտելիս հեռանում ենք նրանից:

Ի՞նչպես է լինում, որ օրինակ՝ Հայաստանում գրեթե ամեն քաղաքական աղետից հետո տեղի է ունենում և՛ երկրաշարժ:

Ի՞նչպես է լինում, որ օրինակ՝, մի կին, մի կապիկ, մի այծ, մի ծառ կամ մի քար հաճախ պատճառ են դառնում, որ «ճակատագիրը» տարբեր մի բան տնօրինի, քան կարող է բանական թվալ:

Ի՞նչպես է լինում, որ միևնույն պատճառը հաճախ տարբեր հետևանքներ է ունենում:

Ի՞նչպես է լինում, որ «նպատակ»-ը շատ անգամ զոհ է գնում մի «պատահականության», մի «արկած»-ի:

Ի՞նչ է այս «նպատակ»-ը: Եթե դա Ես-ի գոյության կոահումն է և կարոտը, ապա դա ո՛չ միայն խտացած միտք է, այլև՝ զգացում, ո՛չ միայն «բան», այլև՝ զգայական տարերք: Այդ դեպքում ի՞նչպես է լինում, որ ճակատագիրը, պատճառը, հետևանքը, պատահականությունը, արկածը հաճախ կարողանում են փոխել Ես-ի զգայական տարերքով (կամք) և բանական կարողություններով (միտք) պայմանավորված նպատակների ուղղությունը և անգամ բախտը: Ի՞նչ ուժեր են դրանք. արտասայի՞ն, թե՞ ներեսային, ոգուն բոլորովին անմատչելի՞, թե՞ միայն «դեռևս» մութ ու անծանոթ: Եթե՝ բոլորովին արտասային, նրանք չէին կարող ամեն անգամ հայտնվել մեր գործունեության և մտածումների ճամփին, եթե՝ միայն ներեսային, նրանք պետք է որ

հպատակվեին մեր կամքին: Նրանք գտնվում են մեր և աշխարհի միջև, որով աշխարհի հետ գործ ունենալիս, նախ դրանք է, որ պիտի հաղթահարվեն: Հենց սրանում է ենթակայականի բախտորոշ դերը պատմության մարգում: Ե՞րբ է պատմություն ստեղծվում. ա՛յն դեպքում միայն, երբ պատմագործ ուժը՝ ենթական, մի բան հաղթահարում է: Ենթակայորեն է՞րբ է այս հաղթահարումը հնարավոր. այնժամ միայն, երբ միտքն ու կամքը՝ Ես-ի բանական կարողությունները և զգայական տարերքը, ներդաշնակ են: Ամբողջական «Ես»-ը միայն կարող է գործել «բանականորեն» և իշխել «տարերքին»:

Մենք գիտենք նաև մի այլ բան. որ մեր «Ես»-ը միանպատակ չէ, որ աշխարհում կա նպատակների բազմազանություն: Այս ասել է, որ պատմության նպատակներն էլ փոփոխական են, որ պատմությունը նպատակի հավիտենականություն ունի, բայց հավիտենական նույնանպատակություն չունի: Ո՞րն է նպատակի այս հավիտենականությունը. առաջադիմությունը: Բայց ո՞վ կձգտեր դրան, եթե դա մի քիչ երջանկություն չխոստանար: Պատմության մղիչ ոգին ապերջանկության զգացումն է և երջանկության կարոտը: Պատմությունը ոգու ինքնափրկումի տենչ է: Եթե այս տենչը հավիտենական է, այդ նշանակում է, որ պատմություն հղացող ոգու առջև կա անբացատրելիորեն մութ, անբանական, անգիտակցական մի խոչընդոտ, մի հակառգի, որ իր հակադեցությամբ հավիտենական է:

Ըստ այսմ՝ պատմության նպատակի հավիտենականությունը պայմանավորվում է անգիտակցականի հավիտենականությամբ:

Ի՞նչ է այս անգիտակցականը: Հոգեբանությունը, բնագոյների աշխարհը գատելով զուտ բանականությունից, նրան սահմանեց «ենթագիտակցական» բառով: Ենթագիտակցականը գիտակցականից տարբերվում է նրանով, որ ո՛չ թե ուսուցվում է, այլ ժառանգականորեն փոխանցվում, ո՛չ թե իմացական երևույթ է, այլ կենսաբանական, ո՛չ թե անհատական մտորում է, այլ տեսակի խառնվածք, ո՛չ թե մտքի ընդունակություն է, այլ արյունի, ո՛չ թե անցանելի է անհատի հետ, այլ գուգահեռ՝ սեռի հավիտենականությանը:

Այս «ենթագիտակցականը» ավելի ազգակից է բնությանը, քան բանականությունը. նա զգայական որակ է, տարերային գորույթ. նա բնատարերքի շարունակությունն է կենսաբանական էակների մեջ:

Այս կենսաբանական «ենթագիտակցական»-ը անօրգանական բնատարերքի հետ կազմում է ա՛յն խորհրդավոր ուժը, որ կոչվում է անբանական՝ «իռացիոնալ»:

Մարդկային ոգու հզորանքի գաղտնիքը և նրա ճակատագրի ողբերգությունը հենց նրանում է, որ նա թե՛ իր ուժերն է ստանում անբանականից, թե՛ չի կարող ազատվել նրա տիրապետությունից:

Հզորության գաղտնիքը հասկացել են մարդկային ա՛յն խմբակցությունները, որոնք ճակատագրի դեմ ոգորելիս զգում են, որ պետք չէ հակասության մեջ դնել բանականը և բնագոյականը, որոնք գիտեն, թե նվաճունակ մտքի բուն աղբյուրը առողջ բնագոյն է:

Ջուր չէ, որ անզլոգերման մի շարք մտածողներ կամքը համարում են տարերային կույր տենչանք, իսկ բանականությունը՝ նրա գործիքը:

Ո՞րն է կամքի աղբյուրը. այս հարցը էության հարց է,  
իսկ էությունները կազմվում են ոգուց և բնությունից:

Եթե հարց տանք. ո՞րն է կամաստեղծ բնությունը, աշ-  
խարհիմաստությունը պիտի պատասխանի՝ Հայրենի՝ քր:

Եթե հարց տանք. ո՞րն է կամաստեղծ ոգին, կենսա-  
բանությունը պիտի պատասխանի՝ Ցեղը:

Հայրենիք ու ցեղ. դրանք երկուսն էլ անբանական ու-  
ժեր են, որով ավելի՛ հավիտենական, քան այլ որևէ  
բան՝ երկնքի տակ:

Այդ է պատճառը, որ մարդկային պատմության բոլոր ո-  
գորումները, վերջին հաշվով, դառնում են դրանց շուրջը:

«Ցեղ և Հայրենիք», 1936թ., թիվ 1

## ՎՏԱՆԳ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թնդանոթի միս, աննպատակ մահ. սա է վիճակվում անազատ ազգերին, եթե դրանք ընդունակ չեն վտանգից առաջ նպատակ դնել իրենց հավաքական կյանքին:

Գաղութում ամեն հայ անձնանպատակ է՝ հոգեախտավոր, որ պատրանքներով լցրած իր փչակը համարում է գոյության ճակատագիրը:

**Մեռնում են նրանք, որոնք իրենց ինքնանպատակ են դարձնում, աստվածացնում, և նրանք, որոնք կտրվում են նպատակից, Աստծուց:**

«Նպատակ»,- «կա այդ»,- կասի ձեզ ամեն սովեստ և ցույց կտա մաշված արժեքների փտած մի տախտակ, որի վրա իր «ես»-ն է գրված, իր «ես»-ի մանր գործը կամ մանր միտքը:

**Հանճարները սպանվում են մանր գործերից, ժողովուրդները մեռնում են մանր առաքինություններից:**

Ոգին է կյանքի խորքը, իսկ ոգու տարողությունը չափվում է նպատակի մեծությամբ, ինչպես բարոյականը՝ նպատակի իմաստով:

Նպատակի մեծություն և իմաստ չի ունեցել և չունի անցել հայր:

Նա չունի բարոյական խառնվածք, նրա համար չկա արժեքների աստիճանավորում:

Ո՞վ իր անձը, իր մեկ ու կես հոգիանոց «կազմակերպությունը» կստորադասի ազգի ճակատագրին:

Ինչո՞ւ է գաղութը նպատակների շփոթարան, արժեքների և բարոյականների խառնարան: Որովհետև հոգևոր գաղութը, ամեն բանից առաջ, վտանգի մոռացումի

ճիգ է: Ուր այս անկենսաբանական ճիգը կա, այնտեղ շղթայագերծվում է հոգևոր անիշխանականությունը: Դեռ հասկացողություն չկա այն մասին, որ վտանգը սարսափի ուրվական, երևակայության բանդագուշանք և մտացածին ահագանգում չէ, այլ ընկերային զգացումի առաջին ստեղծիչ ազդակը, կյանքի կենսաբարոյական դաստիարակը, և պատմության մարգում այնքան անխուսափելի, որքան տեղատարափը՝ ամպումից, երկրաշարժը՝ հրաբխային ժայթքումից հետո: Քանի դեռ այս հասկացողությունը չկա, չկա կենսաբանորեն նպատակահարմար ինքնապաշտպանության գործ:

Ի՞նչ է վտանգը. դա նաև՝ ոգու կոահում է: Ի՞նչ է հաղթահարումը. դա նաև՝ կոահող ոգու կանխումի ճիգի իմաստություն է:

Օրվա հայի կյանքում կոահում չկա, կա միայն ենթադրություն, կանխումի մտահոգություն չկա, կա միայն պայմանների հաշվառում: Ի՞նչն է անկարելին - պայքարը Հայրենիքի՞ համար: Ի՞նչն է կարելին. գաղութում «հայր՝ հայ պահե՛լ»-ը, «ներգա՞ դթ»-ը:

Ժողովրդի համար հնարավոր են այն բաները, որոնցում ճիգի իմաստություն, նվիրումի և արիության պահանջ չկա:

Ազատվել տկարության բանդագուշանքներից - ասել է՝ ինքնապաշտպանության գործը հասկանալ ո՛չ թե «պայքար այլասերումի դեմ», այլ «պայքար Հայրենիքի համար»:

Դրանով միայն հայը հավիտենորեն հայ կմնա:

«Տարունի Արծիվ», 1938թ., թիվ 2



## ՑԵՂԸ ՄԻԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՓՈԽԵԼ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԸ

Մեր ոգու անհանգստությունը իր խորին պատճառներն ունի: Պատմությունը սովորություն չունի նույնությամբ կրկնվել, քայց խորհրդավոր մի բան կա այն փաստի մեջ, որ թուրքերն էլ այսօր նույն ճանապարհներով են հետապնդում մեզ: Նրանք էլ Փոքր Ասիայից մտան Հայկ. Բարձրավանդակը և հետևելով Եփրատի և Արածանու ընթացքին՝ երկար ժամանակ կանգ առան (ու նույնիսկ մտան ու դուրս քշվեցին) Արաքսի հովիտների դռանը, և այսօր մեկ ոտքով արդեն տեղավորվել են Արարատյան դաշտում:

Իսկ մենք, բռնած խալդ-ուրարտացիների ճամփան, անընդհատ քշվում ենք դեպի հյուսիս:

Ո՞ր ենք գնում, ո՞ր է առաջնորդում մեզ պատմական իրերի ընթացքը: Այս հարցի սիրտը դեռևս չկարողացանք լրջորեն շոշափել:

Հայության այն մասը, որ «վտանգից» է խոսում, շարունակում է դեգերել իրենից դուրս: Նախապաշարված պատմական տխուր հիշողությամբ՝ նա իմաստության վերջին խոսքը համարում է աշխարհից հիասթափվել, և ինքն իրեն չհավատալ՝ «մենք ոչի՛նչ կարող ենք անել»:

Իսկ այն մասը, որ չի հասկանում ազգերի ճակատագրի խորհուրդը, որ ընդունակ չէ ըմբռնել, թե կիսված Արարատյան դաշտը չի կարող Հայաստան լինել և մանավանդ մնալ, որ «մատերիալիստական դիալեկտիկայից» թոթովելով՝ պատմության կնճիռներն ըստ այս ուսմունքի հասկանալու չափ բանականություն չունի,

«վտանգ»-ը համարում է ազգայնական ծիծաղելի բան-  
դագուշանք և հոխորտում՝ «Խորհրդային Միությունը  
կարող է ամեն ինչ անել»:

Բայց ո՞վ ասաց, որ թուրքն էլ ընդունակ չէ շատ բան  
անել:

Խորհրդային Միությունը կարող է ամեն ինչ անել:

Թուրքը կարող է շատ բան անել:

Բայց աշխարհի ողջ բրտությունը, բռնակալների գա-  
զանությունը և դիվանագետների ամենանուրբ մաքիա-  
վելիականությունը չեն կարող մի բան անել. սրանք չեն  
կարող օրհասական վայրկյաններին ցեղերի ոգու շղթա-  
յազերծումը սանձել:

Իրերի տրամաբանությունը մեզ առաջնորդում է դե-  
պի անկում: Բայց կա նաև ոգու տրամաբանությունը, որ  
ճմլում է իրերի սիրտը, որ փոխում է պատմության ըն-  
թացքը:

Երբ ժողովուրդն է հորանջում, մենք ոչինչ կարող ենք  
անել: Երբ ցեղն է բարբառում, մենք կարող ենք շատ բան  
անել:

Ցեղի կոչը՝ դա մի՛շտ էլ հայրենիքի համար մեռնելու  
կոչ է: Հայրենիքը՝ դա մի՛շտ էլ անմահ է, երբ նրա դատի  
համար մեռնելու պատրաստակամ սերունդներ կան:

Ցեղի ոգի՛ն. եկել է ժամը, երբ նա պետք է շղթայա-  
զերծվի:

Մեզ հարկավոր չեն կրավորականության քարոզներ.  
կրավորականությունը մի՛շտ էլ հոգևոր գերեզմանափո-  
րություն է:

Մեզ հարկավոր չեն քաղաքագիտական մանվածա-  
պատ դեգերումներ. հայը քաղաքականության մեջ  
մի՛շտ էլ հիմար է: Զուր չէ, որ Տակիտոսն ու Ֆոն Լուչա-

նը այսպես են բնորոշել մեզ

Մենք պետք է օգտվենք մեր բուն կարողականությունից. հայր իր պատմական կյանքի բոլոր թռիչքներն արել է իր ոգու ցեղային տարերքի ուժով:

Ցեղը՝ դա ն' արյուն է, ն' ոգի: Դա ն' կամք է, ն' քանականություն: Դա ն' առաջնորդ է, ն' ռազմիկ: Դա ն' խորհուրդ է, ն' ստեղծագործություն: Դա ն' տառապանք է, ն' հաղթանակ:

Ցեղը միայն կարող է փոխել պատմության ընթացքը:

«Ցեղ և Հայրենիք», 1936թ., թիվ 1

## ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Մի՞ թե ոգիների անապատի մեջ ենք քարոզում մենք: Ենթադրենք, թե այդպես է: Բայց վտանգված ժողովուրդի համար ի՞նչն է ավելի ներկայահորդոր, քան արթնության կանչը՝ պատմության հազարամյակների ձայնով:

Նարեկացին ողբերգում էր. «Ձայն կու տան և չեմ արթննար, փող կը հնչեն և կուի չեմ պատրաստիր»: Այդպես չէ՞ օրվա հայությունը: Այդ չէ՞ մեր նվաստաշունչ ներկայի և անլույս ապագայի, մեր պատմական զգացումի աղոտման և հոգևոր նահանջողականության պատճառը:

Ամոթանքի ողբերգությունն, թե անկումի երանությունն - ո՞րն է ապրող հայ սերունդի ճակատագիրը:

**Քննախտավորների համար խոռվարարներ ենք մենք. խոռվում ենք անապատի մեռելային երջանկությունը:** Վե՞րջը: Իրերի վերջը ենթակա է վերանորոգումի տիրապետության: Ո՛չ մի դրություն առանց ընդդիմության տեղ չի տա ուրիշ մի դրության, բայց ճակատագիրը դրությունների մի հոլովույթ է: Ոգու խոռվքները, ի վերջո, կվերածվեն հասարակական ուժի: Չկա «ձայն բարբառո հանապատի», եթե խոսքը օծված է տառապանքի սրբությամբ: «Յուրսն եկն և յուրքն ո՛չ ընկալան»-ը մեծ ողբերգություն է, բայց խորքոտ ու խոռվքոտ ամեն ողբերգություն ունի իր տրամասությունը<sup>36</sup>, իր դիալեկտիկան: Օտու է հավիտենականության ճանապարհը և ոգու զարգացումը տեղի է ունենում հակասությունների

<sup>36</sup> քննախոսություն

ուծով: Մեծ ճշմարտությունները հետևանք են մեծ տագնապների, և կյանքի արժեքավոր բոլոր գործերը, պատմության ուղեգիծը որոշող բոլոր շարժումները առաջ են գալիս որևէ դատարկություն բովանդակությամբ լցնելու ծարավից:

Պատմական իմացության տեսակետով դատարկ էր մեր իրականությունը, բայց ահա՛ տարոնականությունը: Կարճաշունչ էինք մեր ոգորումների մեջ - ահա՛ Մամիկոնյանների «մեռնելու կամքի» ստեղծագործ բարոյականը: Միայն վերացական «հանդերձյալ»-ով էինք մխիթարվում - ահա՛ ցեղային հավիտենականի կենսաբանական զգացումը: Անթիվ կիսանպատակների էինք ծառայում - ահա՛ Ցեղը՝ որպես լիագումար նպատակ: Փրկությունը իրերի երազային դասավորումից էինք ակնկալում - ահա՛ հոգեգիտական ճշմարտությունը, թե՛ ճակատագրիդ միակ առեղծվածը դու ես:

Լուսավորչի կրոնն էս դավանում, Մեսրոպի գրով էս լուսավորվում, Հայրենիքի մասին մտածելու պահին Վարդանին էս ոգեկոչում, Խորենացիից, Եղիշեից ստանում էս հայկականությանդ ներշնչումները և չես ըմբռնում տարոնականությունը: Տգետ չես դու, այլ՝ բարոյապես պակասավոր: Տարոնական քո գիտակցության և զգացումի աղոտումն է պատմական դժբախտություններիդ բուն պատճառը: Խաբված էս՝ մի՛

արդարացիր մեղադրելով ոռուք, անգլիացին, գերմանացին, ֆրանսիացին, անգամ թուրքը: Խաբված էս, որովհետև անձանոթ էիր քո էությանը:

«Ծանի՛ր քեզ» և պիտի տեսնես, թե որքան հեշտ է բարոյապես վերանորոգվել իբրև Տարոնական Հայ: Հարա-

զատի՛ր «մեռնելու կամք»-ի բարոյականը, և քաղցրության հետ դու պիտի զգաս թեթևությունը հաղթանակի:

\*\*\*

Անապատի մեջ ենք քարոզում, և մեր խոսքերն ունեն բնագանցական շեշտ: Բոլոր մեծ ճշմարտությունները հղություն են ստանում անապատի զգացումից, և գործնական կյանքի ամբողջական հիմքը աշխարհի բնագանցական ուժերի մեջ է: Չկա՛ ավելի մեծ թովչանք, քան հավիտենականությունը, և ավելի ազդու խոսք, քան հազարամյակների ձայնը: Մամիկոնյանների մեծագործության գաղտնիքը ա՛յն բանի մեջ էր, որ հավիտենականության զգացումը անբաժան էր իրենց խղճմտանքից: Այս զգացումով կարելի է միայն աշխատել սեփական անձի առաքինության վրա և Աստուծո համար: Այսպես աշխատողնե՛րը միայն կարող են Հայրենիք հավիտենագործել:

Կտրված է հավիտենականության թելը, և հասվածականացած տարագրությունը կմոխրանա իր մանր նպատակների հետ: Տարոնականությունը մեծ այդ տազնապից և մեր ցեղի բոլոր դարերի ցավի ու կարոտի զորութենականությունից հղություն ստացած առաջնորդող ճշմարտություն է:

**Մեր եսի խորագույն էության մեջ մենք հող չենք, որ հող դառնանք, այլ՝ ոգի, որ ոգի մնանք:** Տարոնականությունը պատմական ոգու ուսմունք է, միաժամանակ, ցեղագումար հայկականության շարժում: Որպես մեր ցեղի հավիտենականը արտահայտող կորով, դա նաև

երկրի վրա անմահ գործեր երկնելու բաղձանք է, որով՝ ազատագրական կամք:

Ոգիների անապատի մե՞ջ ենք դեռ - բայց չկա հոգեվիճակի քարացում, չկա պարտվողական գոհունակության լճացում: Ինչ որ այսօր ապրում ենք՝ հիշողական սարսափների նախապաշարում է: Փաստորեն, մենք կանգնած ենք ճակատագրական անկյունադարձի առջև: Հեղաշրջվող ոգին ընթանում է իրերի հոլովագործումի գծով: Տարոնականությունը անապատի մեջ հասունացած խոսք է: Ո՛վ գիտե նման խոսքի դիալեկտիկան, գիտե կյանքի զարգացման օրենքը: Մարդիկ կարող են շեղվել օրենքից, բայց կյանքը՝ երբե՛ք հավիտենականի գծից: Կա հավիտենական դարձի օրենքը. իրերը մղվում են դեպի հոն, ուր է իրենց էության ծանրության կենտրոնը: Ո՛ր կողմից էլ, որ վերցնենք հայոց պատմությունը, մեր ուշադրությունը գրավում են տարոնական հայի մեծագործությունները: Պատահականություն չէ սա, այլ՝ կյանքի խորհուրդ: Ապագան նրանցն է, որոնք գործում են խորհուրդների ուժով:

Դժվարություններ կան մեր առջև, բայց մեզ հետ է ժամանակի ոգին: Պարտված, պառակտված, ներկայապաշտ և հավատաթափ է օրվա հայությունը, բայց նաև երբե՛ք մինչև իր էության խորագույն անկյունը այս աստիճան ողբերգորեն ցնցված: Նման ցնցումները առաջադրում են վերանորոգումի պահանջ: Իսկ վերանորոգում նշանակում է՝ դա՛րձ դեպի կենսաբանական, ոգեկան և բարոյական ա՛յն ուժերը, որոնք պատմական վավերականություն ունեն:

«Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 10

## ԵԼՔԻ ԿԱՍՔ

Դիցուք թե աշուն է, և օրերի հետ խամրում է շատ բան. անհիմա՞ ստ է ամենայն անցյալ: Դիցուք թե ձմեռ է, և բուքը, խրճիթո՞ մտած, կոտրել է սրտիդ ապակին և խշրանքների սարսուռով տխուր առասպել է երգում. միայն մի՞ պատմություն ունի աշխարհը: Կամ թե կյանքի սայլը ճոնչալեն խրվել է առեղծվածների ցեխում. սո՞ւտ է ճիգը, և ելքը՝ ցնո՞րք:

Առեղծվածները սարդի ոստայն են հյուսում և դարանում ճակատագրին: Կալանված ոգու ուժը վախճանի տենդն է, և առաքինությունը՝ փրկության մոլորանքը: Մտածի՛ր, որքան ուզում ես, գալարվի՛ր, քանի դեռ ցավ ես զգում, աղոթի՛ր, եթե հավատում ես գերբնական ուժերին. կքամվես, կչորանաս, կմոխրանաս, եթե չգիտես ճիշտ ժամանակին թաղել նախապաշարումներդ և ճիշտ ժամանակին կենտրոնանալ որպես ինքնափրկումի կամք:

Մենք ասում ենք՝ «Չկա անել դրություն»:

Չկա թեկուզ ա՛յն պատճառով, որ գեթ ապրող էակների բաժին տիեզերքը եղել է և պիտի անցնի, և նրա առեղծվածների գաղտնիքը հենց ա՛յն բանում է, որ նրանցից յուրաքանչյուրը լուծվել է ուզում:

Տիեզերքը առեղծվածների հղություն է, ծագումի ու վախճանի հանգույց, խառնարան, կոհիվ, կամ պատճառների կապակցություն և հետևանքների շղթայակցություն, գոյության երանություն և հայտնության կամք:

Ուզում ես հավատա՛, որ Աստծու կամքն է ստեղծել տիեզերքը, ուզում ես ասա՛, որ տիեզերքի կամքն է



ստեղծել Աստվածը: Երկու դեպքում էլ դու մի մասնիկն ես արարչագործության: Դա ենթադրում է հայտնության տենչի, կամքի ներկայությունը քո մեջ: Դու ծնունդ ես կամքի, և ճակատագրորեն մասնակից՝ ստեղծագործության:

Ամեն ստեղծագործությունն անցումի ճիգ է՝ կորովների կուտակման և հոլովույթի գործողություն, տարերքի երկունք, ոգու շարժ, սրտի ողբերգություն, էության գեղումի տենդ, թափվող բաժակի երանություն:

Մենք ասում ենք. «Հավիտենականությունն ամեն բանից առաջ ոգու անցումի կարոտ է, և գոյության իմաստը հասկանում են նրանք, որոնք մեռնելու կամք ունեն»:

Ուզում ես Հիսուսի հողի մեջ ընկած ցորենի հատիկի առակը վերծանի՞ր, ուզում ես հայ Մամիկոնյանների բարոյականը հասկանալով՝ ապրի՞ր, ուզում ես ոգու խորհուրդով գիտությանը մոտեցի՞ր, միևնույն է՝ տեսակի հարատևումը, կյանքի ստեղծագործությունը պայմանավորված են անցումի խանդով, մեռնելու կամքով:

Գոյությունը ծագումի և վախճանի առեղծված է: «Վախճան» նշանակում է և՛ մահ, և՛ նպատակ: Դա ասել է՝ մեր ճակատագիրն անցումի մղում է: Բայց ամեն «անցում» իմաստ ունի, և իմաստը նպատակի մեջ է: Ո՞վ է գծել ճակատագրի ուղին, ո՞վ է չափել տիեզերքի խորքը, ո՞վ է կշռել Աստուծո կամքը, ո՞վ է որոշել իրերի վախճանը, ո՞վ է գտել պատմության օրենքները: Մենք ասում ենք՝ «Նպատակն է մեր կյանքի առաջնորդը»:

Քո գործունեության ձևը պայմանավորվում է քո նպատակի բովանդակությամբ: Դու գործում ես այնպես, որպես թե տիեզերքը քո կամքի արտահայտությունն է և Աստվածը՝ քո խղճմտանքի հղացումը. Աս-

տուծո հետ ես, պատմաստեղծ ես: Առանց Աստուծո դու ոչինչ ես, իսկ առանց քո խղճմտանքի արթնության՝ չկա Աստված: Այլ եթե քեզնից դուրս կա Աստված, ապա դա զինակիցն է ուրիշների, և նրանք քեզ հետ կվարվեն որպես անոգի առարկայի: Դու կարող ես և՛ աստվածապաշտ լինել և՛, սակայն, անհաղորդ մնալ Աստծուն: Քո էությունից պիտի բխի աստվածապաշտությունը, այնպես, որպես թե տիեզերքի բացարձակ կամքն է գործում քո մեջ: Աստվածապաշտությունը ճշմարտագործություն է, և ճշմարիտ նպատակները միայն կարող են քեզ մղել իմաստալից գործունեության: Քո նպատակը պիտի արձանացնես էությանդ ա՛յն բնեռում, որ քեզնից դուրս է թվում: Անիմանալի կապերով դու գողված ես մի Անհայտի, մի Բացարձակի, մի Գեր-Բանականի: Քո նպատակը պետք է լինի ո՛չ թե քո մտքի հղացումը, այլ քո կախումի զգացումի բացարձակ հայտնությունը: Դու գործում ես նրա կամքով, որից կախված ես: Հիսուսն էր ասում. «Եվ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեացն զիս»<sup>37</sup>: Այսպես գործողներն են միայն պատմություն ստեղծում: Դու քո նպատակի գործիքն ես միայն, բարեկա՛մ: Եվ նպատակիդ միջոցով դու գործադրում ես քո մեջ հայտնություն ստացած Աստուծո կամքը: Երբ ասում ենք՝ «Նմանվի՛ր Մամիկոնյան հային», ուզում ենք հասկացնել, որ դու պարտավոր ես քեզ զգալ որպես ցեղիդ նպատակի անոթը և այնպիսի վճռակալությանը մոտենալ ճակատագիրդ շոշափող հարցերին, որպես թե Աստուծո կամքը բացարձակ հայտնու-

<sup>37</sup> Ես պետք է կատարեմ այն գործերը, որոնք առաքված են ինձ:

թյան է հանգել քո մեջ: Երագող ես դու, թե գուշակ, երանգների ծարավից խելագար բանաստեղծ, թե մտքի կմախքներով սիստեմներ հյուսող գիտնական, հացի սովորական ծառա, թե գաղափարների իշխան, մարմնի թովչանք, թե հոգու սովեր, սրտի աղքատություն, թե ուղեղի տագնապ, միևնույն է - դու ձև կտաս հավիտենականության ա՛յն մասին, որ ապրումի որոշականություն է ստանում քո մեջ: Ուզում ենք ասել, որ հայ մարդը անձնական ի՛նչ բարեմասնություն էլ որ ունենա, պատմագործումի տեսակետով նրա արժեքը մոխիր է և քամի, եթե դա չունի տարոնական հոգեգծություն: Միայն Մամիկոնյաններին հաջողվեց Հիսուսի մոլեռանդությամբ մահով մահը հաղթահարել, այսինքն՝ որոշականություն դնել նպատակի, վճռականություն՝ գործի, և բովանդակություն՝ պատմության մեջ: Ե՛րբ է մշակվում հաղթանակի արվեստը. այնժա՛մ, երբ պատմաստեղծ կամքը պատկերվում է որպես Աստուծո զինակիրը, իսկ հավիտենականությունը՝ որպես մայր ամենայն կարելիությունների: Ինչպես Աստուծո, այդպես էլ նրա ներկայությունը վկայող կամքի համար ոչինչ է անկարելի: Տիեզերքը հասկացվում և հաղթահարվում է հավիտենագգաց ոգու գործունեությամբ: Մամիկոնյանները գիտեին աստվածաբանությունից ռազմարվեստ բխեցնել, բարոյականով քաղաքականություն հիմնավորել և հավիտենականությամբ նպատակ օձել: Նրանք նախ աղոթում էին, հետո՝ ծրագրում և ապա՝ գործում: Այդ էր պատճառը, որ նրանց օրերի Հայաստանում չկար երկու բան՝ հոգևոր պարտվողականություն և բարոյական անկում: Նրանից հետո Նարեկացին հյուսեց տիեզերական ողբ: Հանճարի ցավով ևս թաթախեց իր գրիչը Բզնուն-

յաց ծովի ալիքներում և աղի խոսքերի մրմուռ ցանեց դարերի սրտին: Երկար ժամանակ հայի իմացական իդեալն եղավ՝ հասկանալ «Նարեկ»-ը: Հասկացա՞վ. նա թութակեց «ողբաձայն» մրմունջը, խարխափեց խորքի, իմաստի եզրին, գալարվեց բանականության վիժած առեղծվածների ցանցում և մի օր էլ ընդմիջտ մոլորվեց իր էության անդունդներում: Աստվածն այլևս մեր կամքի զինակիցը չէր, այլ՝ մեր մոլորանքների քննադատը: Պատմության փառքի գծից չեղածը ենթագիտակցորեն իրեն ծոված է զգում Աստուծո ճանապարհից: Նմանի համար Աստվածն այլևս առաջնորդ չէ, այլ միայն «տեսող գաղտնեաց»:

Հայն է հյուսել աշխարհի ամենասպանիչ, գոյության տենչի ժխտումին համահավասար «Մեղա»-ն: Պատուհասվելու սարսափից նա իր հավատի պարարտությունը ճենճերելով<sup>38</sup> բուրվառեց<sup>39</sup> երկնքին, ներսից այրվեց, ծուխը տվեց քամիներին և դատարկվեց իր էության ուժերից: Դեր-Չո՞ր - առանց խոր վերածնունդի դա անխուսափելի էր: Մինչև այդ մեր կյանքում ամեն ինչ սկսվում էր ցավով, շարունակվում ողբով, վերջանում աղոթքով: Մենք շուտ եկած էություն էինք և տառապանքի ծարավ: Մենք հիշողությամբ էինք միայն տարոնական, բայց ո՛չ կենդանի զգացումով: Դրա համար էլ մեր կյանքը քավության բաղձանք էր միայն և անստեղծա-

---

<sup>38</sup> այրելով, խորովելով

<sup>39</sup> Բուրվառ՝ խնկաման, որ հոգևորականը ճոճելով տարուբերում է եկեղեցում պատարագի ժամանակ: բուրվառել՝ փառաբանել

գործ տանջանք, նահատակության սարսուռ և երկյուղած թերահավատություն: Հոռետեսությունը ավելի՛ ծանր արժեքներ և սրբություններ է ստեղծում, բայց դրանք բոլորն էլ ճակատագրորեն խորասուզող են, անկումնային:

Անհիմաստ չէ՛ ամենայն անցյալ. աշխարհը միայն մի պատմություն չունի. ճիգը սուտ չէ, ոչ էլ ելքը՝ ցնորք: Դեռ զգվանք չունե՞ս քո անգոր ճակատագրապաշտության, հույսի ավելցուկներով կերակրվելու քո տկարության, քո նենգության, երկմտության, ունայնագործության, սողացող մոլորանքների հանդեպ:

Ինչի՞ն ես սպասում և ի՞նչպես սպասում: Հայաստանում ամեն ինչ սպասում են Մոսկվայից, գաղութներում՝ Հայաստանից: Հարուստներն իրենց հոգեպահուստ գանձը նախընտրում են իրենց աղջիկների հետ տալ օտարներին: Չունևորները միխթարվում են ա՛յն նախապաշարումով, թե միայն աղքատության մեջ կարելի է մի քիչ ավելի լավ հայ մնալ:

Հոգևորականությունը մոմ ծախելու նպատակով հաստատած իր աղոթատուները հռչակում է «Հայրենիք»: Քաղաքական կուսակցությունները գիտեն, որ ինչպես էլ դարձնես՝ «մեկ անգամ մեկը անում է՝ մեկ»: Բարեգործական ընկերությունները «քյուֆթե փարթի» են խաղում և թե՛ զվարճանում, թե՛ ողորմություն անում, թե՛ ազգային ավանդությունները պահում... Մամուլի ներկայացուցիչները իրենց դեմքին մածուն են քսում և խելքի մրոտած թղթերի առաջ կանգնում ճերմակերես: Եվ բոլորը միասին սպասում են ինչ-որ աքլորակ: Այս չէ՞ տարագրության տանջանքը, հսկումը, «ոգին պահելու» ճիգը: Եվ դու պատմությո՞ւն պիտի ստեղծես: Վա՛յ

նրան, ո՛վ աքլորակի հույսով «ոգին է պահում», նմանը, սովորաբար, մինչև աղջամուղջը ավանդում է այն:

Մենք ասում ենք՝ «Ոգին չի պահվում. ոգին աճում է՝ գործելով»: Գործի՛ր այնպես, որպես թե գերբնական ուժերից գործություն ես ստանում և ո՛չ թե դատարկվում նրանց առաջ: Այդպիսով դու կգործես քո Աստուծո հետ: Կգործես կարելիությունների մի աշխարհում, որի բոլոր իրացումների աղբյուրը քո կամքն է:

Այսպես չէի՞ն տարոնական հայերը: Ասում ենք՝ այսպե՛ս էին, և «անել» թվացող այսօրվա դրության մեջ մենք դիմում ենք նրանց ոգուն:

Տարոնականություն - դա միայն բարոյագիտական պատգամ չէ, այլև կարելիապաշտական իմաստասիրություն, անցավորը հավիտենականին հյուսելու իմաստություն և ճակատագրի առեղծվածները Աստուծո խորհուրդով լուծելու կամեցողություն:

Քանի դեռ չկա այս կամեցողությունը, «անել դրության» նախապաշարումը պիտի շարունակի բազմաձև մնալ իմաստության գահին, և պատմության գծից դուրս նետված հայր պիտի մոխրանա մանր իր գոհունակությունների հետ, ինչպես կալանված ոգին՝ առեղծվածների ուստայնում: Տարոնականությունը հին մի բարոյականի ոգեկոչում չէ միայն. դա նաև ելքի կամք է՝ նախապաշարումների ցանցից:

«Տարոնի Արծիվ» 1939թ., թիվ 9

## ԻՐԻՑՈՒԿ<sup>40</sup> ՄԵՌԵԼՆԵՐԸ ՎԿԱ

Մուսա լեռան հայերը գաղթեցին՝ վառելով իրենց գյուղերը և գերեզմաններից առնելով նահատակների աճյունները:

Ողբերգությունները, ցավ պատճառելով, լուծում են նաև առեղծվածներ: Ինքը՝ ցավը, որպես անցումի տանջանք, թե երանություն, հիշատակի վառ մի մոմ է՝ մեր էության անձանոթի առաջ: Շա՛տ եմ մտածել ա՛յն մասին, թե ինչո՞ւ վերապրող տարոնցիները ստեղծեցին ցավի երդումը. նրանք էության սարսուռով երդվում են «իրիցուկ մեռելներով»:

Ո՞վ է չափել հայ ոգու տարողությունը: Մեր սիրտը խորհուրդների ոստայն է, և մեր ուժը՝ հակասության մեջ: Մեր բոլոր հաղթանակները ոգու ողբերգական ակտեր են, և մեր կամքն օծված է ավելի այրված մեռելների ցավով, քան երկաթի շառաչի կարոտով: Ի՞նչ ցեղ էր այն, որ հարավային Ռուսաստանում, Թրակիայում, մեր Տարնում, Բագրևանդում, Այրարատում արվեստական բլուրներ է կառուցել իր մեռելների համար և դրանք դարձրել նաև ինքնապաշտպանության բերդեր: Ի՞նչն է ժառանգվել մեզ այդ ցեղից, որ չէր կարողանում առա՛նց գերեզմանների իշխանության ապրել, առա՛նց հայրերի ոգու և աճյունների առաջնորդության կոիվ վարել:

Պատկերեցե՛ք Հայաստանը և կարդացե՛ք մեր կյանքի խորհուրդների գիրքը. մեր գերեզմանոցները, սովորա-

<sup>40</sup> այրված

բար, հաստատված էին բարձունքների վրա, որ ասել է՝  
նոջերն ապրում են մեռած հայրերի հսկողության տակ:  
Մեր էությունը անբաժան է հայրերի գերեզմանից. դրա-  
նից էր հայն ստանում սրբության կրակը:

Հռոմեացին ասում էր՝ «Վիա՛ ոք», հայը՝ «լու՛յս»: Ո՛չ մի  
ժողովրդի լեզվի ոգուն այնպես հարագատ չեն «լուսա-  
հոգի», «լույս իջնի հորդ հոգուն, գերեզմանին» դարձ-  
վածքները, և ո՛չ ոք է «արև»-ը, «լույս»-ը, «կենդանի  
կրակ»-ը այնպես խանդով երգել, որպես մեր Շնորհա-  
լին, Նարեկացին: Վահագնի ուրվականը կրակի խոր-  
հուրդով դեռ հաճում<sup>41</sup> է հայ հողի վրա: Լուսավորիչը  
(այլ ո՛չ մի ազգ իր առաքյալին այսպիսի տիտղոսով չի օ-  
ծել. այս մակդիրն էլ իր հերթին արդյունք է հայոց խոր  
լուսապաշտության) մեր առաջին մկրտությունը կատա-  
րում է Թոնդրակի հրաբուխներից իջնող Արածանու  
ջրերում: Մամիկոնյանների դամբարան Ս.Կարապետը  
դառնում է հայոց աշխարհի ամենահզոր սուրբը: Հայն  
իր ուժի, լույսի,

ձիրքի աղբյուրը համարել է մեծ նախահայրերի գե-  
րեզմանը: Աշխարհաձանոթ է հայ լարախաղացների  
երկյուղած պաշտանքը<sup>42</sup> դեպի իրանց հովանավոր և  
ձիրքատու Ս.Կարապետը: Սայաթ-Նովան ասում է, որ  
«Ս.Կարապետի կարողությունով» է ձեռք բերել նվազո-  
ղական իր վարպետությունը: Հայոց սրբերի «սուլթան»-ի  
հմայքով իշխում էր Մամիկոնյանների դամբարանի  
խորհուրդը՝ տարոնական ոգու խորհուրդը: Տեսնողնե-  
րից ո՛վ չի հիշում լույսի պսակը գնդապետ Սամարցնի

<sup>41</sup> շրջել, թափառել

<sup>42</sup> պաշտամունքը



(մուլեռանդ այն հայը, որ իր գնդի անունը դրեց «Մուրբ Կարապետսկի պոլկ») ճակատին, երբ դա Ս.Կարապետի անունով խաչ էր հանում: Այսօր, ո՞վ չի սարսռում, երբ լսում է տարոնցի մայրերի ցասումնախառն բարեպաշտությամբ օծված երգումը. «Էն իրիցուկ սուրբ մեռելները վկա»...: Վկա՛ ամբողջական Հայոց Աշխարհը, հայ ցեղը, որի խորհուրդները այնքան կենդանի կերպով դեռ ներագոյում են հեռավոր Մուսա լեռան իր որդիների ոգում: Օրհասական միվայրկյանում նրանք թաղեցին խորհուրդների զանգը և կրոնական խանդով բարձրացան իրենց լեռը՝ աշխարհը զարմացնող հերոսական ստեղծելու: Այսօր երկու պետությունների քաղաքական սակարկությունների հետևանքով հարկադրվում են լքել իրենց հնամյա գյուղերը, բայց վառում են տները և գերեզմաններից վերցնում նահատակների աճյունները. «Թուրքը չի կարող շնչել մեր հայրերի բնակարաններում, ո՞չ էլ պիղծ իր ոտքը դնել նրանց գերեզմաններին»:

Հիացե՛ք, որքան ուզում եք. երկու ակտերով էլ Մուսա լեռան հայերը փրկեցին մեր ցեղի պատիվը: Բայց ո՞ւր է գաղտնիքը կրոնականության հասնող այդ ցեղազգացության: Գաղտնիքը նրանում է, որ աշխարհագրական և ազգագրական պայմանների բերումով հայկական այդ գյուղախումբը, պատմական հիշողությամբ, թե՛ կյանքի առօրյայով, ապրել է որպես ինքնամփոփ ցեղ և ո՞չ թե՛ իր երկրորդությանից դուրս եկած ժողովուրդ:

Մուսա լեռան հայերն իրենց համարում են Տիգրան Մեծի հայկական աշխարհակալության առաջամարտիկ ուժի հետնորդները: Պատրանք լինի դա, թե՛ իրականություն, մինևու՛յն է, այս հավատը կենսաբանական խորք ունի և ըստինքյան բարոյական անխորտակելի

ուժ է: Փաստ է, որ Մուսա լեռան հայերը ոգու խորհուրդի և հայրերի աճյունների պատվով ապրող մարդիկ են: Դա նշանակում է, որ նրանք հին, շա՛տ հին հայեր են և Հայաստանից հեռացած դեռ ա՛յն օրերին, երբ մենք տարոնական ոգով ու բարքով ապրող ցեղ էինք և ո՛չ թե «հայ ժողովուրդ»: Ահա՛ պատճառը, որ հիշատակները Մուսա լեռան շուրջ հայ ոգու ամենահուժկու շանթը արձակեցին՝ պատմական ծավալով փոքր, սրտի տարողությամբ՝ անչափելի:

Ինչէ՛ր կարող էր անել Տարոնը Նեմրուծի վրա, ուր Խորենացին Բելն է թաղել և մեր նոր պատմությունը՝ Սերոբների տիտանացումը, արձանագրել: Բայց ժողովրդական բարոյականի ռազմավարությունը այստեղ կոտրեց ցեղի սուրբ: Մուսա լեռան հայերի բնագոն անկաշկանդ մնաց. այնտեղ չկային ժողովրդի նախապաշարումներով առաջնորդվող ղեկավարներ:

Նրանք, որ դեռ «չեն հասկանում», թե ցեղ, տարոնականություն, հայրերի ոգի քարոզելով՝ ի՛նչ ենք ասում, թո՛ղ իրենց կարճաշունչ զննությունը մի պահ ուղղեն դեպի անցյալը, ապա դեպի օրվա հայկական Պոլիսը կամ ժողովրդի բարքով ու տենչերով ապրող մյուս գաղութները, և «այլասերվու՛մ ենք», «ուժանու՛մ ենք» իրենց աղաղակներով ծունկի գան Մուսա լեռան հայկական ցեղախմբի առաջ: Ուր ժողովրդի հոգեվիճակն է իշխում, այնտեղ կա «այլասերումի» երանություն, ամոթանքի ողբերգություն: Մոտ մեկ միլիոն հայեր կան «սփյուռք»-ում, բայց այս քսան տարվա ընթացքում հպարտանքի ողբերգություն ստեղծեցին Մուսա լեռան հինգ հազար հայերը:

Մարդկային ամեն նախիր բարոյական ուժ չէ, ո՛չ էլ «կուծանա՛ նք»<sup>43</sup> աղաղակը՝ քաղաքական գործ: Բարոյական ուժ է միայն ցեղը, և քաղաքական գործ՝ միայն հայրերի պատիվն ու ոգին հավերժացնելու ճիգը: Ձենքի շառաչով հաղթանակ չտարավ Մուսա լեռը, քայց իր գյուղերը հրկիզելով և նահատակների աճյունները հետն առնելով՝ ապացուցեց, որ հայրենի հողի մրմուռի չափ խորն է աններողության զգացումը թուրքի հանդեպ: Թո՛ղ ժողովրդի ոգու ներկայացուցիչները հաշտվողականություն քարոզեն, թո՛ղ նրանք Մեծ Հայաստանը ցնորք համարեն և մեր հայրերի գերեզմանները հայոց երկրի հետ անդառնալիորեն կորած: Կորած են միայն իրենք, որ չեն հասկանում ժամանակների շարժը: Ազգերի պատմությունը գրվում է ցեղի արյունով և ոգու տանջանքով, քայց ո՛չ՝ ժողովրդի քրտինքով և հացի ժխորով: Եվ գրում են նրանք, որոնք հավիտենականության համար ավելի՛ կենդանի զգացում ունեն, քան անցավորի, լինի դա դժբախտություն, թե հաճույքի երանություն:

Թո՛ղ գիտենան նաև մակերեսայինները, որ մեր ճակատագիրը վարում են հավիտենական ուժերը, որ Մուսա լեռան հայերի ներկա ակտը նրանով է մեծ և պատմական, որ դա վկայություն է այն մասին, թե մեզ ձգող ուժերից ամենագորութենավորը ցեղն է՝ ցեղը՝ հողի իր կսկիծով, կարոտով, աններողության իր բարոյականով, ցասումով և կենդանիները մեռելներին շաղկապող խորհուրդներով:

<sup>43</sup> ուծանո՛ւմ ենք

Այդ խորհուրդների ուժով մենք ոգեկոչում ենք Մամիկոնյաններին և նրանց «մեռնելու կամք»-ի հրամայականը իմաստավորելով «այրվածների կտակ»-ով՝ ձգտում ենք հայրենադարձումի կրոնախանդ ցեղաշարժ ստեղծել՝ Տարոնականությո՜ւն:

Ո՛վ կարողացավ խորքով ապրել Մուսա լեռան հայերի գործի խորհուրդը, ապրեց տարոնականությունը: Ո՛վ հասկացավ դա, հասկացավ, որ ո՛չ միայն երկնային, այլև երկրային հավիտենականության ճանապարհին հայրերի գերեզմանն է ճակատագրի ամենախորհրդավոր նշանաքարը:

Օրվա պայմաններում հայ չկա Արևմտյան Հայաստանում, բայց դա մեր հոգևոր սեփականությունն է: Այդ սեփականության զգացումը հիմնավորվում է հիշատակների ձգողականությամբ:

Մեզ քաշում է հավիտենականությունը. քաշում է այրվածների ցավի ծանրությամբ, սրբազան այն մուլեզնությամբ, որով Մուսա լեռան հայերը մի օր իրենց խորհուրդների զանգը թաղեցին, այլ մի օր իրենց հայրերի տունը վառեցին, քաշում է էության ա՛յն սարսուռով, որ ապրում է տարոնցի հայր օտարության մեջ, երբ երդվում է. «Իրիցուկ մեռելները վկա»:

«Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 11

## ԴԱՐՁ ԴԵՊԻ ՈՉԻՆ

Մեռնել, բայց չտեսնել Հայրենիքը պարտված: Հաղթանակից կյանքի բարոյական կանոն հորինել, պարտությունը ստեղծագործաբար ողբերգել և դրանից մեծագործումի նոր ուժ և խանդ երկնել:

Այդպես չէ՞ր երբեմն հայր:

Ասում ենք՝ այդպես էր, ուզում ենք էլի՛ այդպես լինի և քարոզում ենք տարոնականություն:

Մեր առաջ, սակայն, փոխված է հոգևոր վերջալույսի մի պատկեր: Վերջալույսին քնի կարոտից հորանջում են ստվերները: Մեծ ստվերը՝ գիշերը, արդեն մայրն է քնաբեր առաքինությունների: Ստվերները հորանջում են՝ «հին հայր վաղուց է մեռած»:

**«Ոգին մահ չունի՛», - ասում ենք մենք:**

Ոգու մահվան հավատում են վերջալույսին ստվերորեն սպառվածները: Նրանք, որ բռնված են վախճանի տենդով: Ապրելու ազահությունը և մահվան զգացումը - միևնույն տոպրակում սրանք դեղնում են, ինչպես աշնան տերևները: Ամեն բան չի դեղնում կատարելությունից, շատ բան դեղնում է սպառումից: Դեղին երգերի բանաստեղծները, շա՛տ անգամ, քուն են քարոզում՝ ցավագին ճիչ և ձանձրության աղոթք: Քնաբեր ամեն խոսք, մտածում և աղոթք վախճանի կարոտ է, վերջինը՝

տկարություն, իսկ տկարությունը՝ կենսագործ բոլոր ճշմարտությունների թշնամին:

«Արթնացի՛ր, Հայաստա՛ն» - օրերի զանգահարումը խոժոռում է հոգով մեռածներին: Արշալույսի կանչը, դա

մեծագույն թշնամին է հոգնած-պարտասածների: Ստվերները ձայն չունեն, բայց նրանք ընկերներ են շարժվող կյանքի: Նրանք ունեն իրենց համր երանությունը. ուզում են քնել: Շարժումների թշնամին մի՛շտ էլ ստվերոտ մի էություն է:

Տարոնականությունը ոգու շարժում է, նոր կյանքի խոսք: Դա ունեցավ իր թշնամիները՝ մահապաշտները, ստվերային էությունները, նրանք, որ տաժանքով են քայլում կյանքը փոթորկող ուժերի հետ, ստվերի տաժանքով:

Մենք ասում ենք. «Ոգին անմահ է»:

Բայց երբեմն ոգու կայծը՝ հոգին, ավելի՛ շուտ է մեռնում, քան մարմինը: Անմահ է միայն ժամանակը բոցավառող, տարածությունը նվաճողաբար ճմլող ոգին՝ ստեղծագործը:

Հիսուսն էր ասում. «Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի»<sup>44</sup>: Ստեղծագործ ոգին միշտ էլ աշխարհում է և լուսագործում է: Ժամանակը ոգեսպառի համար անջրպետ է, ոգու կրողի համար՝ կապ: Ժամանակներն իրար են կապվում հավիտենականի զգացումով անցավորը հաղթահարող ոգու ճիգով: Մամիկոնյաններից անցել է մեկուկես հազարամյակ, հայ բոլշևիկները տիրում են այսօր: Բայց նրանք մեզ ավելի՛ մոտ են թվում, քան վերջինները: Այդպես չէ միայն նրանց համար, որոնք ժամանակը ըմբռնում են որպես իրար հակասող դեպքերի մի շարժ, որպես անցումների մի քառս:

Ժամանակը հոգեբանական առաջընթաց է: Բարոյապետ աճող մարդու համար նրա արժեքները, հոգևոր բո-

---

<sup>44</sup> Մինչդեռ աշխարհում եմ, աշխարհի լոյսն եմ:

վանդակությունները աճում են այդ առաջընթացի հետ: Հայրեն անկարելի է հերոսանալ առանց Մամիկոնյան մի հսկա կենդանիորեն պատկերելու: Հերոսականը ժամանակները հաղթահարող պատկերում է:

Հրեության հզորանքի գաղտնիքը նրանում է, որ ամեն հրեայի սրտի մի անկյունում կենդանիորեն տրոփում է Մովսեսը:

Ոգու բոլոր նահանջները առաջ են գալիս ժամանակի մասին ունեցած անկենսաբանական ըմբռնումից: Հակասությունները պարտություն են վիժում: Կա՞րսը. այդ պիտի չունենայինք, եթե այնտեղ ճակատող հայկական բանակը չապրեր իր և Վարդանների ոգու հակասությունը, եթե ժամանակը հաղթահարելով՝ նա

կարողանար անցումի իր երանության մեջ դնել Մամիկոնյանավայել հերոսական: Բոլոր պարտությունները արդյունք են պատմական ոգու աղոտումին, նախ՝ դրան:

**«Հեղաշրջված ոգին է հեղաշրջում իրականությունը» - ասում ենք մենք:** Յուրաքանչյուր ազգ ապրում է ճակատագրական մի նշանախոսքով:

«Հիշի՛ր մահը», - ասում է մի ժողովուրդ և դրանով էլ բարոյակարգում իր ընկերային կյանքը: «Հիշի՛ր Մամիկոնյան հայր», - ասում ենք մենք, որովհետև ուզում ենք հաղթահարել պարտվողականությունը, փոխել, հեղաշրջել ճակատագիրը: Ուզում ենք տարագրության ցավն ու ամոթանքը վերածել հայրենատիրումի, հզորանքի կամքի: Մեծագույն ստորնությունների ընդունակ ժողովուրդը ընդունակ է նաև գերագույն հերոսականի: Մեծ անկումներն էլ գործ են հուժկու խառնվածքի: Միևնույն խառնվածքի բացասական արտահայտությունը

կարող է այնքա՛ն անկումնային լինել, որքան դրականը՝ վերացնող: Ոգու ձգողական և վանողական կարողությունները ծագում են միևնույն արմատից: Իբրև հոգեբանական տիպ՝ հրեան և՛ բևեռացած ստորնություն է, և՛ բևեռացած նվիրում: Ժողովուրդներ կան, որոնց համար ստորնությունը ինքնապաշտպանության ամենահատու զենքն է: Կան էլ, որ առանց դրական բարոյականի փլուզվում, ոչնչանում են: Հայը ընդունակ չէ ոգու երկու ուղղություններ կրել իր անձի մեջ: Մեր այս հոգեգծով մենք հակապատկերներ ենք հրեայի: Այդ է պատճառը, որ օտարության մեջ մենք չենք կարող օգտվել նրա ցեղային ինքնապաշտպանության մեթոդից: Նա մոռանում է լեզուն, ծպտվում է իբրև ոչ-հրեա, բայց Թալմուտի մի բառով պահում է ցեղային ներքին կրակի մոլեգնությունը: Ծպտումի ընդունակ հային չի կարող փրկել ամբողջ «Նարեկ»-ը: Հրեան հորինում է համամարդկային գաղափարներ, խառնում է ազգերը իրար և հաճախ հանդիսատես դառնում իր «թալիսման»-ով փոթորկված աշխարհի խելագարություններին, հայն ինքն իր մեջ փխրվում, այլասերվում է, հենց որ բռնվում է օտար մի հովից:

Հայը «միջազգային» ասպարեզի էակ չէ: Փավստոսի այլաբանությամբ՝ նա իր Արշակ թագավորի նման հզոր և ազատահոգի է միայն իր հողի վրա: Հայրենիքն է նրա ինքնապաշտպանության միակ զենքը:

«Դա՛րձ դեպի երկիր», - ասում ենք մենք: «Ռեալ պայմանները», - հարցնում են իրենց կյանքում ընդհանրապես պայմաններով ապրողները, սակարկողները: «Պատմական բոլոր իրականությունների հեղինակը և ստեղծիչը ոգին է», - ասում է տարոնական մեծ հայերի



հերոսականը: Այդ է ասում նաև մեր ժամանակների գիտությունը:

«Հոգեվերանորոգում և ճշմարտությունների հեղաշրջում» - ահա՛ առաջին քայլը դեպի նոր ճակատագիրը: Որպեսզի մի բան փոխվի, նախ պիտի կամենալ, որ փոխվի: «Կամենալ»-ը հոգևոր որակ է: Ոգու ամեն ճիգ որակ է: Այդ է պատճառը, որ ոգու ներգործությունն է իմաստավորում բնության ամեն մի երևույթը և պատմության դեպքերը:

Տարոնականությունը հոգեվերանորոգչական շարժում է, որով և՛ կյանքը իմաստավորելու ճիգ: Նիցշեն ասում էր. «Գերմարդն է երկրի իմաստը»: Մենք ասում ենք. «Հայաստանն է հայ մարդու իմաստը»:

Այսպես ասելով՝ մենք ընդունում ենք Մամիկոնյան մի ճշմարտություն:

Օագում են հարցեր. «Ինչո՞ւ այս ճշմարտությամբ գործող հայը հզոր էր: Ինչո՞ւ տկար է այսօր հայը: Ո՞րն է օրվա հայի ճշմարտությունը: Մենք չկործանվեցի՞նք այն ըմբռնումից, թե հայրենիքը միջոց է»:

Կյանքի լրջագույն հարցերին մարդիկ պատասխանում են ըստ իրենց նկարագրի, խառնվածքի, բարոյական խորքի: Հոռետեսի կարծիքով՝ կյանքը մահվան առաջընթաց է: Մեզ համար՝ կյանքը մահվան հաղթահարելու ճիգ է: Վախկոտի կարծիքով՝ չկա ավելի մեծ հանցագործություն, քան հերոսականի պահանջը: Եսականը «նվիրում» բառը հասկանում է որպես պատուհասումի պատգամ: Զեղծահոգի էակը որոգայթ է լարում ճշմարտության դեմ: Հիսուսին խաչում են իր քարոզած գաղափարների սարսափից: Նոր գաղափարներից սուկում են հոգեպես սպառվածները: **Անկումի երանության**

**գոհերին հոգրանքի խոսքը թվում է մահապատիժ:** Տկարությունը գիտակցական սարսափ է մահից և անգիտակցական մահաբաղձություն: Տկարի չարությունը, դա գերեզմանափորի հոգևոր զենք է: Գերեզմանափորը հոգեբանական եղկելի այն տիպն է, որ մահի սարսափից

մահվան դեպքերը օգտագործում է որպես ապրուստի միջոց: Մեծ գաղափարների մանր թշնամիները միշտ էլ ունեն գերեզմանափորի հոգեբանություն:

Հասկանալի է, որ տարոնականությունը, իբրև ոգու շարժ և կենսանորոգումի ճիգ, պիտի անհանգստացներ հոգևոր գերեզմանափորներին, նվաստության երջանիկներին, իրենց անձերի բարոյական դիակնացումը առանց ցնցող տազնապի տեսնող-ապրողներին:

Մեծ գաղափարները հղություն են ստանում կյանքի մեծ ճգնաժամերից: Ամեն ճգնաժամ տալիս է իր գոհերը: Դրանցից է առօրեական ապրումներին գերի մարդը՝ հավիտենականության ատամնաթափ այդ թշնամին:

**Ծանր է մեզ համար չոր ճշմարտություններով խոսել, բայց ճշմարտություն է, որ հավիտենականության գծի վրա առօրեական արժեքները և նրանց կրողները չեն մեռնում, այլ սատակում են:**

Մենք սոսկում ենք առօրեականին գերի դարձող գաղութահայության ճակատագրից: Մենք ասում ենք, որ հայը մե՛կ տեղ միայն կարող է իմաստալից

մահ ունենալ՝ Երկրի ճանապարհին: Եվ մեկ տեղ միայն իմաստալից կյանք՝ Հայաստանում:

Ոմանք կարող են այս բանը չհասկանալ: **Տգիտությունը հանցանք չէ, եթե դա օժտված չէ չարության դինա-**

**միզմով:** Դա անշո՛ւշտ, մի ուժ է, ա՛յն ուժը, որ հոգևոր լե-  
շեր է ստեղծում և թմբում կյանքի հոսանքը:

Կանգ առնել անգամ տգիտության գոհերի առաջ և  
խաչ հանել, դա ամեն բարոյաշունչ մարդու պարտակա-  
նությունն է: Բայց չմաքրել կյանքի ուղին, դա միայն բա-  
րոյապես սպառվածների տկարությունն է:

Չարության դինամիզմը պատմականորեն անստեղ-  
ծագործ է ա՛յն պատճառով, որ նրա կրողը մեծ նպա-  
տակների ծարավ չունի: Դա, երբեմն, հաջողություններ  
է շահում, բայց հաղթանակի նվաճումը մի՛շտ էլ վերա-  
պահված է դրականորեն ստեղծագործ ոգուն:

Տարոնականությունը մեր ցեղի դրական հոգեգծերի  
շարժն է: Դա հաղթանակի վստահություն է:

Ճանաչում ենք մեր իրականությունը, որում ոգու  
սպառումը կասկածամտություն է վիժում, իսկ վերջինը՝  
դավ և ուրացում: Գիտենք նաև, որ ամեն մի ոչնչություն  
գոյության մի սկզբունք ունի. արժեք ստանալու նպա-  
տակով բացասել մեծ գաղափարները, ժխտել բաներ,  
որոնց մասին հասկացողություն չունի, և տրորել իսկա-  
կան արժեքները: Առօրյան մի՛շտ էլ մանրագործ հերոս-  
ներ է վիժում, և հավիտենականությունը մի թշնամի  
ունի՝ առօրյայի «հանճարը»:

Ովքե՞ր են գործում մեր դեմ- մեր ցեղը հայրենատեր և  
հավերժական դարձնելու ճիգի թշնամիները՝ «ոռալ  
պայմանների» փոխասացները: Բայց մենք առանց լապ-  
տերի չենք իջել մութ փողոց, ո՛չ էլ առանց զենքի՝ պա-  
տերազմի դաշտ: Մեզ առաջնորդող լույսը մեր պատ-  
մությունը վարող ոգեկան ուժերի իմաստասիրությունն  
է, մեր զենքը՝ Մամիկոնյանների բարոյականը: Հրամա-  
յողաբար մերժել որևէ ներքին պայքար, ո՛չ թե չափվել

տկարության ու տգիտության հետ, այլ միայն վերանորոգող լույս և հզորանքի բարոյական բաշխել նրանց, որոնք տառապում են հարցից՝ «ինչո՞ւ, ինչո՞ւ այսպես եղան հայն ու Հայաստանը»: Տարոնականությունը միայն հզորանքի ուսմունք չէ, այլ նաև ներցեղային սրբության փիլիսոփայություն, այսինքն՝ ոչ-սովորական բարոյագիտություն: Դա միաժամանակ Ավետարանի ողբերգանքը չէ. «Յյուրսն եկն և յուրքն զնա ոչ ընկալան»: Դա մի ուսմունք չէ «բոլորի և ոչ ոքի համար», այլ՝ միայն ընտրյալների: Դա կանչ է՝ ուղղված միայն նրանց, որոնք ընդունակ են բարոյական նորոգումի:

Հոգեներոզչական շարժումը նախատեսում է ընտրանի: **Ընտրանին նա է, որ սրտի կսկիծով ապրում է տխուր ներկան և հոգու աչքով տեսնում երջանիկ ապագան:**

Տխուր չէ՞ մեր ներկան: Անհրաժեշտ չէ՞ երջանիկ ապագա: Եվ ներկան մի բան չէ՞, որ պիտի հաղթահարվի: Ապագան չի՞ նվաճվում տազնապալի մարտնչումներով: Հաղթահարող, նվաճող ուժը ո՞րն է: «Պատմազգաց ոգի՛ն» - ասում ենք մենք: Միայն դա՛, պատմազգաց ոգին է ընդունակ պատմություն երկնելու:

Տարոնականությունը, ահա՛, այս ոգու իմացումն է, և այդ նույն ոգին վերանորոգաբար մշակելու աշխատանքը, ճիգը: Նրանք, որ այս բանը չեն հասկանում, ոգու թշնամիներ են խառնվածքով:

«Կենդանեաւ մերով տեսաք զդիակունս անձանց մերոց»<sup>45</sup>, - այսպես էր ասում Եղիշէն: Այդ ողբերգությունից Մամիկոնյան հայերը ստեղծեցին նոր հերոսական: Պի-

<sup>45</sup> Մեր կենդանությամբ տեսանք մեր անձանց դիակները:

տի ստեղծենք և՛ մենք: Դա՛վը, թշնամա՛նքը - թո՛ղ շարունակեն նրանք, որոնք ապագան չեն տեսնում: Ապագան տեսանողներին է:

Ապագան տեսնում են նրանք, որոնք անցյալն ապրում են իբրև ոգու հայտնություն, և պատմական արարչագործումը՝ իբրև ոգու արժեքների շեղջավորում<sup>46</sup>:

Մեր ճշմարտությունները տեմպերամենտային ճշմարտություններ են. նրանք աճում են և աճման կամքը ներբնակ է: Միայն ոգու զգացողական ուժերն են ներբնակ: Ոգում գործում է տիեզերաստեղծ ուժի, դուք ասեք՝ Աստուծո կամքը: Առանց մետաֆիզիկայի և օնտոլոգիայի՝ բնագանցության և էաբանության, կարելի չէ հասկանալ ոգին: Իրերի հիմքը այն չէ, ի՛նչ տեսանելի է պարզ աչքը:

Ոգին ընդհանրապես մատչելի չէ զգայնությանց: Նրա ճշմարտությունները խո՛ր իմացաբանական են, էաբանական: Պատմությունը ռեալ դեպքերի արձանագրություն չէ, այլ՝ ոգու հայտնություն: Առանց ոգու իմացության՝ կարելի չէ հասկանալ պատմությունը: Ամեն բան չի լինում գիտացյալ իրերի կամքով: Շա՛տ բան, և ճակատագրականը, լինում է անգիտակցականի, դուք ասեք՝ Աստուծո կամքով:

Հաղթանակ՝ դա հնարավոր է, երբ մետաֆիզիքական ուժերն են մարտնչողի առաջնորդը, երբ վերջինն զգում է, որ բացարձակ մի ուժ է գործում իր մեջ:

Այդպես չէի՞ն Մամիկոնյանները՝ աստվածահաղորդ: Այդպես չէ՞ր Մեսրոպը, որ ըստ հայոց պատմության վկայության, նախ ձուլվեց աստվածայինին և ապա հնա-

---

<sup>46</sup> կուտակում

րեց մեր երկրի լույսը: Ղևոնդ Երեցը չէ՞ր ասում, որ ինքը խոսել է Աստուծո հետ:

Այդպես էին նրանք, և դրա շնորհիվ էր, որ նրանց օրերի Հայաստանը հզոր էր անգամ իր պարսության մեջ:

Տարոնական հայը աստվածահաղորդ է, աստվածախոս՝ ստեղծիչ կրոնական զգացումի և պատմակերտ ոգու:

Տարոնականություն - դա մեր պատմության իռացիոնալն է, անգիտակցականը, ոգու այն տարերքը, առանց որի իմացության՝ անհնար է խոսել ճակատագրի հետ:

Այն բոլորից հետո, ինչ որ տեսանք. Դեր-Չորից, Կարսից հետո՝ էլ հարց չտանք. «Որտեղի՞ց ենք գալիս, ո՞ր ենք գնում»:

Մենք գալիս ենք մի աշխարհից, որի բոլոր իրականությունները սարսափի երազներ վիժեցին: Մենք գնում ենք դեպի մի երազ, որ իրականություն պիտի դառնա:

Երբ չկա պատմաստեղծ ոգու առաջնորդություն, իրականությունը կդառնա երազ, երազ չէ՞ այսօր երեկվա մեր երկիրը, իր բոլոր իրականություններով:

Երբ կա այդ ոգու առաջնորդությունը, երազները իրականություն կդառնան, վաղը իրականություն պիտի չդառնա Հայաստանը:

Որպեսզի այդպես լինի՝ դարձե՛ք դեպի ոգին: Մի՛ թշնամացեք, այլ հասկացե՛ք, որ անոգի ժողովուրդը միություն, ուժ և ապագա չունի:

«Դա՛րձ դեպի ոգին»:

Չե՞ք լսում՝ ինչ ենք ասում. մենք ասում ենք՝ հոգևոր վերանորոգում, տարոնատիպ հզորահոգի հայ մարդու վերակառուցո՛ւմ, հայակերտո՛ւմ:

Եվ ուրիշ ոչի՛նչ:

Մնացյալը մենք թողնում ենք քաղաքագետներին, կուսակցություններին և ցանկանում, որ նրանք իմաստուն լինեն և զորավոր:

«Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 5-6

**Պատմում է Հայկ Ասատրյանի  
բանտակից ընկերը  
Կարո Մեհյանը (Սոսյաց տղան)<sup>47</sup>**

Իր անունը իրենից առաջ էր եկել Պլոպդիվ (Ֆիլիպե): Բայց եկել էր հակադիր տպավորություններով ու տրամադրություններով: Ոմանք խանդավառված էին իրենով: Նրան էին վերագրում շեշտված նկարագիր, մտավոր լայն պաշար, դեպքերը դիտելու և վերլուծելու կարողություն, խոր ու վարակիչ նվիրվածություն դեպի Դաշնակցությունն ու նրա գաղափարաբանությունը:

Ուրիշները, ընդհակառակն, նրան գտնում էին վանդական, ծայրահեղ, նաև միակողմանի իր դատումների մեջ, անհանդարտ՝ անկարգապահ լինելու աստիճան, ոչ պայծառ իր հայեցակետերով ինքն իրեն պարտադրող:

Դրական, թե բացասական՝ այսուհանդերձ Հ. Ասատրյանի մասին արդեն իսկ խոսում էին ընկերները իր Բուդարիա գալուց քիչ հետո, բոլոր վայրերում, ուր կազմեր ունեինք:

Հ. Ասատրյանը եղած էր ամեն տեղ ու գրեթե ամեն տեղ ստեղծել էր «իր» շրջանակը: Հարկ է ասել, թե այդ «շրջանակները» լոկ իր անձի հանդեպ որոշ համակրանքի արդյունք չէին, այլ իր ցանկությամբ, թե իր կամքից անկախ, «իր հետ քայլել» նախընտրողներ էին, ինչը, որ ինքը ոչ միայն չէր անտեսում, այլ, ընդհակառակն, իր

---

<sup>47</sup> Հատված «Հայկ Ասատրյան - Տարոնականության Ռահվիրան» գրքից:



խառնվածքի ու այդ խառնվածքից բխող գործունեության համար անհրաժեշտ էր նկատում, կարծեք: Թերևս ճիշտ պիտի չլիներ ասել, թե նպատակավոր էր այդ: Բայց ճիշտ պիտի չլիներ նաև չասել, թե Հայկը չէր կարողանա առանց դրա լինել:

Մեր համեմատաբար փոքր շրջանի մեջ չէինք կարողանա անտեսել իրար՝ հակառակ այն իրողության, որ նա Սոֆիայում էր, ես Ֆիլիպե էի բնակվում, և անձնապես դեռ անձանոթ էինք մնում իրար: Սակայն հեռվից հետևելով նրան՝ ես ունեցել էի այն տպավորությունը, թե Ասատրյանը լճի վրա սահող կարապի նման միշտ «վետվետումներ» էր պտտեցնում իր հետ...

Իր անցյալից ոչինչ չգիտեի, երբ մի կիրակի առավոտ, Ֆիլիպեի /Պետո Սերեմձյան/ ընթերցարանի մեջ ես հետևեցի իր հրապարակային դասախոսությանը: Գրեթե կիսամութ բեմի առջև, գանգի վրա սև ու խիտ մազերը թողած անկարգ, թխադեմ, կազմով առույգ՝ բիրտ ասվելու աստիճան, գրեթե անշարժ, բայց բազուկի հատու շարժումներով և դեմքը տևապես պրկված՝ երկու ժամ լարված պահեց սրահը՝ խոսելով մեր բնաշխարհի ու մեր ժողովուրդի էությունների գուզընթաց գծերի մասին:

Իր մի շարք տեսակետների հիմքը և միանգամայն իր մի քանի բնորոշումները, որոնք անճիշտ նկատել էի, առիթ ստեղծեցին, որ դասախոսության վերջում մի երկար գրույց ունենայինք երկուսս:

Երկար դրանից հետո նա և ես իրար մերձեցման եզրեր չունեցանք՝ ո՛չ իբրև երիտասարդ մտավորականներ և ո՛չ էլ իբրև կուսակցական ընկերներ:

Հ. Ասատրյանը անցավ կուսակցական պատասխանատու դիրքի, լայնացրեց «իր» շրջանակները և մնաց

միշտ նույն «կարապը»՝ հետզհետե ավելի թևատարած...

Ու հետզհետե իր մեջ շեշտվեց այն համոզումը, թե իր մասին իրավացի էին թե նրանք, որոնք խանդավառ էին իրենով, և թե՛ նրանք, որոնք առնվազն վերապահ էին նրա նկատմամբ:

Բացարձակապես անփույթ իր անձի հանդեպ, կենցաղային նախասիրություններից զերծ՝ անպատասխանատու լինելու աստիճան, երբեմն անհոգ դեպի իր ստանձնած գործը, անհաշտ՝ հաճախ նույնիսկ ինքն իր հետ, նա տարօրինակ մի փութկոտություն ուներ, սակայն, ազգային ու կուսակցական ընդհանուր հարցերի նկատմամբ ու շեշտված նախասիրություն իր անձնական տեսակետների մասին:

Նախասիրություն ասացի, որովհետև ճիշտ պիտի չլիներ այնտեղ նկատել հավակնություն: Այստեղից էր բխում, ապահովաբար, տարակարծությունը, որ հաճախ ունենում էր ուրիշների հետ և որ կարող էր հանգել անհասկացողության:

Ընդոծի՞ն<sup>48</sup> էր իր այդ գիծը, թե բխում էր նաև մտավոր այն պաշարից, որ ուներ իրապես, և այն անժխտելի գաղափարական նվիրվածությունից, որ մոռացնել ու անտեսել էր տալիս իրեն ոչ միայն իր շրջապատին, այլև իր անձը:

Ավելի ուշ, ավելի մոտից ճանաչելով նրան՝ ես եկա այն համոզման, թե ինձ նման սխալված էին բոլոր նրանք, որոնք Հայկ Ասատրյանին նկատած էին՝ անձ-

---

<sup>48</sup> Բնածին

նակենտրոն մեկի: Իր իրապես անհանդարտ, միշտ խռովյալ, կարծեք ներքին թաքուն ու անբացատրելի մի դառնությունից ծնող իր անհաշտ ու անհաշտելի խառնվածքը թերևս արդյունք էր նաև այն հեղակարծ դեպքերի, որոնց մեջ գլորված ու հասակավորված, տառապած ու պայքարած, զրկված ու միանգամայն ուսանած էր նա:

Ծնվել էր Ալաշկերտում բնիկ Տարոնցի ծնողներից: Հորձանքից քշված՝ ինքը ևս, դեռ պատանի, խուճապի ու մահվան հետ քայլել էր մինչև Երևան: Իր տարիքի ու անփորձության անհամապատասխան աշխատանքների էր լծվել հանդգնությամբ ու վճռականությամբ և տևապես եղել էր թոհուրոհի մեջ, իբրև Ալաշկերտական Միության վարիչ: Իր այդ վաղաժամ դերի մեջ յուրացրել էր հրահանգներ ու վճիռներ արձակելու սովորությունը:

Ու այդ հանգամանքի բերումով, դեռ այդ տարիքում իսկ համոզված ու նվիրված Դաշնակցականի հրայրքից մղված՝ տևապես շփման մեջ էր եղել դաշնակցական դեկավար անձերի հետ: Խորապես հայրենասեր, համայնավարության հանդեպ անհաշտ ու աններող հակամարտությամբ լցված՝ Հ. Ասատրյանը չպայթած ռումբի տպավորություն էր թողել իմ վրա: Ու ես խորհում էի, թե նա ավելի լավ, քան ուրիշները, ինքնիրեն էր բնորոշել, երբ Սոֆիայի մեջ հրատարակած իր պարբերականը կոչել էր՝ «Խոռվք»:

**Անվիճելիորեն մի խռովք էր նա՝ ինքն իր մեջ ու իրենից դուրս:** Բացասական գծեր կային, անշուշտ, իր մեջ: Կային նաև իր անհանդարտությունից բխող անգործնական տեսակետներ: Անջատ իր շեշտված անհանդուրժողությունից դեպի այս կամ այն անձը և իրենից բխող վանողականությունից, որ իր նկատմամբ ևս անհանդուր-

ժողովություն էր ստեղծում այս կամ այն անձի մեջ՝ իր ոգին նվիրում էր, օրինակելի և վարակիչ: Նա հավասարապես և՛ սիրված էր, և՛ չսիրված: Եվ հավասար կերպով և՛ առինքնող էր, և՛ հեռացնող: Մա արդյունք էր, ապահովաբար, իր ուժեղ նկարագրին: Ուժեղ՝ իր բոլոր գծերով, դրական, թե բացասական:

Շեղումը, որ ունեցավ նա՝ իր հետ առնելով ուրիշներին, հետևանք է ավելի իր խառնվածքի, քան իր մտածողության: Շեղումներ նա ունեցել էր նաև իր անձնական կյանքի մեջ:

Եվ, ինչպես խոստովանում էր մի օր ինձ, իր սերերի մեջ իսկ եղել էին պահեր, «երբ հանկարծ խորտակվել էր ամեն ինչ»...

Հակառակ իր այս պոթոկումներին՝ հեզ էր Հայկը, չափազանց ընկերական, գոհաբերող: Նյութը գոյություն չունեք նրա համար. զգվանք էր զգում դեպի դրամը: Չունեք նաև կենցաղային նախասիրություններ: Մի տեսակ «դերվիշ» էր, որ աշխարհին ու պայմանները համառում էր չտեսնել, ու ապրում էր կյանքից վեր:

Պրահայի ու Գերմանիայի մեջ Հայկ Ասատրյանը հետևած էր փիլիսոփայության: Եվ, հաջողապես ավարտելուց հետո համալսարանը, ստացել էր փիլիսոփայության դոկտոր տիտղոսը: «Փիլիսոփա» էր նա այս բառի ռամկական իմաստով, որ նաև «վերացականն» է բնորոշում: Մտածող էր՝ այս բառի բովանդակ իմաստով: Տրամաբանում էր, և իր մտածումները ունեին կշիռ ու խորք: Ընդունակ էր ոչ միայն համոզելու, այլև կախարդելու: Նախընտրում էր վարել, քան վիճել: Բայց, օժտված լինելով վիճելու ընդունակությամբ, հրապարակային կամ լրագրական վեճի մեջ գիտեր «աստամներով

բռնել» ընդդիմախոսին կամ հակառակորդին ու փաստերի և մտածումների տարափի տակ ճնշել նրան:

Ցեղային ոգին արծարծելու իր տենդը, որ կիրքի էր վերածված իր մեջ, իրեն մղեց «Տարոնականության» տեսության՝ մասը ամբողջից գերադասելու գնահատումով: Անտարակույս, Տարոնը ծանրության կենտրոնն էր Հայաստանյաց աշխարհի: Բայց Ասատրյանի հայեցողությամբ համահայկական գերագույն արժեք էր այն, համակենտրոն գանձը, ուժը, ոգին, շքեղանքն ու ներշնչարանը մեր երկրի ու մեր ժողովուրդի:

Իր այդ գնահատումը, սակայն, իրեն չէր մղել նաև իր սերը կենտրոնացնելու միայն այնտեղ: **Նա սիրում էր Հայրենիքը, նրա ամեն մի մթին, թե լուսավոր անկյունները, անցյալն ու ներկան: Տառապանքներն ու փառքերը: Ու սիրում էր պաշտամունքի հասնող ուժգնությամբ:**

Իր այդ հայրենասիրությունը լոկ զգացողական չէր: Հայկ Ասատրյանը ճանաչում էր մեր Հայրենիքը: Ու ճանաչում էր անսխալ:

Մղված իր սիրուց, ինչպես և նպաստավորված իր արտակարգ հիշողությունից՝ նա ուսումնասիրել էր Հայաստանի աշխարհագրությունը մանրամասնորեն: Հայերեն, թե օտար լեզուներով գրված բոլոր գործերը, որոնք խոսում են մեր երկրի մասին, ծանոթ էին նրան: **Նաև մեր մատենագրության մեջ չկար մի տող, որի վրա նա տքնած չլիներ:** Նարեկացիից երկար հատվածներ էր արտասանում զոց: Իսկ առհասարակ հայերեն լեզուն նա իր համար վերածել էր մի տեսակ մասնագիտության: Տեսալես «խուզարկում էր» բառերը, բաղդատում էր օտար բառերի հետ ու չէր հանդարտվում, մինչև որ չլուծեր նրանց ծագման կամ արմատի հանգույցը:

Մեղմ իր մտածումների մեջ և դրանով մի քիչ «թանձր» արտահայտվելու իր ձևով՝ Հ. Ասատրյանը հարկադրված էր լինում, թե նախասիրում էր նոր բառեր կերտել: Իր փոքրաթիվ գրքերի և բազմաթիվ հոդովածների մեջ ունի մեծ թվով բառեր, որոնք «իրենն» են, և որոնք արժեն «լույսին բերել»՝ տրված լինելով, որ նրանցից շատերը արտահայտիչ են, հեշտալուր և մեր լեզվի օրենքներին համապատասխան: Որովհետև այս «դերվիշը» ոչ միայն հասկացողություն և հմտություն, այլև ճաշակ ունի: Ճաշակ՝ ամեն բանի մեջ ու գեղեցկագիտական ըմբռնումով: Իրենից իսկ լքված՝ մի բանաստեղծ կար իր մեջ: Ուներ նաև աչք: Իրեն ծանոթ կամ մոտիկ անձերի ամենից աննշան շարժումները կամ գծերը, ինչպես նաև նկարագրի հատկանիշերը չէին խուսափում իր տեսողությունից: Որևէ առիթով կամ որևէ պահի գիտեր չորս նախադասությունով բնորոշել որևէ անձ՝ կենդանի ու հարազատ՝ ենթակայի ներքինն ու արտաքինը գուգորդելով ու յուրահատուկ սրամտությունը կցելով:

Հետո Սոֆիայի մեջ խմբագրեց «Ռազմիկ»-ը: Լրագրող չէր, անշուշտ: Չէր էլ կարող լինել՝ այնքան հեռու էր առօրյայից ոչ միայն մտքով ու հոգով, այլև՝ ապրելակերպով, որովհետև կյանքի լուսանցքի վրա էր միշտ: Իր հոդվածները, ուր մտածումները իրար էին հրմշտկում տեղ գտնելու համար տողերի մեջ, իր վերլուծումները և մի քիչ տարածվող, բայց թափանցող հայացքները իր մտքի՝ ոչ միայն իրենց տարողությամբ, այլև՝ իրենց խտացյալ ու նաև մթին լեզվով մատչելի չեղան ընթերցող լայն հասարակությանը. մատչելի եղան միայն մտավորական դասին, որ չէր կիսում, ապահովաբար, իր մի շարք տեսակետները:

Հ. Ասատրյանի անժխտելի առավելություններից մեկն էր նաև այն, որ նա ոչ միայն մեծ գնահատում ուներ մեր ժողովրդի արժեքների մասին, այլև՝ մեծ հավատք դեպի այն: Անխախտելի, նույնիսկ կրոնական մոլեռանդության հասնող մի հավատք՝ դեպի նրա ապագան:

Հ. Ասատրյանը օժտված չէր հրապարակախոսական տաղանդով: Ճիզն ու ցանկությունն էլ պակասում էին իր մոտ «բեմի մարդ» լինելու համար: Ավելի շատ «հանում էին» նրան, քան թե ինքն էր ելնում: Առհասարակ չէր սիրում դեմ հանդիման գալ բազմությունների հետ, նախընտրում էր «անկյունները», թեև ներքին հզոր մղում ուներ՝ վարելու զանգվածը:

Հ. Ասատրյանը օժտված էր պատմելու արտակարգ շնորհով, որին գիտեր կցել երգիծանքը: Պատահարների, դեպքերի և անձերի պատկերավոր նկարագրումով նա թե՛ համեստ մարդուն, և թե՛ մտավորականին ունկնդիր էր դարձնում իրեն:

Բուլղարիայի համայնավար հեղաշրջումից հետո ձերբակալվեց նաև նա: Նախ՝ Հունգարիա էր տարված ուրիշ ձերբակալյալների հետ: Հարցաքննությունը կատարված էր այնտեղ: Հետո ուղարկվել էր Ուրալի շրջանը:

Տեղյակ էի, թե 1952-ին բերվել էր ճամբար, որ քսան կիլոմետր հեռու էր այն ճամբարից, ուր ես էի գտնվում: Տեղեկություն ուներ նաև նա իմ մասին:

Եվ մի օր, 1955-ի ամռանը, ինձ հետ գտնվող ու իրեն ծանոթ մի բախտակից ինձ լուր տվեց թե՛ «Հայկը եկել է»: Գնացի, գտա իրեն: Կանգնած էր ճամբարի առողջապահական բաժնի դռան առջև՝ գրեթե կքած, մազերը բոլորովին սպիտակացած, երեսը խորշումած: Կարծեք՝ ավիի մեջ ուժգին սեղմել էին իր դեմքը ու թողել: Հազիվ

կարողացավ զսպել իր փղձկումը, երբ ջերմորեն փաթաթվեց ինձ և դառը շեշտով ձայնի մեջ ասաց. «Դու էլ ինձ նման այլանդակվել ես»:

Հիվանդ էր. տառապում էր սրտից: Տարիներ շարունակ կատարել էր մինչճամբարյան երկաթուղին մաքրելու աշխատանքը: Մեր ճամբարի մեջ աշխատանքից զերծ պահեցին նրան: Ամբողջ մի տարի եղանք միասին: Ամեն առավոտ անպայման ճամբարի դեռ փակ դռան ետևն էր Հայկը, սպասում էր ինձ: Այնտեղ հավաքվում էին բոլոր նրանք, որոնք, զինվորական խիստ հսկողության ներքո, աշխատանքի էին տարվում: Մինչև մեր էլքը, Հայկը ինձ ասելիքներ ուներ՝ մեր անցյալից ու ներկայից, երկրից ու դեպքերից, ինչպես և «շնջվող լուրերից»: Ու ամեն երեկո՝ մինչև նինջի զանգը, մեր զրույցը շարունակվում էր:

Մարմնական տկարությունը ոչինչ էր փոխել իր մեջ ու ոչինչ պակասեցրել իր հիշողությունից, իր սիրուց ու համառ հետաքրքրությունից դեպի Հայրենիքը: Գրեթե ամեն օր՝ ցերեկվա առանձնության պահերին, բառ էր վերլուծում կամ բառ էր «շինում»: Եվ վիճում էինք հաճախ: Իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր Հայաստանի վրա: Խանդավառվում էր նրա ամեն մի հաջողությունով ու զանգատվում էր նրա ամեն մի ցավով:

Խորհրդային մամուլի մեջ Հայաստանի կամ հայի մասին ամենափոքրիկ լուրն իսկ չէր վրիպել իր ուշադրությունից:

Աքսորի կյանքի վերջին երկու տարիներին սկսել էր գրականությամբ զբաղվել՝ միշտ մի անկյուն գտնելով «մրոտելու» համար: Ու մենք առիթներ էինք գտնում մեր



ձեռագրերը կարդալու իրար: Ինձ կարդաց իր հանգավոր մի վեպը՝ դեռ անավարտ:

Ես դեռ կանխավ ունեցել էի այն տպավորությունը, թե Հայկի մեջ գուցե իրենից իսկ անծանոթ կամ իրենից տևապես անտեսված մի գրագետ է ապրում: Բայց իր վեպը ակնկալածիցս ավելին էր: Ինքնեկ, կենդանի, բարախուն, գունավոր ու պատկերավոր: Տիպարների բացարձակ հարազատությամբ: Մուշից Երևան իր հերոսի հետ քայլելուց նաև ինձ՝ խուճապի, կովի, սովի ու արյան ճանապարհի վրա արցունքն ու ժպիտը զուգորդած իրար, ցուցադրելով նաև մեր բնաշխարհի գեղեցկությունները իր գույներով ու երանգներով:

Թելադրեցի, որ շարունակի: «հազիվ թե հաջողեմ»:- Ասաց՝ սիրտը ցույց տալով: տագնապում էր արագ շարժումներից իսկ:

Օտարահպատակ բանտարկյալները հետզհետե վերադարձվում էին: Բուլղարիա վերադարձել էին մի քանիսը:

Մի առավոտ Հայկը եկավ ինձ մոտ՝ հայտնելու, թե իրեն եղած հարցման համաձայն, պետք է ճշտի վայրը, ուր կուզի մեկնել: Նախընտրել էր անցնել Պարսկաստան՝ իբրև պարսկահպատակ, բայց մերժվել էր: Առաջարկվել էր իրեն ուղարկել Հայաստան, ուր մայր ու քույր ունեք: Հավանություն չէր ստացել: Մի քանի օր անց ասել էին իրեն, թե՝ «շուտով պետք է վերադառնա Բուլղարիա»:

Դժգոհ էր, հակառակ նրա, որ երկու աղջիկներ ուներ այնտեղ: Իր գորավոր բնագոն էր թերևս, որ վարանեցնում էր իրեն: Եվ նույն գորավոր բնագոյի արդյունքն էր, ապահովաբար, որ մի գիշեր «գեշ երագ էր տեսել»: Հե-

տաքրքրվեցի, թեև զարմացա՝ իր հզոր իմացականության հետ անհաշտ գտնելով երազի մասին իր նախապաշարումը: Այսուհանդերձ, գիտեի, թե «մարդկային էակի համար անիմանալի խորհուրդներ կան նաև հենց մարդկային էակի մեջ», ինչպես խորհում էր նա:

- Երագումս,- ասաց,- ազատվել էի: Բայց հազիվ ոտք էի դրել ազատ հողի վրա, հանկարծ մահացա...

Նկատեցի, որ խորապես ազդված էր: Կատակեցի: Ջանացի փոխել տրամադրությունը: Մի քանի օր հետո՝ երեկոյան՝ աշխատանքից վերադարձիս, մուտքի դռան ետևն էր կրկին: Մոտեցավ ինձ ու ասաց.

- Ինձ հաղորդեցին, թե երկու օրից մեկնելու եմ:

Ուրախացա: Շնորհավորեցի: Դառնացած էր:

- Ես պետք է ամենահետին մարդը լինեմ, որ թողնեմ քեզ,- ասաց,- ամենքը վերադարձան: Մնացինք դու և ես: Մի թե ինձ ներելի կլինի քեզ թողնել այստեղ մենակ ու վերադառնալ...

Հայտնեցի, թե մեր կամքից անկախ է այդ: Եվ թե ինքը կարոտ է հանգստի: Անկարող եղա հանդարտեցնել նրան:

- Պիտի մերժեմ,- կրկնում էր,- թո՛ղ տանեն սվինի տակ...

Երկու օր տևեց մեր այս տարակարծությունը: Ի վերջո տեղի տվեց: Ուրիշ կերպ էլ կարելի չէր: Ու վերադարձավ՝ «ոգին թողած ինձ մոտ», որովհետև «սիրտս հազիվ թե կարենա ինձ տանել մինչև տուն», - ավելացրեց:

Մեկնումի օրը համբուրվեցինք՝ առանց ունենալու վերստին իրար տեսնելու հույսը: Եվ արցունքի երկու կաթիլներ գլորվեցին այտերն ի վար...

Այս աննկուն, անզիջող, համառ ու կորովի տղային առաջին անգամ էի տեսնում պարտված: Պարտված՝ ոչ թե տարիների ծանրությունից, հազիվ հիսունհինգ էր իր տարիքը, այլ՝ ինքն իրենից, իր ընկերական բոլորանվեր ու պատրաստակամ ոգուց:

Ու ես, մնալով այլևս բոլորովին մենակ, թեն խորապես ուրախ էի, որ նաև Հայկն է վերադառնում, բայց նույնքան ցավեցի՝ իր արցունքի կաթիլների մեջ տեսնելով «ընկերոջը տառապանքի մեջ առանձին թողնելու» համար զգացած և զգեսնելու չափ խոր ամոթը՝ ինքն իր առջև...

Այսպես էր Հայկը՝ խորքով: Այսպես էր, սակայն, հակադիր երևույթի ներքո: Եվ այդ էր պատճառը, որ շատերը, որոնց կարգին նաև ես, սխալ ճանաչեցինք նրան, կամ սխալ ճանաչեցրեց նա ինքը իրեն: Անցյալի մեջ նաև ես հաճախ մեղադրել էի նրան: Ու չծածկեցի իրեն այդ, երբ վերջին տարում, երկուսս էլ կյանքին վերադառնալու հույսից զրեթե զուրկ, սրտաբաց կերպով խոսում էինք իրար հետ:

Իր մեկնելուց հետո միայն անդրադարձա, թե իբրև կուսակցական ընկեր իրենից ունեցած դժգոհանքներս ոչ միայն նա հաջողել էր ջնջել մեջս՝ պարզելով մի շարք թյուրիմացություններ, այլև՝ ստեղծել էր մեջս սեր հայրենապաշտ մտավորականի և լավ ընկերոջ հանդեպ:

Մեկուկես տարի հետո՝ Գերմանիա վերադարձիս, պատահաբար տեղեկացա, թե իրականացել էր իր կյանքի ամենից անողոք երազը. Հայկը, հազիվ ոտք կոխած Սոֆիա, հանկարծամահ էր եղել...

Մխիթարությունը չունեցա գոնե մի ասի հող դնելու նաև իր գերեզմանի վրա: Բայց իր վաղաժամ մահից հե-

տո, մխիթարանքս մնաց այն խոր համոզումը, թե Հայկ Ասատրյանը մինչև իր վերջին րոպեն եղավ ու մնաց գերազանցորեն հայրենասեր հայ և հավատավոր Դաշնակցական:

«Հայրենիք», 1958, թ. 5, էջ 79-84

ՄԱՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ -  
Դոկտ. ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ<sup>49</sup>

Տասը տարի Խ. Միության մեջ արտրված մնալուց հետո՝ 1955-ին, վերադարձել էր Բուլղարիա: Հանկարծամահ է եղել Սոֆիայի մեջ Հունվար 13-ին: Ավարտել էր Պրահայի համալսարանի փիլիսոփայության ճյուղը Դոկտորի տիտղոսով: Ապրում էր Սոֆիայում նախքան արտրվելը: Նախկին դաշնակցական:

Կարո Գևորգյան  
«Ամենուն Տարեգիրքը», Բեյրութ, 1957, էջ 642

---

<sup>49</sup>Մահագրությունը վերցված է «Հայկ Ասատրյան Տարոնականության Ռահվիրան» գրքից:

## Բովանդակություն

Հայկ Ասատրյանի նամակն ուղղված իր մորը .....	4
Հուշեր Հայկ Ասատրյանի մասին .....	8
Գ. Նժդեհի «Ցեղը եվ իր տականքը» (խորհրդածություններ) .....	18
Հայերը եւ իրենց բարձրավանդակը .....	29
Հայկական բարձրավանդակի պայքարը .....	35
Վտանգի գիծը .....	40
Մեր օրերի տազնապի պատճառները .....	42
Վերանորոգչական խորհրդածություններ .....	48
Ներքին պատճառականություն .....	52
Վերանորոգչական շարժման սկիզբը .....	79
Տարոնական աշխարհայեցողություն .....	89
Տարոնականություն, Դաշնակցականություն, Ցեղակրոնություն .....	99
Ուժական ճշմարտություն .....	111
Հայկական ոգու ուժականությունը .....	119
Ցեղը եւ Հայրենիքը՝ իբրեւ անբանական ուժեր .....	124
Վտանգ եվ ինքնապաշտպանություն .....	130
Ցեղը միայն կարող է փոխել պատմության ընթացքը .....	132
Առաջնորդող ճշմարտություն .....	135
Ելքի կամք .....	139
Իրիցուկ մեռելները վկա .....	146
Դարձ դեպի ոգին .....	152
Պատմում է Հայկ Ասատրյանի բանտակից ընկերը՝ Կարո Մեհյանը (Սոսյաց տղան) .....	163
Մահագրություն - Դոկտ. Հայկ Ասատրյան .....	176

Դոկտոր ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

**ԽՌՈՎՔ**

Հետադարձ կապ՝ 093 569180, 041 005003  
azgayinatyan@gmail.com

<https://www.facebook.com/Azgayinatyan>

Ֆեյսբուքյան էջեր՝

Հայկ Ասատրյան՝

<https://www.facebook.com/HaykAsatryanTaronakanutyun>

Նժդեհ Ռահվիրա՝

<https://www.facebook.com/gareinnjdehrahvira>

*բնակարան 5-19/15-ինձո կայծ*

Ստորագրված է տպագրության 22.01. 2019:

Տպագրությունը՝ օֆսեթ: 6,25 տպ. մամուլ:

Տպարանակը՝ 500 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅԻՐ» ՍՊԸ



Հրատարակչություն

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ (011) - 52.79.74

Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)